

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵՂՐՅԱՆ ԶԻՆԱՎՈՐ ՇԱՀԵՆԻ

ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Մասնագիտություն ԺԲ.00.06 – Միջազգային իրավունք

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման

Գիտական ղեկավար՝ ի.գ.թ., դոցենտ
Վ.Վ. Քոչարյան

Երևան 2011 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ. ՔԱՂԱՔԱԿԱՆ	
ՄԿԶԲՈՒՆՔԻՑ ՄԻՆՉԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԿԶԲՈՒՆՔ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆ.....	13
§1. Ինքնորոշումը նախքան Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումը	13
§2. Ինքնորոշման իրավունքը Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումից հետո և դրա բովանդակությունը՝ համաձայն միջազգային պայմանագրերի, ՄԱԿ-ի հռչակագրերի, Միջազգային դատարանի վճիռների	24
ԳԼՈՒԽ 2. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ	
ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	46
§1. Միջազգային իրավունքի սկզբունքների հասկացությունն ու դրանց համակարգային	46
փոխկապվածությունը.....	46
§2. Ժողովուրդների ինքնորոշման և միջազգային հարաբերություններում ուժ	58
չգործադրելու սկզբունքների հարաբերակցությունը	58
§3. Ժողովուրդների ինքնորոշման և մարդու իրավունքների համընդհանուր հարգման	75
սկզբունքների հարաբերակցությունը	75
ԳԼՈՒԽ 3. ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ	
ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ.....	80
§1. Ինքնորոշման իրավունքի դատական պաշտպանությունը ՄԱԿ-ի միջազգային.....	80
դատարանում և Միջազգային այլ դատական ատյաններում	80
§2. Ինքնորոշման իրավունքի արտադատական պաշտպանությունը. նյութական և.....	93
ռազմական օժանդակություն, ճանաչում	93
§3. Եզրակացություններ երրորդ գլխի վերաբերյալ.....	104
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	106
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	111

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը և դրա հետ կապված հարցերը ժամանակակից միջազգային իրավունքի առավել վիճահարույց հիմնախնդիրներից են: Ինքնորոշման սկզբունքի բովանդակության, ծավալի, իրացման ձևերի և միջոցների վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ տարակարծություններ, որոնք առկա են ոչ միայն իրավունքի տեսաբանների, այլ նաև միջազգային հանրության առանձին անդամների դիրքորոշումներում: Անգամ ինքնորոշման իրավունքի վերաբերյալ դրույթներ պարունակող ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի և Անվտանգության խորհրդի բանաձևերը ոչ միայն միասնական սահմանում չեն բովանդակում, այլև տեղ են տալիս տարբեր մեկնաբանությունների՝ պայմանավորված դրանց ընդունման ժամանակահատվածով կամ պատմական այն իրադարձություններով, որոնց կարգավորմանը դրանք միտված են եղել:

Դեռևս չլուծված իրավական վեճերի առիթ է տալիս ժողովուրդների ինքնորոշման և պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքների հարաբերակցության հարցը: Մեկնաբանման կարիք ունի նաև միջազգային իրավական այլ սկզբունքները՝ մարդու համընդհանուր իրավունքների հարգում, միջազգային հարաբերություններում ուժի գործադրման արգելում և այլն : Վիճահարույց է շարունակում մնալ ինքնորոշման իրավունքի իրացման ընթացքում ուժի գործադրման թույլատրելիության հիմնահարցը:

Ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը բազմիցս միջազգային և տարածաշրջանային անվտանգության ու խաղաղության ոտնահարման առիթ է հանդիսացել: Դրա բովանդակության տարաբնույթ մեկնաբանությունների հիման վրա ծավալվել են բազմաթիվ պատերազմներ, իրականացվել են նաև ահաբեկչական գործողություններ՝ դառնալով հարյուրավոր, իսկ երբեմն նաև հազարավոր մարդկային զոհերի պատճառ:

Էական հիմնախնդիրներից մեկը, որի շուրջ մինչ օրս շարունակվում են տարակարծությունները իրավաբանական գրականությունում, ինքնորոշման իրավունքի իրացման ձևերն են ժամանակակից միջազգային հարաբերությունների պայմաններում: Ինքնորոշման սկզբունքը իր հասցեատիրոջը՝ ժողովրդին, տալի՞ս է արդյոք անկախ

պետականություն ստեղծելու հնարավորություն, թե՛ այն պետք է իրացվի միայն ներքին ինքնավարության ստեղծման ճանապարհով:

Իրավաբանական գրականությունում այդ հարցի վերաբերյալ մոտեցումները միանշանակ չեն. արևմտյան հեղինակների մի խումբ գտնում է, որ ինքնորոշման իրավունքը ստեղծվել է միայն կախյալ ժողովուրդների ապագադուրացման և այդ միջոցով միջազգային խաղաղության ու անվտանգության ապահովման նպատակով: Այս հեղինակների կարծիքով, ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը ապագադուրացման գործընթացի ավարտից հետո կորցրել է իր հիմնական առաքելությունը՝ արտաքին ինքնորոշման ձևը, և այսուհետև պետք է իրացվի միայն մայր պետության տարածքային ամբողջականության պահպանման շրջանակներում՝ պետական կառավարմանը ժողովրդի մասնակցության և ներքին ինքնավարություն ստեղծելու միջոցով:

Վերջին տասնամյակներում տեղի ունեցած իրադարձությունները, սակայն, նոր մարտահրավերներ են նետում: Կոսովոյի պետականության ստեղծումը, իսկ այնուհետև նաև Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախության հռչակագրերը, ինչպես նաև դրանց ճանաչումը մի շարք պետությունների կողմից նոր հարթության վրա են դնում արտաքին ինքնորոշման իրավունքի վերաբերյալ բանավեճերը:

Ի՞նչ հիմքով է միջազգային հանրությունը ճանաչում պարզևում մի նորանկախ սուբյեկտի, որը ստեղծվում է ի վնաս մայր պետության տարածքային ամբողջականության, սակայն մերժում նման ճանաչումը մեկ այլ սուբյեկտի պարագայում: Ի՞նչ հիմքով է ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը անօրինական ճանաչում անկախության այս կամ այն հռչակագիրը և կոչ անում միջազգային հանրությանը չհամագործակցել նորաստեղծ սուբյեկտի հետ, սակայն լռում և զերծ մնում որակումներից մյուս նորանկախ սուբյեկտների պարագայում: Առաջնորդվո՞ւմ են արդյոք պետությունները և միջազգային կազմակերպությունները միայն քաղաքական նկատառումներով, թե՛ վերջիններիս գործողություններում հնարավոր է նաև գտնել միատեսակ իրավական վարքագծի կանոններ:

Վիճահարույց իրավական հիմնախնդիրներից է նաև ժողովուրդների՝ որպես ինքնորոշման իրավունքի կրողների իրավասուբյեկտության հիմնահարցը: Արևմտյան գրականությունը զարգացել է ժողովուրդների իրավասուբյեկտության մերժման ճանապարհով, մինչդեռ խորհրդային գրականությունը, թեև ընդունելով ժողովուրդների իրա-

վասուբյեկտությունը, քննարկել է այն միայն միջազգային կազմակերպություններում ներկայացված լինելու և ազգային-ազատագրական պայքար մղելու համատեքստում՝ բաց թողնելով մեկ կարևորագույն հիմնահարց՝ ինքնորոշման իրավունքի հնարավոր դատական պաշտպանության հիմնախնդիրը:

Ինքնորոշման սուբյեկտի՝ ժողովրդի դատական աստաններում հանդես գալու հնարավորությունից զրկված լինելու պատճառով, ինքնորոշման իրավունքը դեռևս երբեք չի դարձել ՄԱԿ-ի Միջազգային դատարանի՝ պարտադիր իրավաբանական ուժ ունեցող վճռի քննարկման առարկա (այն քննարկվել է միայն խորհրդատվական եզրակացությունների մակարդակում): Ուստի վիճահարույց է նաև ինքնորոշման իրավունքի դատական պաշտպանության ենթակա լինելու հիմնահարցը:

Ժողովուրդների համապատասխան իրավասությունից զրկված լինելու պայմաններում առկա՞ է արդյոք այլ պետություններում ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ոտնահարման հարցերը սեփական նախաձեռնությամբ Միջազգային դատարանում բարձրացնելու հնարավորություն՝ հաշվի առնելով ինքնորոշման իրավունքի ելակետային տեղն ու դերը միջազգային իրավունքի համակարգում:

Այս բոլոր հիմնահարցերը առավել կարևորվում են Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության համատեքստում: Միջազգային հանրության կողմից դեռևս չճանաչված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային իրավասուբյեկտությանը վերաբերող հիմնահարցերը միջազգային ամբիոններում մնում են չլուծված, ինչն ավելի է մեծացնում հայրենական գիտությունում տվյալ ոլորտի բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հասկանալի է դառնում, որ քննարկվող սկզբունքը համակողմանի վերլուծության և վերագնահատման կարիք ունի, վերլուծություն, որը կաշկանդված չի լինի քաղաքական նկատառումներով և հիմնված կլինի միջազգային պայմանագրերի, միջազգային-իրավական փաստաթղթերի (միջազգային կազմակերպությունների բանաձևեր, միջազգային դատական աստանների որոշումներ և այլ), պետությունների և միջազգային կազմակերպությունների պրակտիկայի համալիր ուսումնասիրության վրա:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Սույն ատենախոսական հետազո-

տության նպատակն է ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի տարբեր դրսևորումների բովանդակության բացահայտումը, դրանց իրացման միջազգային-իրավական մեխանիզմների պարզաբանումը: Աշխատանքի նպատակն է նաև պարզաբանել ինքնորոշման սկզբունքի տեղն ու դերը ժամանակակից միջազգային իրավունքի համակարգում և այլ սկզբունքների հետ համագործակցության ու փոխներգործության եզրերի հետազոտումը: Ատենախոսության մեջ հատուկ տեղ է հատկացվում ինքնորոշման իրավունքի դատական և արտադատական հնարավոր ձևերի պաշտպանությանը:

Վերոնշյալ նպատակներին հնարավոր է հասնել հետևյալ խնդիրների լուծման ճանապարհով՝

- ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի պատմական զարգացման վերլուծություն և այդ սկզբունքի վրա հասարակական հարաբերությունների փոփոխությունների ազդեցության ուսումնասիրություն,
- ժողովուրդների ինքնորոշման իրավունքին անդրադարձող միջազգային պայմանագրերի, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի, Գլխավոր ասամբլեայի հռչակագրերի համակարգային ուսումնասիրություն և մեկնաբանման տարբեր մոտեցումների համադրական քննություն,
- միջազգային իրավունքի սկզբունքի հասկացության պարզաբանում. այդ հասկացությունը տարբեր կերպ մեկնաբանող իրավաբանական գիտության տարբեր դպրոցների տեսակետերի համեմատություն,
- տարբեր սկզբունքների ակսիոլոգիական վերլուծություն, հասարակական հարաբերությունների կարգավորման ոլորտում վերջիններիս դերի, նշանակության և նպատակի պարզաբանում,
- միջազգային իրավունքի տարբեր սկզբունքների փոխներգործության եզրերի հետազոտում (արտաքին ինքնորոշման կախվածությունը մարդու իրավունքների հարգման համընդհանուր սկզբունքի ոտնահարումներից, ինքնորոշման սուբյեկտի տարածքային ամբողջականության հարգումը որպես ինքնորոշման արդյունավետ իրականացման երաշխիք և այլն),
- միջազգային իրավունքի *erga omnes* պարտավորությունների իրավական բովանդակության վերլուծություն. վերջիններիս հիմքով երրորդ կողմերի՝ դատարան

(ՄԱԿ-ի Միջազգային դատարան) դիմելու հնարավորության հիմնավորում,

- *jus cogens* նորմերի և *erga omnes* պարտավորությունների հիմքով միջազգային հանրության մեջ առաջացող կոլեկտիվ և անհատական համապարտադիր վարքագծի կանոնների ուսումնասիրություն ինչպես որոշակի գործողություններից ձեռնպահ մնալու, այնպես էլ որոշակի գործողությունների դիմելու ճանապարհով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՄԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Հետազոտության տեսական հիմք են ծառայել միջազգային իրավունքի հանրահայտ հեղինակների դասական աշխատությունները, մենագրությունները և գիտական հոդվածները՝ նվիրված միջազգային իրավունքի տեսությանը, ինքնորոշման իրավունքի բովանդակությանը, միջազգային իրավունքի համակարգում ունեցած տեղին և դերին, տարածքային ամբողջականության, պետությունների ինքնիշխան հավասարության և այլ սկզբունքներին:

Ատենախոսական աշխատանքը պատրաստելիս հեղինակը հենվել է հանրահայտ միջազգայինագետն իրավաբանների աշխատությունների վրա, որոնց թվում են Յ. Բրաունլին, Ի. Լուկաշուկը, Գ. Տունկինը, Թ. Ֆրենքը, Է. ՄքՎիննին, Ա. Կասսեզեն, Օ. Չիստյակովը, Ա. Թալալանը, Մ. Փոմերանսը, Հ. Հանումը, Բ. Վուկասը, Ս. Ուիթլին, Ջ. Կունցը, Յ. Էվանսը, Մ. Ջաքերը, Հ. Կելսենը, Կ. Դոեհրինգը, Փ. Թորնբերրին, Դ. Շվայգմանը, Փ. Ուիլիամսը, Թ. Գիլը, Պ. Լուկինը, Յ. Սինքլերը, Ք. Թոմուսչատը, Ա. Թանկրեդին, Ջ. Քլաբերսը, Ու. Լինդերֆալթը, Թ. Մուսգրեյվը, Ջ. Կրաուֆորդը, Մ. Շոն, Պ. Մալանշուկը, Հ. Թիրլուեյ, Ռ. Դուորկին, Ջ. Ֆիտցմորիս, Ս. Ուսցը, Ա. Մոխսենը, Մ. Կորովիտցը, Օ. Շաքտերը, Լ. Հաննիկայնեն, Ք. Գրեյը, Շ. Մրֆին, Ս. Դուգարդը, Ք. Ուրայթ, Է. Խիմենես դե Արեչագան, Բ. Բաքստերը, Գ. Աբի-Սաաբը, Վ. Քոչարյանի, Լ. Ալեքսիձեն, Ս. Թումանիձեն և այլք:

Հետազոտման ընթացքում էական դեր են խաղացել նաև Միջազգային արդարադատության մշտական պալատի, ՄԱԿ-ի Միջազգային դատարանի, մարդու իրավունքների պաշտպանության միջազգային դատական ատյանների վճիռները, ինչպես նաև Միջազգային իրավունքի հանձնաժողովի հաշվետվությունները և ամենամյա պարբերականները:

Ատենախոսական աշխատանքի պատրաստման ընթացքում քննության են

ենթարկվել նաև պետությունների պրակտիկայի և միջազգային կազմակերպությունների բանաձևերը և ներքին փաստաթղթերը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Առաջադրված խնդիրների լուծման նպատակով ատենախոսական աշխատանքում օգտագործվել են իրավաբանական գիտության մշակած, ինչպես նաև պրակտիկայում փորձարկված գիտական ճանաչողության հնարքներ և մեթոդներ: Հեղինակը օգտագործել է նաև ընդհանուր գիտական (դիալեկտիկական, համակարգային, դեդուկտիվ, ինդուկտիվ), ինչպես նաև մասնավոր գիտական (պատմաիրավական, տրամաբանաիրավական, համակարգակառուցվածքային, համեմատաիրավական, գործառույթային) ուսումնասիրության մեթոդները:

Լայնորեն կիրառվել է պատմահամեմատական ուսումնասիրության մեթոդից հատկապես առաջին գլխում ժողովուրդների ինքնորոշման աստիճանական զարգացումն ուսումնասիրելիս՝ քաղաքական գաղափարից մինչև իրավական սկզբունք: Համեմատաիրավական սկզբունքի միջոցով, համադրելով տարբեր միջազգային-իրավական ակտեր և մեկնաբանելով դրանք տրամաբանա-իրավական մեկնաբանման տարբեր կանոնների միջոցով, ցույց ենք տվել ինքնորոշման սկզբունքի բազմաթիվ և տարատեսակ դրսևորումները կոնկրետ վարքագծի կանոնների տեսքով:

Համակարգակառուցվածքային սկզբունքի միջոցով երկրորդ գլխում իրականացվում է միջազգային իրավունքի տարբեր սկզբունքների համեմատական վերլուծություն, բացահայտվում են դրանց փոխկապվածությունն ու փոխադարձ ազդեցությունը:

Իրավական վերլուծությունը հնարավոր չէ առանց նորմատիվ-իրավական ակտերի, դրանց դրույթների ուսումնասիրության և մեկնաբանության (մեխանիկական-իրավաբանական վերլուծություն): Հեղինակի կողմից իրավունքը դիտարկվում է իր դինամիկ զարգացման ընթացքում (ինքնորոշման զարգացումը Ազգերի լիգայի համակարգից մինչև Միավորված ազգերի կազմակերպության համակարգ) և այդ իրավունքով կարգավորվող հասարակական հարաբերությունների համատեքստում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսական աշխատանքի գիտական նորարարությունը այն է, որ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ իրականացվել է ինքնորոշման սկզբունքի առանձին դրսևորումների իրացման համալիր վերլուծության փորձ՝ ըստ ինքնորոշման իրավունքին անդրադար-

ձող բոլոր էական միջազգային պայմանագրերի, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի հռչակագրերի, պետությունների և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի պրակտիկայի, ինչպես նաև Միջազգային դատարանի վճիռների և խորհրդատվական եզրակացությունների համակարգային և համեմատական վերլուծության:

Հատուկ ուշադրություն է դարձվում միջազգային իրավունքի այլ սկզբունքների հետ ինքնորոշման փոխկապակցվածությանը, ինչպես նաև այդ իրավունքի դատական պաշտպանելիության հարցերին: Հայաստանի Հանրապետությունում հեղինակն առաջինն է անդրադառնում ինքնորոշման իրավունքի՝ ՄԱԿ-ի Միջազգային դատարանում և արտադատական միջոցներով իրացման հիմնահարցին և այդ իրացմանը նպաստելու հիմնախնդիրներին:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ: Թեմայի ուսումնասիրությունը թույլ է տվել ատենախոսին ձևակերպել իր կողմից պաշտպանության ներկայացվող հետևյալ հիմնական դրույթները և եզրահանգումները.

1. Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի արտաքին կողմը, որը ժողովրդին հնարավորություն է տալիս իրացնել իր իրավունքը անկախ պետականություն ստեղծելու միջոցով, սահմանափակված չէ միայն ապագադրությամբ շրջանակներով և շարունակում է գործնական իրավական նշանակություն ունենալ նաև արդի պայմաններում: Ինքնորոշման իրավունքի այս դրսևորումն ուղղակիորեն կախված է ինքնորոշման իրավունքի ներքին կողմի ոտնահարումներից և վերջինիս արդյունավետության ապահովման երաշխիք է,
2. Միջազգային իրավունքի, մասնավորապես՝ ժողովուրդների ինքնորոշման և պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքների միջև հակասությունների վերաբերյալ տեսակետները զուրկ են իրավաբանական հիմնավորվածությունից. դրանք իրենցից ներկայացնում են մեկ միասնական համակարգ, որի առանձին տարրերը փողկապակցված են և նպաստում են միմյանց արդյունավետ կենսագործմանը,
3. Տարածքային ամբողջականության սկզբունքի պաշպանությունը համապատասխան պայմաններում տարածվում է նաև իրենց ինքնորոշման համար պայքարող ժողովուրդների վրա: Այն ենթադրում է ինքնորոշման

իրավունքը կրող սուբյեկտների պաշտպանությունը նախկին մայր պետության տարածքային հավակնություններից և զինված ուժի միջոցով այդ սուբյեկտների միասնությունը տրոհելու փորձերից,

4. Թեև ժամանակակից միջազգային իրավունքն արգելում է պետությունների անմիջական ռազմական միջամտությունը ինքնորոշման համար պայքարող ժողովուրդների ազատագրական պայքարին (սակայն չի արգելում այլ տեսակի օժանդակություն), այնուամենայնիվ ինքնորոշման համար պայքարող ժողովուրդը կամ ազատագրական շարժումը զինված ուժով ինքնորոշումը կանխելու մայր պետության փորցերի դեպքում կաշկանդված չէ միջազգային հարաբերություններում ուժի գործադրման արգելքով և հետևաբար կարող է դիմել զինված պայքարի իր ինքնորոշման իրավունքի իրագործման նպատակով: Նման պայքարը, իհարկե, կարող է դատապարտվել մայր պետության ներպետական իրավական համակարգի շրջանակներում, սակայն այդ պայքարը հաջողությամբ պսակվելու դեպքում միջազգային իրավունքի տեսանկյունից մնում է իրավաբանորեն չեզոք գործողություն,
5. Ինքնորոշման իրավունքի իմպերատիվ՝ *jus cogens*, բնույթը, ինչպես նաև այդ իրավունքից բխող պարտավորությունների *erga omnes* բնույթը պայմանավորում են ոչ միայն ողջ միջազգային հանրության և նրա առանձին անդամների իրավական շահը՝ պաշտպանելու ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացումը, այլ նաև միջազգային հանրության պարտավորությունը՝ ակտիվ գործողությունների (ինչպես նաև գործողություններից ձեռնպահ մնալու) միջոցով օժանդակելու ինքնորոշման իրավունքի իրացմանը,
6. Թեև ժողովուրդներն օժտված չեն իրենց ինքնորոշման իրավունքի պաշտպանության նպատակով Միջազգային դատարանի առջև հանդես գալու հնարավորությամբ, ինքնորոշման իրավունքի *erga omnes* բնույթն ընձեռում է երրորդ պետություններին Միջազգային դատարանում հայց հարուցելու իրավասություն՝ որպես *actio popularis* (ողջ միջազգային հանրության շահը պաշտպանելուն ուղղված գործողություն),

7. Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում Անվտանգության խորհրդի ընդունած բանաձևերը (հակառակ ադրբեջանական կողմի պնդումների) ուղղված չեն ԼՂՀ անկախ պետականության ստեղծման դատապարտմանը: 822, 853, 874, 884 բանաձևերի համեմատական վերլուծությունը, դրանց նախապատրաստական աշխատանքների և հարակից հանգամանքների ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ Անվտանգության խորհուրդն ըստ էության ճանաչել է ԼՂՀ ինքնուրույն իրավասուբյեկտությունը. ակնհայտ է նաև վերոնշյալ բանաձևերի տարբերությունն այն բանաձևերից, որոնցով Անվտանգության խորհուրդը կոչ է արել միջազգային հանրությանը չճանաչել նորաստեղծ սուբյեկտները (ինչպիսիք են Ռեպուբլիկա Սրապսկան, Հարավային Ռոդեզիան, Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը և այլն):

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսական հետազոտության արդյունքում ձևավորված եզրակացությունները կարելի է օգտագործել գիտական այլ աշխատանքներում, որոնք կվերաբերեն ժողովուրդների ինքնորոշման իրավունքին և միջազգային իրավունքի սկզբունքներին ու համակարգին առհասարակ: Ատենախոսությունում ստեղծված որոշ եզրահանգումներ ու տեսակետներ կարող են տեղ գտնել ինչպես ԵՊՀ, այնպես էլ այլ բուհերի իրավաբանական ֆակուլտետների միջազգային իրավունք առարկայի ուսումնական ծրագրերում:

Ատենախոսության պրակտիկ առաջարկները կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության՝ արտաքին քաղաքականության մշակման և իրականացման, ինչպես նաև միջազգային-իրավական հիմնահարցերի կարգավորմամբ զբաղվող պետական հիմնարկների և գործակալությունների, ինչպես նաև այլ շահագրգիռ կառույցների կողմից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ: Ատենախոսական աշխատանքը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնում, որտեղ ներկայացվել և հաստատվել են ատենախոսությունում առկա հիմնական տեսական վերլուծություններն ու եզրակացությունները: Եզրահանգումներն ու դրույթները քննարկվել և հիմնավորվել են գիտաժողովներում և սեմինարներում ներկայացված զեկուցումներում ու թեզիսներում:

րում: Ատենախոսության հիմնական եզրակացությունները, վերլուծություններն ու դրույթները արտացոլվել են տպագրված գիտական հոդվածներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Ատենախոսությունը կառուցված է ըստ հետազոտության հիմնական նպատակի. ներկայացվել են դրա լուծման համար անհրաժեշտ խնդիրները և հետազոտության առարկան: Աշխատանքը կազմված է ներածությունից, յոթ պարագրաֆ պարունակող երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻՑ ՄԻՆՉԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԿԶԲՈՒՆՔ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆ

§1. Ինքնորոշումը նախքան Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումը

Մինչև 20-րդ դարը ինքնորոշումն նախնառաջ ընկալվում էր որպես քաղաքական հասկացություն: Ծնունդ առնելով 1776 թ. Ամերիկայի անկախության հռչակագրից և 1789 թ. Ֆրանսիական հեղափոխությունից՝ այս հասկացությունը ի սկզբանե ենթադրում էր միապետի պատասխանատվությունը ժողովրդի նկատմամբ և ժողովրդի՝ այս կամ այն միապետի կամ պետության իշխանությանը ենթարկվելու վերաբերյալ իր կամքն արտահայտելու իրավունքը: ԱՄՆ-ի անկախության հռչակագիրն ամրագրեց այն ելակետային դրույթը, որ կառավարությունները ստեղծվում են իրենց քաղաքացիների «անօտարելի իրավունքներն» ապահովելու համար և քաղում են իրենց «լիազորությունները կառավարվողների համաձայնությունից»¹:

Ֆրանսիական հեղափոխությունից անմիջապես հետո այս հասկացությունը սկսեց օգտագործվել՝ որպես զավթողական պատերազմի արդարացում: 18-րդ դարի վերջին Էլզասի, Ավիյոնի, Բելգիայի և Պալատինատի նվաճումը Ֆրանսիայի կողմից հիմնավորվում էր նրանով, որ տեղի ժողովուրդները ցանկություն են հայտնել միանալու Ֆրանսիային²:

Ինքնորոշման իրավունքի այս ընկալումն ակնհայտորեն ուներ սահմանափակ բնույթ. այն չէր տարածվում գաղութացված ժողովուրդների, ազգային կամ կրոնական փոքրամասնությունների վրա: Այն չէր ենթադրում նաև ժողովրդի՝ սեփական կառավարման ձևն ընտրելու իրավունքը (այսպես կոչված՝ ինքնորոշման իրավունքի ներքին ասպեկտը): Այն կարելի է բնութագրել որպես ազգերի (այլ ոչ թե ժողովուրդների) ինքնորոշում³, որի առաջնային նպատակը իրենդենտիզմն էր (նույն էթնիկ խմբի ներկա-

¹ Franck T.M. The Emerging Right to Democratic Governance // American Journal of International Law, Vol. 86 (1992), P. 46:

² McWhinney E. Self-Determination of Peoples and Plural-Ethnic States: Secession and State Succession and the Alternative, Federal Option // Collected Courses of the Hague Academy of International Law. Vol. 294 (2002). P. 178:

³ Նույն տեղում:

յացուցիչների միավորումը մեկ պետության կազմում): Բոլոր այս թերություններով հանդերձ, սակայն, ժողովուրդների ինքնորոշման իրավունքը սկիզբ է առել հենց Ֆրանսիական հեղափոխության գաղափարախոսությունից և իր գոյության համար պարտական է 18-րդ դարի վերջում տեղի ունեցած քաղաքական մտքի զարգացումներին:

Քաղաքական և գաղափարախոսական այս ինստիտուտը շատ արագ փոխառեց նաև Իտալիան. այստեղ այն ձեռք բերեց նոր բովանդակություն, որի համաձայն՝ բոլոր ազգերը կարող են ազատորեն որոշել իրենց կարգավիճակը: Այս դեպքում ինքնորոշումն արդեն ծառայում էր որպես կոչ իտալական բոլոր հողերի միավորման համար:

Քննարկվող ինստիտուտի պատմական զարգացման հաջորդ փուլի համար որոշ դերակատարում ունեցավ Վ. Ի. Լենինը, որի գաղափարախոսությունում ինքնորոշման իրավունքին հատկացված էր հատուկ տեղ: Ինքնորոշման իրավունքի լենինյան մեկնաբանությունը կարելի է տրոհել երեք հիմնական տարրերի⁴: Առաջինի համաձայն՝ էթնիկ և ազգային խմբերն իրենք են ընտրում են իրենց քաղաքական ճակատագիրը: Երկրորդը սահմանում էր պատերազմներից հետո պետությունների միջև տարածքների վերաբաշխման սկզբունքը, որը արգելում էր պետությունների կողմից տարածքների յուրացումը՝ հակառակ այդ տարածքների բնակչության կամքի (այն, ըստ էության, Ֆրանսիական հեղափոխության ընթացքում մշակված տեսության կրկնօրինակն էր): Երրորդը հակազդութատիրական քարոզարշավի գործիք էր, որը պետք է ծառայեր գաղութացված ազգերի ազատագրմանը:

Ինքնորոշման իրավունքի առաջին տարրը, այն է՝ ժողովուրդներն ազատ են իրենց ճակատագիրը որոշելու հարցում, վերաբերում էր ոչ միայն գաղութացված ժողովուրդներին, այլ բոլոր էթնիկ և ազգային խմբերին ընդհանրապես⁵: Այն իր ամրագրումն ստացավ նաև 1918 թ. Խորհրդային սահմանադրությունում, որի 1-ին գլխի 3-րդ բաժնի 6-րդ կետը սահմանում էր. «Խորհուրդների 3-րդ համառուսաստանյան ժողովը ողջունում է Ժողովրդական կոմիսարների խորհրդի քաղաքականությունը, որը հռչակեց Ֆինլան-

⁴ Cassese A. Self-Determination of Peoples: A Legal Reappraisal. Cambridge University Press, 1995. P. 16:

⁵ Чистяков О.И. Конституция РСФСР 1918 года. Изд. 2-е, перераб. "Зерцало", М., 2003 г. С. 40:

դիպալի անկախությունը, սկիզբ դրեց գորքերի դուրսբերմանը Պարսկաստանից՝ հայտարարեց Հայաստանի ինքնորոշման իրավունքը»⁶:

Ի ապահովումն ժողովուրդների ինքնորոշման իրավունքի՝ Խորհրդային Ռուսաստանը հրաժարվեց Ցարական Ռուսաստանի բոլոր այն պայմանագրերից, որոնք անհավասար պայմաններ էին ստեղծում ազգերի համար և առանձին ժողովուրդներ դնում կախվածության մեջ, և հրապարակեց դրանք⁷:

Ինքնորոշման իրավունքի երրորդ տարրը բացահայտորեն ենթադրում էր սեցեսիա (անջատում) գաղութատիրական պետությունից, սակայն դրա հետ մեկտեղ՝ Լենինի չէր ողջունում բազմաթիվ մանր պետությունների ստեղծումը, ուստի ինքնորոշումն անխուսափելիորեն պետք է հանգեցներ պետությունների վերջնական ինտեգրացիային (իհարկե միասնական սոցիալիստական պետության տեսքով): Այս առումով լենինյան գաղափարախոսությունում անջատումը միայն անցումային փուլ էր և ոչ թե վերջնական նպատակ:

Արդյունքում լենինյան ինքնորոշման իրավունքը, ինչպես և Ֆրանսիական հեղափոխության գաղափարախոսությունը ժողովուրդների իրավունքների պաշտպանության նպատակ չէին հետապնդում: Հեղափոխությունը և պայքարը հանուն միասնական սոցիալիստական պետության ստեղծման միշտ գերակա էին ինքնորոշման իրավունքի նկատմամբ՝ այն վերածելով քաղաքական գործիքի: Արդյունքում ժողովուրդների կամքը կարող էր արհամարհվել անգամ Խորհրդային Միության ներքին վարչական սահմանները գծելիս, ինչի վառ օրինակներից մեկը Լեոնային Ղարաբաղի՝ Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմի մեջ մտցնելն էր: Չնայած լենինյան ինքնորոշման խիստ գաղափարախոսական ուղղվածությանը՝ այն հսկայական (եթե ոչ հիմնական) ազդեցություն ունեցավ ինքնորոշման իրավունքի և հատկապես ՄԱԿ-ի շրջանակներում ապագաղութացման իրավունքի զարգացման վրա:

Գրեթե նույն ժամանակաշրջանում ինքնորոշման իրավունքի մեկ այլ ընկալում զարգացրեց ԱՄՆ նախագահ Վ. Ուիլսոնը: Ինքնորոշման իրավունքի վերջինիս

⁶ 1918թ. ՌՊՖՍՄՀ Սահմանադրության տեքստը հասանելի է <http://www.hist.msu.ru/ER/Etext/cnst1918.htm> կայքում:

⁷ Талалаев А.Н., Бояршинов В.Г. Неравноправные договоры как форма удержания в колониальной зависимости новых государств Азии и Африки // СЕМП 1961. 1962.:

մեկնաբանությունը հիմնված էր արևմտյան դասական ժողովրդավարական գաղափարախոսության վրա: Լինելով ժողովրդական ինքնիշխանության (պոպուլյար սուվերենության) տրամաբանական հետևանք՝ ուիլսոնյան ինքնորոշումը ենթադրում էր բոլոր ժողովուրդների սեփական առաջնորդներին և սեփական կառավարման ձևն ազատորեն ընտրելու իրավունքը. կառավարությունները պետք է հիմնված լինեն «կառավարվողների համաձայնության վրա»: Ըստ Ուիլսոնի՝ ինքնորոշումը նշանակում էր ինքնակառավարում⁸:

Սակայն Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Ուիլսոնի գաղափարներում ինքնորոշումը սկսեց ձեռք բերել նաև արտաքին տարրեր: Վ. Ուիլսոնի այսպես կոչված, «Տասնչորս կետերի» վերլուծության հիման վրա կարելի է առանձնացնել ինքնորոշման իրավունքի ուիլսոնյան մեկնաբանության մի քանի բաղադրիչ տարրեր⁹:

Առաջինն արդեն հիշատակված ինքնակառավարումն էր: Երկրորդի համաձայն՝ Կենտրոնական Եվրոպայի և այլ տարածաշրջանների պետությունների սահմանները պետք է գծվեին՝ հաշվի առնելով այնտեղ ընդգրկված ազգերի և ժողովուրդների կամքը, քանի որ ըստ Ուիլսոնի դա կնվազեցներ նոր համաշխարհային պատերազմ ծավալելու հավանականությունը: Երրորդի համաձայն՝ ինքնակառավարում պետք է տրամադրվեր գաղութացված ժողովուրդներին: Սակայն, Ուիլսոնի մեկնաբանության համաձայն, դա բոլորովին էլ չէր նշանակում ապագաղութացում, այլ միայն գաղութացված ժողովուրդների զարգացում և մասնակցություն տվյալ երկրի կառավարման գործընթացին:

Ինքնորոշման իրավունքի լենինյան և ուիլսոնյան մեկնաբանությունների տարբերություններն ակնհայտ են: Լենինի մոտեցման համաձայն՝ ինքնորոշումը պետք է հանգեցներ սահմանների էական փոփոխությունների և կարող էր ու պետք է իրականացվեր անհապաղ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ բռնի ուժով: Ուիլսոնի տեսակետը առաջ էր քաշում ինքնորոշման աստիճանական իրականացում՝ հանրաքվեների և դրանց արդյունքների իմպլեմենտացիայի միջոցով: Դրա հետ մեկտեղ՝ Ուիլսոնի տեսությունը զուրկ էր որոշակիությունից. այն չէր պարունակում պրագմատիկ կիրառական վարքագծի կանոններ, այլ միայն առաջարկում էր որոշակի արժեքաբանություն:

⁸ Pomerance M. The United States and Self-Determination: Perspectives on the Wilsonian Conception // American Journal of International Law, Vol. 70 (1976). P. 2:

⁹ Cassese A. Self-Determination of Peoples: A Legal Reappraisal... P. 20:

Մյուս կողմից՝ Ուիլսոնի գաղափարախոսությունը նույնպես պետք է ծառայեր որպես քաղաքական գործիք: Այն, փաստորեն նախատեսված էր արտերկրի համար և չպետք է կիրառվեր ԱՄՆ-ում՝ անգամ արդեն ազգային փոքրամասնության վերածված բնիկ ամերիկացիների նկատմամբ: Իր ելույթներից մեկում Ուիլսոնը նշել էր, թե «Ամերիկյան բաղկացած չէ խմբերից: Այն անձը, որը, բնակվելով Ամերիկայում, գտնում է, թե պատկանում է այս կամ այն ազգային խմբի, դեռևս ամերիկացի չի դարձել»: Այս թերությունների և անորոշության պատճառով Ուիլսոնը չկարողացավ ինքնորոշման իրավունքի իր գաղափարախոսությունը ներդնել Ազգերի լիգայի համակարգում, և դրա հետևանքով 20-րդ դարի առաջին կեսում ինքնորոշման իրավունքը շարունակում էր մնալ ընդամենը որպես քաղաքական հասկացություն:

Փարիզի խաղաղության կոնֆերանսի շնորհիվ Եվրոպայում իհարկե ստեղծվեցին նոր պետություններ, սակայն դա տեղի էր ունենում միայն այն դեպքերում, երբ առկա էր քաղաքական առավել հզոր ուժերի շահագրգռվածությունը¹⁰: Այսպես, Անատոլիայի տարածքում էթնիկ պետությունների ստեղծումն այդպես էլ չկայացավ Սևրի պայմանագիրը չվավերացնելու պատճառով, իսկ Իտալիային տրվեցին խորվաթներով, սլովեններով և գերմանացիներով բնակեցված մեծ տարածքներ՝ առանց այդտեղ բնակվող ազգերի կարծիքը հաշվի առնելու:

Չնայած ողջ այս գործընթացի ծայրահեղ քաղաքականացվածությանը՝ այն, այնուամենայնիվ, ունեցավ զգալի դրական հետևանքներ: Այսպես, ըստ որոշ հաշվարկների՝ 1914 թ. Եվրոպայի բնակչության կեսը ազգային փոքրամասնություն էր մեկ այլ պետությունում, իսկ 1919 թ. արդեն այդ կարգավիճակում էր Եվրոպայի բնակչության ընդամենը մեկ քառորդը¹¹:

Սակայն ո՛չ լեհիկյան, ո՛չ էլ ուիլսոնյան ինքնորոշմանը վիճակված չէր դառնալու է Ազգերի լիգայի իրավական համակարգի բաղկացուցիչ մաս: Փոխարենը Ազգերի լիգայի շրջանակներում սկսեցին զարգանել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության նոր մեխանիզմներ, ինչը, բնականաբար, անխուսափելի էր, քանի որ,

¹⁰ Hannum H. The Limits of Sovereignty and Majority Rule: Minorities, Indigenous Peoples, and the Right to Autonomy // New Directions in Human Rights. Ed. by Lutz E.L., Hannum H., Burke K.J. University of Pennsylvania Press, Philadelphia, 1989. P. 7:

¹¹ Vukas B. States, Peoples and Minorities // Collected Courses of the Hague Academy of International Law. Vol. 231 (1991). P. 367.

հաշվի առնելով համաշխարհային պատերազմի դառը փորձը, Եվրոպայում անհրաժեշտ էր ստեղծել քաղաքական կայունության գրավականներ:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Ազգերի լիգայի շրջանակներում ստեղծվեց ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության միջկառավարական համակարգ, որը փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը երաշխավորող պարտավորությունների ամբողջություն էր ամրագրված մի շարք երկկողմ և բազմակողմ պայմանագրերով: Կենտրոնական և արևելյան Եվրոպայի խոշոր տերությունները ստիպված էին կա՛մ միջազգային պայմանագրեր կնքել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության վերաբերյալ, կա՛մ այդ կապակցությամբ ընդունել հռչակագրեր: Այս պայմանագրերի և հռչակագրերի հիման վրա պետությունները ստանձնում էին պարտավորություններ, որոնք ոչ միայն օրենքի առաջ ապահովում էին բոլորի հավասարությունը՝ անկախ կրոնից կամ ազգությունից, այլ նաև ազգային փոքրամասնություններին ընձեռում էին մշակութային, կրոնական և լեզվի պահպանման որոշակի իրավունքներ:

Առաջին նման փաստաթուղթը, որը որպես օրինակ ծառայեց մյուս պայմանագրերի համար, Վերսալում կնքված *Լեհաստանի հետ խաղաղության պայմանագիրը*¹², որի համաձայն՝ վերջինս պարտավորվում էր «ապահովել Լեհաստանի բոլոր բնակիչների կյանքի և ազատության պաշտպանությունը՝ անկախ նրանց ծննդյան վայրից, ազգությունից, լեզվից, ռասայից կամ կրոնից», ճանաչել «ցանկացած դավանանքի, հավատքի, կրոնի ազատ իրացման հնարավորությունը» (2-րդ հոդված) և ճանաչել Լեհաստանի բոլոր քաղաքացիների «հավասարությունը օրենքի առջև և քաղաքական և քաղաքացիական իրավունքներից օգտվելու հնարավորությունը անկախ ռասայից, լեզվից կամ դավանանքից» (7-րդ հոդված):

Ազգերի լիգայի ազգային փոքրամասնությունների համակարգը, սակայն, չէր ստեղծում պարտավորություններ բոլոր պետությունների համար¹³: Այն շատ տարբեր է ժամանակակից *erga omnes*՝ ողջ միջազգային հանրությանն ուղղված պարտավորու-

¹² Treaty of Peace Between the United States of America, the British Empire, France, Italy, and Japan and Poland, 28 June 1919: Պայմանագրի տեքստի համար տես՝ American Journal of International Law, Supplement, Vol. 13(4) (1919), P. 423:

¹³ Кочарян В.В. Международное право и национальные меньшинства, Ер. Изд-во ЕГУ, 1999, стр. 59

թյունների հասկացությունից: Այն, փաստորեն նախ և առաջ պարտադրված էր Առաջին աշխարհամարտում պարտված պետություններին, ընդ որում՝ ոչ բոլորին, այլ միայն թույլերին: Այսպես կոչված «Փոքրամասնությունների պայմանագրերը» (“minority treaties”) պարտավորություններ էին սահմանում պարտված Ավստրիայի, Հունգարիայի, Բուլղարիայի համար, սակայն ոչ՝ Գերմանիայի: Նման պայմանագրեր պարտադրվել էին նաև պատերազմում «հաղթած» եվրոպական փոքր տերություններին, ինչպիսիք էին Լեհաստանը, Չեխոսլովակիան, Բայց ոչ, օրինակ, Իտալիային¹⁴:

Ուստի XX դ. սկզբում այդ խմբերի իրավունքների պաշտպանության սովորութային նորմերի գոյության մասին խոսելն անհնար է: Ինչ վերաբերում է ինքնորոշման իրավունքին, ապա նախքան Երկրորդ համաշխարհային պատերազմը այն՝ առաջին հերթին որպես քաղաքական ինստիտուտ, անջատված էր ազգային փոքրամասնությունների իրավունքից և ընկալվում էր միայն որպես առանձին էթնիկ խմբերի՝ իրենց ճակատագիրն ազատորեն տնօրինելու հնարավորություն: Արդյունքում այն ընդամենը գոյություն ուներ միայն որպես քաղաքական հասկացություն, որը դեռևս զուրկ էր իրավական բովանդակությունից: Սակայն հենց այս նույն ժամանակաշրջանում են նկատվում առաջին դրական տեղաշարժերը միջազգային իրավագիտակցությունում առանձին խմբերի իրավունքների պաշտպանության տեսանկյունից, ինչը տեղի էր ունենում մի կողմից մարդասիրության սկզբունքներից դրդված, իսկ մյուս կողմից՝ ազգային փոքրամասնությունների իրավունքները չհարգելով՝ զգալիորեն վտանգվում էին կայունությունը, անվտանգությունն ու խաղաղությունը միջազգային հարաբերություններում: Պատահական չէ, որ Ազգերի լիգայի Երրորդ ասամբլեան հույս հայտնեց, որ փոքրամասնությունների վերաբերյալ Ազգերի լիգայի նկատմամբ պարտավորություններ չստանձնած պետությունները, միևնույնն է, կպահպանեն իրենց երկրի ազգային փոքրամասնությունների իրավունքներն առնվազն «փոքրամասնությունների պայմանագրերի» ծավալով¹⁵:

¹⁴ Kunz J. The Present Status of International Law for the Protection of Minorities // American Journal of International Law, Vol. 48 (1954), P. 283: Berman N. “But the Alternative is Despair”: European Nationalism and the Modernist Renewal of International Law // Harvard Law Review, Vol. 106 (1993), P. 1822:

¹⁵ St’u Evans I. The Protection of Minorities // British Yearbook of International Law, Vol. 4 (1923-1924), P. 121:

Բացի դրանից, մի շարք դեպքերում քննարկվող ժամանակաշրջանի իրավական մտքի հետազոտության հիման վրա հնարավոր է խոսել արտաքին ինքնորոշման ինստիտուտի (այսինքն՝ մայր պետությունից անջատվելու միջոցով նոր պետություն ստեղծելու կամ այլ պետության միավորելու) սաղմնային դրսևորումների մասին: Այսպիսի օրինակ է, մասնավորապես, Աալանդ կղզու վերաբերյալ Ֆինլանդիայի և Շվեդիայի միջև ծավալված իրավական վեճը: Աալանդ կղզին պատկանում էր Ֆինլանդիային, սակայն պատմականորեն ուներ գերազանցապես էթնիկ շվեդ բնակչություն, որը հաճախ էր դժգոհում իր իրավունքների ոտնահարման դեպքերի կապակցությամբ և ցանկանում էր միանալ Շվեդիային:

Վեճին առնչվող միջազգային իրավունքի նորմերի վերլուծության նպատակով Ազգերի լիգայի խորհուրդը ստեղծեց երկու մարմին՝ Հանձնակատարների հանձնաժողով և Իրավաբանների միջազգային կոմիտե, որոնք Ազգերի լիգայի խորհրդին ներկայացրին իրավիճակի իրենց գնահատականները: Թե՛ Հանձնաժողովը¹⁶, թե՛ Կոմիտեն¹⁷ իրենց հաշվետվություններում նշեցին, որ ինքնորոշման պոզիտիվ միջազգային իրավունքի բաղկացուցիչ մաս չէ, ու դա, փաստորեն տարօրինակ չէր, քանի որ վեճը ծավալվել էր Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումն ու ապագադրությամբ գործընթացի ծավալումը: Սակայն, դրա հետ մեկտեղ, այս երկու մարմիններն էլ նշեցին Ֆինլանդիայից Աալանդ կղզու անջատվելու տեսական հնարավորությունը:

Իրավաբանների միջազգային կոմիտեն մասնավորապես նշեց, որ «ազգի առանձին հատվածների ցանկությունները, որոնք երբեմն սկիզբ են առնում հին ավանդույթներից կամ ընդհանուր լեզվից կամ քաղաքակրթությունից, կարող են բացահայտվել և ունենալ հետևանքներ, որոնք պետք է հաշվի առնվեն ազգերի արտաքին և ներքին անվտանգության համար»¹⁸: Հանձնակատարների հանձնաժողովը նշեց. «Փոքրամասնության անջատումը պետությունից, որի մասն է, այն կազմում և դրա միավորումն այլ պետության հետ, կարող է դիտվել միայն որպես հիմնահարցի ծայրահեղ բացառիկ լուծում, որպես

¹⁶ Report presented to the Council of the League of Nations by the Commission of Rapporteurs, League of Nations Council Doc. B7 21/68/106, 315 (1921). P. 317:

¹⁷ Report of the International Committee of Jurists entrusted by the Council of the League of Nations with the task of giving an advisory opinion upon the legal aspects of the Aaland Islands question // League of Nations Official Journal (1920), Special Supplement No. 3, P. 5:

¹⁸ Նույն տեղում. P. 6:

վերջին միջոց, երբ պետությունը զուրկ է ինչպես կամքից, այնպես էլ իշխանությունից, որպեսզի կենսագործի փոքրամասնության իրավունքների պաշտպանության արդար և արդյունավետ երաշխիքներ»¹⁹:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնակատարների հանձնաժողովը կոչ արեց Ֆինլանդիային պահպանել կղզու բնակիչների իրավունքները՝ նպաստելով Շվեդիայի հետ բարեկամական հարաբերությունների զարգացմանը, և պահանջեց իմպլեմենտացնել մի շարք երաշխիքներ համապատասխան լեզվով դասավանդում դպրոցներում, տնտեսական բարեկեցություն, միայն բնակչության հավանությանը արժանացած գուբերնատորի նշանակում: Հանձնաժողովը նաև նշեց, որ «եթե Ֆինլանդիան, հակառակ մեր ակնկալիքներին և մեզ տված խոստումներին, հրաժարվի Աալանդ կղզու բնակչությանը տրամադրել վերը քննարկված երաշխիքները, ապա հնարավոր կլինի դիմել նաև մեկ այլ լուծման: Աալանդցիների շահերը, բայթիկ պետություններում կայուն խաղաղության շահերը կստիպեն մեզ առաջարկեն կղզու անջատումը Ֆինլանդիայից՝ հաշվի նստելով կղզու բնակիչների ցանկությունը, որը կարելի կլինի արտահայտել հանրաքվեի միջոցով»²⁰.

Այսպիսով՝ թեև Հանձնաժողովն ու Կոմիտեն ձևականորեն մերժեցին ինքնորոշման իրավունքը, սակայն նրանց առաջարկած երաշխիքները և խնդրի լուծման մեխանիզմներն իրականում լիովին համահունչ էին ինքնորոշման իրավունքի ժամանակակից պատկերացումներին: Մասնավորապես, ինքնավարությունը, սեփական ռեսուրսների տնօրինումը, սեփական լեզվով դպրոցներ ունենալը և անհրաժեշտության դեպքում հանրաքվեի միջոցով ժողովրդի կամքի արտահայտումը (ինչպես կհամոզվենք ստորև) ոչ այլ ինչ են, քան ինքնորոշման իրավունքի երկու հիմնական ձևերի՝ ներքին և արտաքին ինքնորոշման դրսևորումներ:

1930թ. հուլիսի 31-ի «Հունա-բուլղարական համայնքների» վերաբերյալ խորհրդրդատվական եզրակացությունում Միջազգային արդարադատության մշտական պալատը, քննարկելով Հունաստանի և Բուլղարիայի միջև 1919 նոյեմբերի 27-ի Նյոյի-այուր-Սենի պայմանագիրը, որում նշված էր նաև երկու պետությունների տարածքում բնակվող հունական և բուլղարական համայնքներին որոշակի իրավական երաշխիքներ տրամադրելու մասին, տվեց նաև «համայնք» եզրույթի բնորոշումը, որն այսօր բազմա-

¹⁹ Report presented to the Council of the League of Nations by the Commission of Rapporteurs. P. 318:

²⁰ Նույն տեղում. P. 327.

թիվ հեղինակներ համարում են առանձին պետության տարածքում բնակվող ժողովուրդների լավագույն բնորոշում: «Համայնքը» անձանց խումբ է, որը բնակվում է կոնկրետ պետությունում կամ վայրում, ունի սեփական ռասան, կրոնը, լեզուն և ավանդույթները և համախմբված է այդ ռասայական, կրոնական, լեզվական և ավանդույթների ինքնությամբ մեկ միասնության մեջ, որը ցանկություն ունի պահպանելու այդ ավանդույթները, պահպանելու հավատքի իր ձևը, ապահովելու իրենց երեխաների ուսուցումն ու դաստիարակությունը իրենց ռասայի ոգուն և ավանդույթներին համահունչ, ինչպես նաև ցուցաբերելու փոխադարձ օգնություն համայնքի անդամներին»²¹:

Ազգերի լիգայի համակարգում ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ստեղծման և զարգացման համար հաջորդ նախադրյալը մանդատի համակարգն էր: Ազգերի լիգայի կանոնադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր այն գաղութների ու տարածքների նկատմամբ, որոնք Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով դուրս են եկել նախկին սուվերենների իշխանությունից, և որոնք դեռևս ունակ չեն ինքնուրույն գոյատևելու, պետք է գործածվի այն սկզբունքը, որի համաձայն՝ «այդ ժողովուրդների բարեկեցությունն ու զարգացումը հանդիսանում են քաղաքակրթության սրբազան պարտավորությունը»: Ուստի, Կանոնադրության համաձայն, այդ ժողովուրդների նկատմամբ պետք է հաստատվեր «զարգացած ազգերի» խնամակալություն: Յուրաքանչյուր դեպքում խնամակալի լիազորությունների շրջանակը պետք է որոշվեր Ազգերի լիգայի խորհրդի կողմից և պետք է կախված լիներ կոնկրետ ժողովրդի զարգացվածության աստիճանից, աշխարհագրական դիրքից և այլ հանգամանքներից:

Ի տարբերություն «փոքրամասնությունների պայմանագրերի»՝ Ազգերի լիգայի 22-րդ հոդվածն արդեն ակնհայտորեն խոսում էր իրավական սկզբունքի մասին, որը վերաբերում էր Լիգային անդամակցող բոլոր պետություններին: Միջազգային դատարանի կողմից «*Հարավարևմտյան Աֆրիկայի իրավական կարգավիճակի*» վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունում առաջ քաշած մեկնաբանության համաձայն՝ «Մանդատը ստեղծվել է ի շահ (կոնկրետ) տարածաշրջան(ներ)ի բնակչության և ի շահ մարդկության ընդհանրապես, որպես միջազգային ինստիտուտ, որն ունի միջազգային

²¹ Greco-Bulgarian “Communities”, Advisory Opinion, PCIJ Series B (1930), No. 17, P. 21:

նպատակ՝ (ապահովել) քաղաքակրթության սրբազան պարտավորությունը»²²: «Պետությունների համար, հակառակ Անվտանգության խորհրդի բանաձև 276-ի (1970) Նամիբիայում (Հարավարևմտյան Աֆրիկա) Հարավային Աֆրիկայի շարունակական ներկայության իրավական հետևանքների» վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունում Միջազգային դատարանը վերահաստատեց իր մոտեցումը՝ ևս մեկը անգամ ընդգծելով, որ Մանդատի համակարգի նպատակը հենց ժողովուրդների իրավունքների պաշտպանությունն էր²³: Ավելին՝ Միջազգային դատարանը, դիտարկելով Մանդատի համակարգը պատմական զարգացման համատեքստում, նշեց, որ այսպես կոչված «սրբազան պարտավորության» առաջնային նպատակը հենց ինքնորոշումն էր և համապատասխան ժողովուրդների անկախությունը²⁴: Թեև Միջազգային դատարանը հանգեց այս եզրակացության ինտերտեմպորալ (այսինքն՝ ժամանակակից իրավական համակարգի լույսի ներքո) մեկնաբանության շնորհիվ, այնուամենայնիվ ակնհայտ է, որ ըստ Դատարանի Մանդատային համակարգի հենց դարձել է ինքնորոշման իրավունքի և հետագայում ՄԱԿ-ի շրջանակներում ստեղծվելիք իրավական ռեժիմի նախահայրը:

²² International Status of South West Africa, Advisory Opinion, ICJ Reports 128 (1950), P. 132:

²³ Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (South West Africa) notwithstanding Security Council Resolution 276 (1970), Advisory Opinion, ICJ Reports 16 (1971), P. 29, § 46:

²⁴ Նույն տեղում., P. 31-2, § 53:

**§2. Ինքնորոշման իրավունքը Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումից հետո
և դրա բովանդակությունը՝ համաձայն միջազգային պայմանագրերի, ՄԱԿ-ի
հռչակագրերի, Միջազգային դատարանի վճիռների**

Ինքնորոշման իրավունքի զարգացման հաջորդ փուլը արդեն կապված էր Երկրորդ համաշխարհային պատերազմի հետ: Դեռևս 1941թ. օգոստոսի 14-ին ԱՄՆ նախագահ Ֆ. Դ. Ռուզվելտի և Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլի միացյալ հռչակագրում, որը հետագայում հայտնի դարձավ Ատլանտյան խարտիա վերտառությամբ, զետեղված էին մի շարք դրույթներ, որոնք հետագայում էական ազդեցություն ունեցան նաև ՄԱԿ-ի կանոնադրության տեքստի վրա²⁵: Այդ դրույթները պահանջում էին արգելել տարածքային փոփոխություններ՝ առանց այդ տարածքների բնակչության ազատ կամաարտահայտության, ժողովուրդների իրավունքը՝ ընդունելու իրենց նախընտրելի կառավարման ձևը, բռնի ուժով ինքնիշխանությունից զրկված պետությունների սուվերենության վերականգնում²⁶:

ՄԱԿ-ի կանոնադրությունում ինքնորոշման իրավունքի վերաբերյալ դրույթը առաջ է քաշվել Սան Ֆրանցիսկոյի կոնֆերանսի ժամանակ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Չինաստանի միացյալ նախագծով: Սակայն ոչ բոլոր պետություններն էին կողմ տվյալ գաղափարին: Բելգիան մասնավորապես դեմ էր «ժողովուրդների իրավահավասարություն» արտահայտության կիրառմանը, ինչպես նաև «ժողովուրդ» եզրույթին առհասարակ, քանի որ գտնում էր, որ այն չի ներառում պետության ողջ բնակչությունը և հետևաբար չի կարող նպաստել պետությունների միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը²⁷: Սակայն դա չխոչընդոտեց վերջնական տեքստի հաստատմանը:

²⁵ Vukas B. States, Peoples and Minorities // Collected Courses of The Hague Academy of International Law. Vol. 231 (1991). P. 369:

²⁶ Atlantic Charter // American Journal of International Law, Vol. 35, Supplement, (1941), P. 191-192:

²⁷ The Right to Self-Determination; Historical and Current Developments on the Basis of the United Nations Instruments, Study prepared by A. Cristescu, Special Rapporteur of the Sub-Commission on the Prevention of Discrimination and Protection of Minorities, UN doc. E/CN.4/Sub.2/404/Rev.1 (1981). P. 2, § 17:

Արդյունքում Կանոնադրության 1-ին հոդվածի 2-րդ մասը ՄԱԿ-ի նպատակներին անդրադառնալիս հիշատակում է ժողովուրդների ինքնորոշումը՝ նշելով, որ ՄԱԿ-ը նպատակ է հետապնդում *inter alia* «զարգացնել ազգերի միջև բարեկամական հարաբերություններ՝ հիմնված ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի հարգանքի վրա, և այլ համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ հանուն համընդհանուր խաղաղության ամրապնդման»:

Այս ձևակերպումը իրավաբանական գրականությունում ենթարկվել է բազմաթիվ մեկնաբանությունների: Մի շարք հեղինակների կարծիքով, ՄԱԿ-ի կանոնադրությունում ինքնորոշման իրավունք հասկացությունը օգտագործվում է որպես հոմանիշ պետությունների ինքնիշխան հավասարության²⁸: Մյուս խումբ հեղինակների կարծիքով, Կանոնադրության նախաբանի «*մենք՝ Միավորված ազգերի կազմակերպության ժողովուրդներս*» արտահայտությունը վկայում է այն մասին, որ ՄԱԿ-ի անդամ պետությունները իրենց իշխանությունը ստանում են իրենց ժողովուրդներից և հետևաբար ժողովուրդների ինքնորոշումը նույնական է ժողովրդավարության ինստիտուտին²⁹: Սակայն երկու մոտեցումներն էլ ըստ էության ճիշտ են և չեն հակասում միմյանց: Ինքնորոշման իրավունքի վերաբերյալ Կանոնադրության դրույթներն իրականում բազմաբովանդակ են և չեն կարող սահմանափակվել միայն մեկ մեկնաբանությամբ:

Այսպես, «ժողովուրդ» եզրույթը օգտագործվում է նաև Կանոնադրության XI գլխում՝ ոչ ինքնակառավարվող տարածքների բնակչության իմաստով: Հետևաբար, առավել տրամաբանական է այն մոտեցումը, որի համաձայն՝ «ժողովուրդը» կա՛մ պետության բնակչությունն է (դրանից բխող համապատասխան իրավունքներով), կա՛մ էլ ոչ ինքնակառավարվող տարածքների բնակչությունը, որն ունի անկախ պետականություն կայացնելու իրավունք:

Միջազգային իրավունքի հեղինակավոր մասնագետներից Ա. Կասսեզեն Կանոնադրությունում շարադրված՝ ինքնորոշման սկզբունքի և խաղաղության ու անվտանգության արժեքների միջև կապը համարում է որպես սահմանափակում

²⁸ Տե՛ս օր՝ Kelsen H. The Law of the United Nations: A Critical Analysis of Its Fundamental Problems, Stevens, London, 1950, P. 52.

²⁹ Տե՛ս օր՝ Falk R. The Rights of Peoples (In Particular Indigenous Peoples) // The Rights of Peoples, ed. by Crawford, J., Clarendon Press, Oxford, 1988. P. 17–37:

ինքնորոշման իրավունքի նկատմամբ՝ նշելով, որ բոլոր այն դեպքերում, երբ ինքնորոշման իրավունքի իրացումը կարող է հանգեցնել պետությունների միջև բարեկամական հարաբերությունների վատթարացման կամ անգամ պատերազմական գործողությունների, ինքնորոշման իրավունքը պետք է սահմանափակվի³⁰: Նման մոտեցմանը հնարավոր չէ համաձայնվել: Նախ, այն հակասում է ժամանակակից միջազգային իրավունքում արդեն կայացած այն դիրքորոշմանը, որ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը միջազգային իրավունքի *jus cogens*՝ իմպերատիվ նորմ է³¹, մինչդեռ վերջիններիցս վերապահումներն անթույլատրելի են *Պայմանագրային իրավունքի վերաբերյալ Վիեննայի կոնվենցիայի* 53-րդ հոդվածի համաձայն (1969 թ.)³²: Բացի այդ, Կանոնադրության շարադրանքն ինքնին վկայում է այն մասին, որ ինքնորոշումը սկզբունք է, որը պետք է նպաստի միջազգային խաղաղությանը, և ոչ թե սահմանափակվի վերջինիս պատճառով:

Ավելին՝ 20-րդ և 21-րդ դարերի պատմությունը ցույց է տալիս, որ ինքնորոշման իրավունքի սահմանափակումը իրականում ինքնին հանգեցնում է միջազգային խաղաղության և անվտանգության ոտնահարման: Կոսովո, Էրիթրիա և Հարավային Սուդան պետությունների ստեղծումը դրա լավագույն օրինակն է. մինչև տվյալ սուբյեկտների՝ համապատասխանաբար Սերբիայից, Եթովպիայից և Սուդանից անկախանալը քննարկվող տարածաշրջանները գտնվում էին քաղաքացիական պատերազմի պայմաններում և պարբերաբար շարունակվում էին մարդկության դեմ ուղղված հանցագործությունները:

Հետևաբար, ՄԱԿ-ի կանոնադրության առաջին հոդվածն իրականում սահմանում է միջազգային հանրության բարեկեցիկ և համերաշխ գոյատևման միասնական արժեքաբանություն՝ ցույց տալով խաղաղության, անվտանգության, ինքնորոշման և մարդու իրավունքների փոխադարձ կապվածությունը³³: Մասնավորապես ինքնորոշման

³⁰ Cassese A. The Helsinki Declaration and Self-Determination // Human Rights, International Law and the Helsinki Accord. Ed. by Buergenthal T. and Hall J. Universe Books, New York, 1977. P. 84:

³¹ Doehring K. Self-Determination // The Charter of the United Nations: A Commentary, Vol. 1, Simma B. ed. Oxford University Press, New York, 2002. P. 62:

³² Vienna Convention on the Law of Treaties, UNTS, Vol. 1155, P. 331, 23 May 1969. Article 27:

³³ Thornberry P. The Principle of Self-Determination // The United Nations and the Principles of International Law: Essays in Memory of Michael Akehurst. Edited by Warbick C. & Lowe V. Routledge, London / New York, 1994. P. 178:

սկզբունքի և մարդու իրավունքների փոխադարձ կապվածությունը ցայտուն է նկարագրված Ռասայական խտրականության կանխարգելման և ազգային փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովի հատուկ հանձնակատար Հ. Էսպիելի հաշվետվությունում, որի համաձայն. «Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հաստատման հետ մեկտեղ՝ մարդու այլ իրավունքների փաստացի և գործնականում մերժելը, անձնական ազատությունների, մտքի, տեղաշարժվելու, հավաքների ազատության և բոլոր այլ քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների անարգումն անհեթեթություն են, ողբերգական և ցավալի հակասություն, որոնք բացարձակապես անընդունելի են»³⁴ (այս սկզբունքների փոխկապվածությանն առավել մանրամասն կանդրադառնանք երկրորդ գլխում):

Ինքնորոշման հիշատակումը ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքների շարքում արդեն իսկ վերջինիս օժտվում է որոշակի կարգավիճակով միջազգային-իրավական նորմերի հիերարխիայում: Նախ՝ ՄԱԿ-ի կանոնադրության 24-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ Անվտանգության խորհուրդը իր լիազորություններն իրականացնելիս չպետք է ձեռնարկի այնպիսի գործողություններ, որոնք կհակասեն ինքնորոշման սկզբունքին: Այսինքն՝ անգամ Անվտանգության խորհուրդը կամ ՄԱԿ-ի այլ մարմինները չեն կարող ժողովուրդներին պարտադրել այս կամ այն պետական կառավարման ձևը³⁵:

Մի շարք դեպքերում, սակայն Անվտանգության խորհուրդը, միջամտելով պետությունների ներքին գործերին Կանոնադրության VII գլխի շրջանակներում, փաստորեն դեմ է եղել հենց կոնկրետ պետություններում գործող ռեժիմներին³⁶: Այդպես էր մասնավորապես Ռոդեզիայի, Հարավային Աֆրիկայի, Հաիթիի դեպքերում: Սակայն դա չի կարելի որակել որպես Անվտանգության խորհրդի կողմից միջամտություն ինքնորոշման իրավունքի իրականացմանը, քանի որ այդ պետությունների ժողովուրդների ինքնորոշման իրավունքը փաստացի ոտնահարված էր ռասիստական

³⁴ Report of the Special Rapporteur of the Sub-Commission for Prevention of Discrimination and Protection of Minorities, Espiell H.G. Report on the Implementation of United Nations Resolutions Relating to the Right of People under Colonial and Alien Domination to Self-determination. UN Doc.E/CN.4/Sub.2/390. 1977. § 110:

³⁵ Schweigman D. The Authority of the SC under Chapter VII of the UN Charter: Legal Limits and the Role of the International Court of Justice, Martinus Nijhoff Publishers, The Hague-Boston, 2001. P. 169:

³⁶ Նույն տեղում., P. 170:

ռեժիմների կողմից: Հետևաբար, Անվտանգության խորհրդի միջամտությունը տվյալ դեպքերում ոչ թե խախտում, այլ, ընդհակառակը, ծառայում է ինքնորոշման սկզբունքի արդյունավետ իրականացմանը:

Որոշ դեպքերում Անվտանգության խորհրդը կարող է ստեղծել անցումային ժամանակավոր վարչակազմ, որի պարագայում պետության ինքնիշխան լիազորությունները հավասարապես բաշխվում են ժողովուրդը ներկայացնող մարմինների, միջազգային կազմակերպության վերահսկողության ներքո գտնվող կառույցների կամ երրորդ պետությունների միջև: Նման վարչակազմ սովորաբար օգտագործվում է, երբ նոր պետականությունը ստեղծվում է մայր պետության զինված հարձակման վտանգի պայմաններում: Այս երևույթը միջազգային գրականությունում ստացել է «վաստակած ինքնիշխանություն» (“earned sovereignty”) անվանումը, քանի որ այս անցումային փուլում ժողովուրդը պետք է ապացուցի, որ ի վիճակի է տնօրինելու իր վաստակած պետականությունը³⁷: Այն չի համարվում ինքնորոշման սկզբունքի խախտում, այլ, ընդհակառակը, ծառայում է որպես միջոց կոնկրետ ժողովուրդի կողմից իր ինքնորոշման իրավունքի իրացման համար՝ երաշխավորելով անվտանգությունն արտաքին միջամտությունից: Սակայն ՄԱԿ-ի ստեղծած ժամանակավոր վարչակազմը չի կարող գոյատևել երկար³⁸ և իրավասու է գոյություն ունենալու այնքան ժամանակ, քանի դեռ իշխանությունն ամբողջությամբ ժողովրդին հանձնելու համար առկա են էական խոչընդոտներ: Այլապես նման վարչակազմի գոյությունը կհանդիսանա ինքնորոշման իրավունքի ոտնահարում:

Այս ինստիտուտը կիրառվել է Արևելյան Թիմորում, Կոսովոյում, Կամբոջայում: 2007թ. նոյեմբերին մշակված այսպես կոչված «մադրիդյան սկզբունքները» պետք է տվյալ ինստիտուտի կիրառման հիմք հանդիսանային Լեռնային Ղարաբաղում:

Սակայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պարագայում ժամանակավոր վարչակազմի այս ինստիտուտի իմպլեմենտացիան հնարավոր չէ պատկերացնել: Ի տարբերություն Կոսովոյի և Արևելյան Թիմորի՝ ԼՂՀ-ն արդեն իսկ կայացած պետություն է, ուստի տարածաշրջանում նոր վարչակարգ ստեղծելու ցանկացած փորձ, անգամ

³⁷ Williams P.R. Earned Sovereignty: The Road to Resolving the Conflict over Kosovo's Final Status // Denver Journal of International Law and Policy, Vol. 31 (2003). P. 387-425:

³⁸ Gill T.D. Legal and Some Political Limitations on the Power of the U.N. Security Council to Exercise its Enforcement Powers under Chapter VII of the Charter // Netherlands Yearbook of International Law, Vol. 26 (1995), P. 75:

ժամանակավոր, կոտնահարի Ղարաբաղի բնակչության ինքնորոշման իրավունքը և կհակասի կայունության, հետևաբար նաև՝ տարածաշրջանային խաղաղության ու անվտանգության սկզբունքներին:

Մեկ այլ խումբ հեղինակներ գտնում են, թե Կանոնադրությունում ինքնորոշումն ընդհանրապես ո՛չ սկզբունք է, և ո՛չ էլ նպատակ, այլ միայն պայման, որի ապահովումը կարող է նպաստավոր միջավայր ստեղծել Կանոնադրության համապատասխան նպատակի՝ պետությունների միջև բարեկամական հարաբերությունների զարգացման համար³⁹: Այս մոտեցմանը նույնպես հնարավոր չէ համաձայնվել: Կանոնադրության բոլոր սկզբունքները փոխկապված են, և այն, որ դրանցից մեկը նպաստում է մյուսի իրացմանը, բոլորովին էլ չի նսեմացնում առաջինի նշանակությունը:

Կանոնադրության 55-րդ հոդվածը ընդգծում է ժողովուրդների ինքնորոշման իրավունքի կապը միջազգային զարգացման, մարդու իրավունքների պաշտպանության և համընդհանուր բարեկեցության հետ.

«Ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի հիման վրա ազգերի միջև խաղաղ և բարեկամական հարաբերությունների համար անհրաժեշտ կայունության և բարեկեցության պայմաններ ստեղծելու նպատակով Միավորված ազգերի կազմակերպությունը կնպաստի՝ ա. ... տնտեսական և սոցիալական առաջընթացի և զարգացման պայմանների ստեղծմանը, բ. միջազգային տնտեսական, սոցիալական, առողջապահական և այլ առնչվող խնդիրների լուծմանը և միջազգային մշակութային և կրթական համագործակցությանը, գ. մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների համընդհանուր հարգմանն ու պահպանմանը ...»:
Ավելին՝ «Կանոնադրության 55-րդ հոդվածում ամրագրված նպատակներին հասնելու համար միասնաբար և առանձին-առանձին համագործակցել Կազմակերպության հետ»:

Կանոնադրության 55-րդ և 56-րդ հոդվածները ապահովեցին ինքնորոշման իրավունքի վերաբերյալ դրույթների շարունակական զարգացումը և հստակեցումը Գլխավոր ասամբլեայի բանաձևերի միջոցով⁴⁰:

³⁹ Vukas B. States, Peoples and Minorities // Collected Courses of The Hague Academy of International Law. Vol. 231 (1991). P. 372:

⁴⁰ Лукин П.П. Источники международного права. Издательство Академии наук СССР, Москва, 1960. С. 105-124:

Թեև 60-80-ական թթ. ինքնորոշման իրավունքի վերաբերյալ Գլխավոր ասամբլեայի շրջանակներում ընդունված բանաձևերը չէին արժանանում բոլոր պետությունների հավանությանը, այնուամենայնիվ դրանց գոյության փաստով և Կանոնադրության 55-րդ և 56-րդ հոդվածների ուժով պետությունների համար ստեղծում է պարտավորություն՝ առնվազն չխոչընդոտել այդ բանաձևերի կենսագործումը:

Առաջին նման բանաձևը 1960թ. դեկտեմբերի 4-ի Գաղութացված պետություններին և ժողովուրդներին անկախություն պարգևելու վերաբերյալ հռչակագիրն էր (այսուհետ՝ Գաղութային հռչակագիր)⁴¹, որը սահմանում էր անկախ պետականության ստեղծումը՝ որպես ինքնորոշման իրավունքի վերջնական նպատակ՝ Կանոնադրությունում ամրագրված սկզբունքը վերածելով կոնկրետ պոզիտիվ իրավունքի⁴²: Վերջինիս համաձայն. «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք. այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն որոշում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն հետամուտ լինում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացմանը» (2-րդ պարբերություն):

Սա ինքնորոշման իրավունքի դրսևորումներից մեկի՝ արտաքին ինքնորոշման պոզիտիվ իրավական ամրագրման առաջին դեպքն է: Գաղութային հռչակագրի հաջորդ կարևոր ներմուծումն այն էր, որ առավել հստակեցվեց կապը մարդու իրավունքների հետ. վերջինիս համաձայն՝ ինքնորոշման իրավունքի սահմանափակումը մարդու հիմնարար իրավունքների ոտնահարում է: Այս դրույթն արդեն ներքին ինքնորոշման իրավունքի զարգացման առաջին քայլերից մեկն էր:

Հռչակագրի նշանակությանն ու բովանդակությանն առիթ է ունեցել անդրադառնալու նաև Միջազգային դատարանը, որն իր «Պետությունների համար հակառակ Անվտանգության խորհրդի բանաձև 276-ի (1970) Նամիբիայում (Հարավարևմտյան Աֆրիկա) Հարավային Աֆրիկայի շարունակական ներկայության իրավական հետևանքների» վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունում նշել, որ Գաղութային հռչակագիրը վերաբերում է բոլոր ժողովուրդներին և բոլոր այն

⁴¹ Declaration on the Granting of Independence to Colonial Countries and Peoples. GA resolution 1514 (XV), UN Doc. A/RES/15/1514, 14 December 1960:

⁴² Thornberry P. P. 178:

տարածքներին, որոնք դեռևս ձեռք չեն բերել լիարժեք անկախություն⁴³:

Նույն 1960թ. դեկտեմբերի 15-ին Գլխավոր ասամբլեան ընդունեց 1541 բանաձևը, որը պետք է կարգավորեր ոչ ինքնակառավարվող տարածքների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին փոխանցելու վերաբերյալ պարտավորության իրացումը: «Սկզբունքներ, որոնք պետք է առաջնորդեն Անդամ պետություններին Կանոնադրության 73-րդ հոդվածի e կետի համապատասխան տեղեկատվություն փոխանցելու պարտավորության առկայությունը որոշելու հարցում» վերտառությամբ սույն բանաձևը սահմանում էր տեղեկատվության փոխանցման պարտավորություն առաջին հերթին աշխարհագրական և էթնիկ կամ մշակութային տարբերությունների հիման վրա (IV սկզբունք): Բացի դրանից, բանաձևի համաձայն՝ պետք է հաշվի առնել նաև քաղաքական, տնտեսական, սոցիալական և դատական պաշտպանվածության և այլ բնույթի տարբերությունները, որոնք տարածաշրջանի բնակչությանը դնում են կախվածության մեջ: Թեև սույն բանաձևն ընդունվեց 69 կողմ, 2 դեմ և 21 ձեռնպահ ձայներով, այն, միևնույնն է, արտացոլում է միջազգային հանրության մեծ մասի համաձայնությունն առ այն, որ սոցիալական անհավասարությունները կարող են կոնկրետ տարածքի բնակչությանը դնել կախվածության մեջ:

Ինքնորոշման իրավունքի բովանդակության հետագա հստակեցման հարցում մեծ դեր խաղաց 1970թ. հոկտեմբերի 24-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ընդունած՝ ՄԱԿ-ի կանոնադրությանը համապատասխան՝ պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիրը (այսուհետև՝ Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիր): Վերջինս միջազգային իրավունքի մի շարք հեղինակների կողմից որակվել է որպես ՄԱԿ-ի կանոնադրության հեղինակավոր մեկնաբանություն⁴⁴, իսկ ՄԱԿ-ի միջազգային դատարանը «Միջազգային իրավունքի նորմերին Կոսովոյի անկախության միակողմ հռչակագրի համապատասխանության» վերաբերյալ իր խորհրդատվական

⁴³ Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (South West Africa) notwithstanding Security Council Resolution 276 (1970), Advisory Opinion, ICJ Reports 16 (1971), P. 31, § 52:

⁴⁴ Sinclair I. The Significance of the Friendly Relations Declaration // The United Nations and the Principles of International Law: Essays in Memory of Michael Akehurst. Edited by Warbick C. & Lowe V. Routledge, London / New York, 1994. P. 17:

եզրակացությունում նշեց, որ Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիրը արտացոլում է սովորության միջազգային իրավունքը⁴⁵:

Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիրը մանրամասն շարադրում է ինքնորոշման իրավունքի բովանդակությունը, սահմանում պետությունների պարտականություն՝ չխոչընդոտել ինքնորոշման իրավունքի իրացմանը և նպաստել վերջինիս պաշտպանությանը, նկարագրում դրա իրացման ձևերը՝ անկախ պետականության ստեղծում, ազատ ասոցիացիա այլ պետության հետ, ինտեգրացիա այլ պետության կազմում և այլն:

Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրի թերևս առավել վիճահարույց հատվածը ինքնորոշման սկզբունքին վերաբերող վերջին պարբերությունն է, որը սահմանում է. «Վերոշարադրյալ պարագրաֆներում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես թույլտվություն կամ խրախուսում որևիցե գործողության, որը կտրոհի կամ ամբողջովին կամ մասամբ կվնասի այն ինքնիշխան և անկախ պետությունների տարածքային ամբողջականությունը կամ քաղաքական միասնությունը, որոնք գործում են ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հիման վրա, այնպես, ինչպես դա շարադրված է վերը, և արդյունքում ունեն կառավարություն, որը ներկայացնում է տարածքին պատկանող ողջ ժողովուրդը՝ առանց ռասայական, կրոնական կամ մաշկի գույնի խտրականության»:

Մի կողմից՝ սա զգալի քայլ էր առաջ՝ ի համեմատ 1960 թ. *Գաղութային հռչակագրի*, քանի որ էապես հստակեցնում էր հարաբերակցությունը տարածքային ամբողջականության սկզբունքի հետ⁴⁶՝ այժմ պաշտպանելով ոչ թե բոլոր պետությունների տարածքային ամբողջականությունը, այլ միայն նրանց, «որոնք գործում են ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հիման վրա», և այդպիսով սահմանելով որոշակի հավասարակշռվածություն միջազգային-իրավական այդ երկու ելակետային սկզբունքների միջև:

⁴⁵ Accordance with International Law of the Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo, ICJ General List 141 (2010), § 80:

⁴⁶ Лукашук, И.И., Международное право: общая часть. Издание 3е, переработанное и дополненное, ВолтерсКлувер 2005, Москва. С. 318-319:

Մյուս կողմից, սույն ձևակերպումը, որն իրավաբանական գրականությունում հայտնի է որպես «երաշխավորության դրույթ», դարձել է բազմաթիվ գիտական վերլուծությունների առարկա և, թերևս, միջազգային իրավունքի առավել վիճահարույց նորմերից մեկը:

Այս դրույթն ակտիվ քննարկումների առարկա էր նաև ՄԱԿ-ի միջազգային դատարանի «Միջազգային իրավունքի նորմերին Կոսովոյի անկախության միակողմ հռչակագրի համապատասխանության» վերաբերյալ խորհրդատվական եզրակացության ընդունմանը նախորդած լուսնների ընթացքում: Սակայն դատարանն իր խորհրդատվական եզրակացությունում այս դրույթին չանդրադարձավ:

Ուստի վերջինիս բովանդակության իրական իմաստի վերհանման համար անդրադառնանք «երաշխավորության դրույթի» մեկնաբանությանը:

Միջազգային իրավունքի հանձնաժողովի «Միջազգային իրավունքի ֆրագմենտացիայի վերաբերյալ հետազոտողական խմբի աշխատանքների եզրափակիչ արդյունքներ» փաստաթղթում նշվում է, որ միջազգային իրավունքի ցանկացած նորմ մեկնաբանելիս *Վիեննայի կոնվենցիայի* 31-33 հոդվածները պետք է հիմնական մեկնաբանման գործիք ծառայեն⁴⁷: Ուստի հենց այդ մեկնաբանման կանոններից մենք կփորձենք օգտվել այս աշխատությունում:

Իրավաբանական գրականությունում այս դրույթի մեկնաբանման վերաբերյալ ձևավորվել են հակասական մոտեցումներ: Մի խումբ հեղինակներ գտնում են, որ այսպես կոչված *a contrario* մեկնաբանման կանոնի կիրառմամբ ակնհայտ է դառնում, որ «երաշխավորության դրույթն» ըստ էության սահմանում է անջատման հնարավորություն⁴⁸: Մյուսները քննադատում են այդ մեկնաբանման կանոնի կիրառելիությունն ընդհանրապես կամ վիճարկում են տվյալ նորմի համապարտադիր իրավաբանական բնույթը⁴⁹: Հետևաբար, նախ փորձենք պարզաբանել «երաշխավորության դրույթը»

⁴⁷ Conclusions of the work of the Study Group on the Fragmentation of International Law: Difficulties arising from the Diversification and Expansion of International Law (2006): Հասանելի է http://untreaty.un.org/ilc/texts/instruments/english/draft%20articles/1_9_2006.pdf կայքում:

⁴⁸ Տե՛ս օր.՝ Tomuschat C. Secession and Self-Determination // Secession: International Law Perspectives. Ed. by Kohen M. G. Cambridge University Press, Cambridge-New York, 2006. P. 23-45; Ouguerouz F. & Tehindrazanarivelo D.L. The Question of Secession in Africa. In the same treatise. P. 257-298:

⁴⁹ Տե՛ս օր.՝ Tancredi A. Anormative 'due process' in the creation of States through secession // Secession: International Law Perspectives. Ed. by Kohen M. G. Cambridge University Press, Cambridge-

մեկնաբանման տարբեր հնարքների միջոցով՝ մեկնաբանման լրիվությունն ու ամբողջականությունը ապահովելու համար⁵⁰, իսկ այնուհետև անդրադառնանք նաև *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրի* իրավական արժեքին:

Իրավաբանական գրականությունում առաջարկվել է *a contrario* (*per argumentum e contrario*) մեկնաբանման կանոնի հետևյալ բնորոշումը. «Եթե հնարավոր է ապացուցել, որ պայմանագրային դրույթը պարունակում է ձևակերպում, որն իր սովորական իմաստի համաձայն օգտագործվում է ավելի մեծ դասի մասը կազմող փոքր հասկացությունը բնորոշելու համար, ապա դրույթը պետք է հասկանալ այնպես, որ ձևակերպման շարունակությունը վերաբերի միայն այդ փոքր հասկացությանը և ոչ թե դասի որևէ այլ մասի»⁵¹:

Եթե փորձենք կանոնը ներկայացնել պայմանական չափողական միավորներով, այն կստանա հետևյալ բնութագիրը. եթե X դասը պարունակում է a, b և c հասկացությունները, իսկ պայմանագրի դրույթում հիշատակվում է միայն a հասկացությունը, ապա պայմանագրում շարադրված վարքագծի կանոնը չի կարող վերաբերել b կամ c հասկացություններին կամ X դասին ընդհանրապես. այն վերաբերում է միայն a հասկացությանը:

Առավել պարզ լինելու համար համար փորձենք այն նկարագրել կոնկրետ օրինակով: Մեկնաբանման այս կանոնը մի քանի անգամ կիրառվել է *Միջազգային արդարադատության մշտական պալատի* և ՄԱԿ-ի *միջազգային դատարանի* կողմից: Մասնավորապես, «*Ուիմբլդոն շոգենավի*» վերաբերյալ գործում դատարանը առիթ ունեցավ օգտագործելու մեկնաբանման այս կանոնը Վերսալի խաղաղության պայմանագրի դրույթներին Գերմանիայի գործողությունների համապատասխանության հարցը քննարկելիս: Այդ գործում Գերմանիան փակել էր Կիել ջրանցքը բրիտանական

New York, 2006. P. 171-207; Corten O. Are there gaps in the international law of secession? In the same treatise. P. 231-254.

⁵⁰ Klabbers J., *Virtuous Interpretation / Treaty Interpretation and the Vienna Convention on the Law of Treaties: 30 Years On*, ed. by M.Fitzmaurice, O.Elias, P.Merkouris, Martinus Nijhoff Publishers, Leiden / Boston, 2010. P. 35-36:

⁵¹ Linderfalk. U., *On the Interpretation of Treaties: The Modern International Law as Expressed in the 1969 Vienna Convention on the Law of Treaties*, Springer, Dordrecht, 2007. P. 302:

շոգենավի համար, որը զինամթերք էր տեղափոխում Պրուսիայի հետ պատերազմող Լեհաստան:

Վերսալի պայմանագրի 380 հոդվածն ամրագրում էր. «Կիել ջրանցքը ... պետք է ազատ և բաց լինի Գերմանիայի հետ խաղաղության մեջ գտնվող բոլոր ազգերի առևտրային և ռազմական նավերի համար՝ բացարձակ հավասարության պայմաններով»: 381 հոդվածը, սակայն, ամրագրում էր, որ ոչ մի «խոչընդոտ չպետք է ստեղծվի անձանց և նավերի տեղաշարժի համար՝ բացառությամբ այն սահմանափակումների, որոնք բխում են ոստիկանական, սահմանապահ, առողջապահական, ներգաղթը և արտագաղթը կանոնակարգող և արգելված ապրանքների ներմուծումն ու արտահանումը կարգավորող կանոններից»: Գերմանիան բրիտանական նավերի համար ջրանցքի փակումը փորձից արդարացնել 381 հոդվածի լույսի ներքո:

Դատարանը գտավ, սակայն, որ 381 հոդվածի բացառությունը խիստ սահմանափակ է, և եթե պայմանագիրը պատրաստելիս կողմերը ենթադրեին հնարավորություն փակելու ջրանցքը այնպիսի նկատառումներով, ինչպիսիք են ռազմամթերքի տեղափոխումը, ապա պայմանագրում նման դրույթ անպայման կամրագրվեր⁵²:

Միջազգային արդարադատության մշտական պալատի սույն եզրահանգումում կանոնից բացառությունները եղավ «դասը», մինչդեռ 381 հոդվածով ամրագրված կոնկրետ բացառությունները այդ դասի հստակ դրսևորումներ են, ուստի *a contrario* մեկնաբանության շնորհիվ կանոնի բացառությունները սահմանափակվեցին միայն հիշատակվածի շրջանակներում:

Երբ նույն տրամաբանությունը կիրառում ենք *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրի* «երաշխավորության դրույթի» նկատմամբ, ապա պետություններն ընդհանուր առմամբ հանդիսանում են դասը, մինչդեռ «ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հիման վրա» գործող պետությունները, որոնք «ունեն կառավարություն, որը ներկայացնում է տարածքին պատկանող ողջ ժողովուրդը՝ առանց ռասայական, կրոնական կամ մաշկի գույնի տարբերակման», դասի կոնկրետ

⁵² S.S. “Wimbledon”, Judgment of 17 August 1923, PCIJ Series A, No. 1, P. 23-24, տե՛ս նաև Railway Traffic between Lithuania and Poland (Railway Sector Landwarów-Kaisiadorys), Advisory Opinion of 15 October 1931, PCIJ Series. A/B, No. 42, Military and Paramilitary Activities in and against Nicaragua (Nicaragua v. USA), 1986 ICJ Reports 14, § 222:

դրսևորումն են: Ուստի երբ «երաշխավորության դրույթը» տրոհումից և քայքայումից պաշտպանում է ինքնիշխան և անկախ պետությունների տարածքային ամբողջականությունը կամ քաղաքական միասնությունը, այն խոսում է միայն վերոնշյալ տեսակի պետությունների մասին, այսինքն այն պետությունների, որոնք հարգում են ժողովուրդների ինքնորոշմանը իրավունքը:

Նույն եզրակացության ենք հանգում նաև *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրի* համակարգային ընթերցանության պարագայում: Այսպես, եթե «երաշխավորության դրույթը» կիրառվեր բոլոր պետությունների նկատմամբ՝ ապահովելով նրանց տարածքային ամբողջականության պահպանումն անկախ վերջիններիս՝ ազգային փոքրամասնությունների և առանձին տարածքների բնակչության նկատմամբ ունեցած վերաբերմունքից, ապա ինքնորոշման իրավունքի վերաբերյալ նախորդ դրույթները լիովին կիմաստագրվեին, քանի որ դա կնշանակեր, որ արտաքին ինքնորոշման իրավունքի իրականացումը, այսինքն՝ ինքնորոշման սկզբունքի լույսի ներքո անկախ պետականության ստեղծումը պարզապես կդառնար անհնարին:

Այսպես ակնհայտ է, որ 17-19 դդ.՝ գաղութացման գործընթացի տարիներին, խոշոր գաղութատեր պետությունները ձեռք էին բերել տիտղոս համապատասխան գաղութացված տարածքների նկատմամբ: Դա իր հերթին նշանակում է, որ եթե «երաշխավորության դրույթում» ամրագրված նորմը վերաբերեր բոլոր պետություններին, ապա գաղութարար տերությունները կպահպանեին իրենց տիտղոսը նաև գաղութացված տարածքների նկատմամբ: Արդյունքում Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի պետությունները երբեք չէին ստեղծվի:

Այս կապակցությամբ տեղին է հիշել Միջազգային իրավունքի հանձնաժողովի՝ պայմանագրերի իրավունքի վերաբերյալ կոնվենցիայի նախնական տեքստի կապակցությամբ մշակված պարզաբանումները, որոնց համաձայն՝ եթե առկա է փաստաթղթի երկու մեկնաբանություն, «որոնցից մեկը պայմանագրին տալիս է հնարավորություն ունենալու պատշաճ գործողություն, իսկ մյուսը՝ ոչ, ապա բարեխղճությունը և պայմանագրի օբյեկտն ու նպատակը պահանջում են ընդունել առաջին մեկնաբանությունը»⁵³:

⁵³ Draft Articles on the Law of Treaties with Commentaries, Yearbook of the International Law Commission, Vol. II (1966), P. 219:

Վերոնշյալ փաստաթղթերն անհրաժեշտ է մեկնաբանել նաև համապատասխան դատական պրակտիկայի լույսի ներքո: Այսպես, Կանադայի Գերագույն դատարանը, քննարկելով Քվեբեք նահանգի անջատման հնարավորության համապատասխանությունը Կանադայի սահմանադրական իրավունքին, ինչպես նաև միջազգային իրավունքին, նշել է. «Միջազգային իրավունքի ճանաչված աղբյուրները հաստատում են, որ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը սովորաբար իրականացվում է ներքին ինքնորոշման ճանապարհով, որի միջոցով ժողովուրդն ընտրում է իր քաղաքական, տնտեսական, հասարակական և մշակութային զարգացումը գոյություն ունեցող պետության շրջանակներում: Արտաքին ինքնորոշման (որը տվյալ դեպքում դրսևորվում է միակողմանի անջատման ճանապարհով) ծագում է միայն առավել ծայրահեղ իրավիճակներում և անգամ այդ դեպքում էլ՝ միայն հստակ ձևակերպված պայմաններում: Արտաքին ինքնորոշումը կարող է բնորոշվել որպես ... ժողովրդի կամքի հիման վրա ինքնիշխան և անկախ պետության հիմնադրում, այլ պետության հետ ասոցիացիա կամ ինտեգրացիա կամ ցանկացած այլ քաղաքական կարգավիճակի ձեռքբերում...»⁵⁴:

Նույն մոտեցումն է դրսևորել նաև ՌԴ սահմանադրական դատարանը Չեչնիայի Հանրապետության տարածքում սահմանադրական կարգի վերականգնմանն ուղղված ՌԴ Նախագահի մի շարք հրամանագրերի սահմանադրականության հարցը որոշելու վերաբերյալ իր 1995 թ. հուլիսի 31-ի որոշման մեջ⁵⁵: Մասնավորապես, ՌԴ սահմանադրական դատարանի որոշման մեջ նշվում է, որ *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրով* ամրագրված ժողովուրդների ինքնորոշման իրավունքը չի կարող

⁵⁴ Reference re *Secession of Quebec*. [1998] 2 S.C.R. 217, 1998 Canadian Legal Information Institute, Vol. 793 (S.C.C.), § 126:

⁵⁵ Решение Конституционного суда РФ № 10-П/1995 от 31.07.1995 по делу о проверке конституционности Указа Президента Российской Федерации от 30 ноября 1994 года № 2137 "О мероприятиях по восстановлению конституционной законности и правопорядка на территории Чеченской Республики", Указа Президента Российской Федерации от 9 декабря 1994 года № 2166 "О мерах по пресечению деятельности незаконных вооруженных формирований на территории Чеченской Республики и в зоне осетино-ингушского конфликта", постановления Правительства Российской Федерации от 9 декабря 1994 года № 1360 "Об обеспечении государственной безопасности и территориальной целостности Российской Федерации, законности, прав и свобод граждан, разоружения незаконных вооруженных формирований на территории Чеченской Республики и прилегающих к ней регионов Северного Кавказа", Указа Президента Российской Федерации от 2 ноября 1993 года № 1833 "Об основных положениях военной доктрины Российской Федерации":

իրականացվել ի վնաս այն պետությունների տարածքային ամբողջականության, որոնք իրենց գործողություններով հարգում են ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, և այնուհետև որոշումում փորձ է արվում հիմնավորելու, որ Ռուսաստանի դաշնային իշխանությունների կողմից բազմիցս ձեռնարկվել են Չեչնիայի իրավիճակի խաղաղ կարգավորման փորձեր, և որ ՌԴ Նախագահի վիճարկվող հրամանագրերն ուղղված են եղել տարածաշրջանում խաղաղության վերականգնմանը, անօրինական զինված խմբավորումների զինաթափմանը և ՌԴ տարածքային ամբողջականության պահպանմանը և ոչ թե Չեչնիայի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ոտնահարմանը:

Այս մոտեցումները կարելի է համեմատել նաև առաջին պարագրաֆում հիշատակված՝ Ազգերի լիգայի երկու հանձնաժողովների հաշվետվությունները Աալանդ կղզիների անջատման հիմնահարցի վերաբերյալ:

Սակայն այստեղ առաջանում է ևս մեկ հարց. Թ.Մասգրեյվը իրավացիորեն ընդգծում է՝ *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրի* նման մեկնաբանության դեպքում կարող է առաջանալ հակասություն *Գաղութային հռչակագրի* նկատմամբ, քանի որ այս երկու փաստաթղթերն էլ, ըստ էության մեկնաբանելով ՄԱԿ-ի կանոնադրությունը, տարբեր չափով են պաշտպանում տարածքային ամբողջականության սկզբունքը⁵⁶: Այսպես, ըստ *Գաղութային հռչակագրի*՝ ցանկացած ոտնձգություն՝ ուղղված տարածքային ամբողջականության դեմ, հակասում է ՄԱԿ-ի կանոնադրությանը, մինչդեռ *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիրը* պաշտպանում է միայն կոնկրետ՝ վերը նշված տեսակի պետությունների տարածքային ամբողջականությունը:

Այս՝ առաջին հայացքից բարդ հարցի լուծումն իրականում կարելի է գտնել երկու փաստաթղթերի համեմատական վերլուծության միջոցով: *Գաղութային հռչակագիրը*, իրականում խոսում է «յուրաքանչյուր **երկրի** (“country”) տարածքային ամբողջականության» մասին: Հատկանշական է նաև, որ «երկիր» եզրույթը հռչակագրի այլ հատվածներում չի օգտագործվում, սակայն «տարածքային ամբողջականություն» եզրույթը օգտագործվում է նաև *Հռչակագրի* վերջին պարբերությունում, որի համաձայն «բոլոր պետությունները ... կհարգեն բոլոր **ժողովուրդների** ինքնիշխան իրավունքները և նրանց

⁵⁶ Musgrave T.D. Self-Determination and National Minorities. Clarendon Press, Oxford, 1997. P. 182:

տարածքային ամբողջականությունը»: Իսկ ահա *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիրը* նշում է, որ «յուրաքանչյուր պետություն պետք է ձեռնպահ մնա ցանկացած գործողությունից, որն ուղղված կլինի ցանկացած այլ պետության կամ երկրի ազգային միասնության կամ տարածքային ամբողջականության դեմ»: Մյուս կողմից, իհարկե, երաշխավորության դրույթը խոսում է ինքնորոշման սկզբունքը հարգող պետությունների տարածքային ամբողջականության պահպանման մասին:

Այս համեմատությունը, հետևաբար, ցույց է տալիս, որ «պետություն» և «երկիր» հասկացությունները ունեն տարբեր բովանդակություն. այլ պարագայում «պետություն կամ երկիր» արտահայտությունը կլինեք անիմաստ: Ուստի եթե *Գաղութային հռչակագրում* օգտագործվող «երկիր» եզրույթը մեկնաբանենք որպես «ոչ ինքնակառավարվող տարածք» ՄԱԿ-ի կանոնադրության իմաստով (իսկ *Գաղութային հռչակագրի* վերջին կետը, որը խոսում է ժողովուրդների տարածքային ամբողջականության մասին այդ հնարավորությունը միանշանակ ընձեռում է), ապա ամեն ինչ դառնում է խիստ տրամաբանական:

Ուստի *Գաղութային հռչակագիրը* չի պաշտպանում մայր պետությունների տարածքային ամբողջականությունը, այլ պահանջում է, որ մայր պետությունները, անկախություն պարզնելով գաղութացված ժողովուրդներին, չտոնձգեն վերջիններիս տարածքային ամբողջականության դեմ: Իսկ ահա *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիրը*, պարունակելով նույն արգելքը, նաև սահմանում է այն պետությունների տարածքային ամբողջականությունը հարգելու պարտավորություն, որոնք ինքնորոշման սկզբունքը չեն խախտում: Այսինքն՝ այն սահմանում է ինքնորոշման սկզբունքի եզրը, որից շեղվելու հնարավորություն չպետք է ունենա:

Պոզիտիվ ինքնորոշման իրավունքի զարգացման գործում հսկայական դեր խաղացին նաև 1966թ. ՄԱԿ-ի շրջանակներում մշակված՝ *Քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագիրը* (այսուհետ նաև՝ ԹԲԻՄԴ)⁵⁷ և *Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագիրը*⁵⁸: Վերջիններիս նույնական բովանդակություն պարունակող 1-ին հոդված-

⁵⁷ International Covenant on Civil and Political Rights, UNTS, Vol. 999, P. 302, 16 December 1966:

⁵⁸ International Covenant on Economic, Social and Cultural Rights, UNTS, Vol. 993, P. 3, 16 December 1966:

ները մանրամասն անդրադառնում են ինքնորոշման իրավունքի մի քանի դրսևորումների՝ ներքին ինքնորոշման իրավունքին, ժողովուրդների՝ սեփական ռեսուրսների նկատմամբ իրավունքներին, ինչպես նաև՝ կախյալ ժողովուրդների իրավունքներին:

Դեռևս Միավորված ազգերի կազմակերպության գոյության առաջին տարիներին լուրջ էին քննարկումները Կանոնադրությունում ընդգրկված՝ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ դրույթների հետագա համակարգման անհրաժեշտության հարցի վերաբերյալ: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից հետո սկսվեցին աշխատանքներ վերջինում ամրագրված նորմերը պետությունների համար պարտադիր իրավաբանական ուժ ունեցող կոնվենցիայի տեսքով շարադրելու համար: Այդ փաստաթղթերի նախապատրաստման ընթացքում Արևմտյան պետություններն որդեգրել էին միայն փաստացի գործող նորմերի ամրապնդման քաղաքականություն, մինչդեռ Խորհրդային Միության մեկնաբանության համաձայն՝ ինքնորոշման իրավունքը մնացած բոլոր իրավունքների հիմքն էր, և հետևաբար միջազգային դաշնագրերը չեն կարող ինքնորոշման իրավունքի վերաբերյալ դրույթ չպարունակել:

Արևմտյան պետությունները լրջորեն հակադրվում էին սույն սկզբունքի ամրապնդմանը՝ նախ սեփական գաղութների պահպանման նկատառումով, ապա իրենց ներդրումները չկորցնելու մղումից դրդված: Նրանց կարծիքով, ինքնորոշումը եթե ամրագրվեր, ապա պետք է վերաբերեր ոչ միայն գաղութացված ժողովուրդներին, այլ նաև առանձին էթնիկ խմբերին:

ՔՔԻՄԴ 1-ին հոդվածի առաջին մասը սահմանում է. «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն որոշում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն հետամուտ են լինում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացմանը»:

Այս դրույթում մարմնավորված են ներքին ինքնորոշման իրավունքի պատմական զարգացման ընթացքում ծագած երկու հիմնական դրսևորումները: Նախ՝ ժողովուրդն «ազատորեն որոշում» է իր քաղաքական կարգավիճակը, այսինքն՝ ընտրում է իր օրենսդիր մարմինը, քաղաքական առաջնորդներին սեփական կամքով՝ առանց այդ առաջնորդների կողմից ճնշման և հարկադրանքի գործադրման⁵⁹: Այս տեսանկյունից

⁵⁹ Franck T.M. The Emerging Right to Democratic Governance... P. 53:

ինքնորոշման իրավունքը ՔՔԻՄԴ-ում շարադրված քաղաքացիական իրավունքների խտացված արտացոլումն է և երբեմն անվանվում է նաև քաղաքական ինքնորոշում⁶⁰: Միայն այն դեպքում, երբ հասարակության բոլոր անդամները օգտվում են հավաքների, միավորումներ ստեղծելու, ուղղակի կամ ընտրված ներկայացուցիչների միջոցով հանրային հարցերի լուծմանը մասնակցելու իրենց իրավունքներից, կարելի է խոսել ողջ ժողովրդի ներքին ինքնորոշման իրավունքի արդյունավետ կենսագործման մասին:

Քննարկվող դրույթի երկրորդ իմաստը ժողովրդի կամքի անկախությունն է արտաքին ճնշումից (այլ պետությունների կողմից): Այս տեսանկյունից ինքնորոշման իրավունքը հակակշիռն է այլ պետությունների գործերին չմիջամտելու միջազգային-իրավական սկզբունքի և որոշ առումով հոմանիշ նաև ժողովրդական ինքնիշխանության (այս հարցին առավել մանրամասն կանդրադառնանք երկրորդ գլխում):

Մի շարք հեղինակներ, մասնավորապես Կ. Դոեհրինգը, գտնում են, որ ինքնորոշման այս տարատեսակը կարող է սահմանափակվել, և որ հնարավոր է միջամտություն արտաքին աշխարհից այն դեպքերում, երբ միջամտող սուբյեկտն ունի միջազգային-իրավական պարտավորություն՝ պահպանելու կոնկրետ պետության որոշակի տեսակի պետական կառավարման ձև⁶¹: Որպես օրինակ է բերվում Լոնդոնի 1959 թ. երաշխավորության պայմանագիրը, որի համաձայն՝ Հունաստանը, Մեծ Բրիտանիան և Թուրքիան երաշխավորում էին Կիպրոսի տարածքային ամբողջականությունը և, բացի այդ պետք է կանխարգելեին վերջինիս մասնատումը, ինչպես նաև կցումը որևէ այլ պետության⁶²: Նույն Կ. Դոեհրինգի կարծիքով, երբ սուբյեկտը, միանալով նման միջազգային պայմանագրի, ինքնակամ հրաժարվում է ինքնորոշման իրավունքի որոշակի դրսևորումից (օրինակ՝ որոշում է, որ իրավասու չէ միանալու այլ պետության), դա արդեն ինքնորոշման իրավունքի ազատ տնօրինում է և չի հակասում միջազգային իրավունքին⁶³:

⁶⁰ Cassese A. Self-Determination of Peoples: A Legal Reappraisal... P. 53-54:

⁶¹ Doehring K. Self-Determination // The Charter of the United Nations: A Commentary, Vol. 1, Simma B. ed. Oxford University Press, New York, 2002. P. 56:

⁶² Treaty of Guarantee between the Republic of Cyprus and Greece, the United Kingdom and Turkey, 2 February 1959, հասանելի է http://www.kypros.org/Cyprus_Problem/treaty.html#B կայքում:

⁶³ Doehring K. Self-Determination. P. 58:

Նման մոտեցման հետ հնարավոր չէ համաձայնվել: Եթե 1959թ. նման պայմանագրի կնքումը հնարավոր էր, քանի որ դեռևս չէին ընդունվել այն բազմաթիվ միջազգային փաստաթղթերը, որոնք և ներկայումս կազմում են ինքնորոշման իրավունքի ամբողջական բովանդակությունը, ապա այսօր ցանկացած նման պայմանագիր կհամարվի առոչինչ *Պայմանագրային իրավունքի վերաբերյալ Վիեննայի կոնվենցիայի* 53-րդ հոդվածի ուժով, քանի որ կհակասի միջազգային իրավունքի *jus cogens* (իմպերատիվ) նորմին: Կ. Դոեհրինգի առաջարկած մոտեցումը կարելի է համեմատել մի այնպիսի իրավիճակի հետ, երբ պետությունը միանում է մի պայմանագրի, որով թույլ է տալիս պայմանագրի այլ կողմերին իր դեմ ուժ գործադրել և զավթել իր տարածքի մի մասը: Նման պայմանագիրը բնականաբար չէր ունենա իրավաբանական ուժ և կլիներ առոչինչ:

ՔՔԻՄԴ 1-ին հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Բոլոր ժողովուրդները իրենց կարիքների համար կարող են ազատորեն տնօրինել իրենց բնական հարստությունը՝ առանց վնասելու որևէ միջազգային պարտավորություն, որը ծագում է միջազգային տնտեսական համագործակցությունից՝ հիմնված փոխադարձ շահավետության սկզբունքի և միջազգային իրավունքի վրա: Ժողովուրդը ոչ մի դեպքում չի կարող զրկվել գոյատևման սեփական միջոցներից»:

Ինքնորոշման իրավունքի տվյալ դրսևորումը տրամաբանական հետևանքն է քաղաքական ինքնորոշման. եթե ժողովուրդն ազատ է ընտրելու սեփական իշխանությունները, ապա վերջիններս բնականաբար պետք է օգտագործեն պետության տարածքում գտնվող բնական ռեսուրսները ի շահ ժողովրդի կարիքների և վերջինիս կամքին համապատասխան⁶⁴: Այս նորմի զարգացման անհրաժեշտությունն ակնհայտ դարձավ արդեն ապագադրությամբ գործընթացի առաջին տարիներից սկսած, երբ նորանկախ պետություններն իրականում շարունակում էին էական տնտեսական կախվածության մեջ մնալ նախկին գաղութատերերից:

Դրա հետ մեկտեղ, իհարկե, ժողովրդի՝ սեփական բնական պաշարներից օգտվելու իրավունքը չպետք է հակասի տնտեսական համագործակցությանը վերաբերող միջազգային պայմանագրերի դրույթներին, ինչպես նաև հաշվի առնի օտարերկրյա ներդրողների սովորության իրավունքները:

⁶⁴ Ковалев А.А. Самоопределение и экономическая независимость народов. Международные отношения, Москва, 1988. С. 118-123:

Այս խնդիրներն արտացոլվել էին նաև Գլխավոր ասամբլեայի *Բնական ռեսուրսների նկատմամբ մշտական ինքնիշխանության վերաբերյալ հռչակագրում*⁶⁵, որը, ամրագրելով ժողովուրդների իրավունքները, դրա հետ մեկտեղ սահմանում է պարտավորություն ազգայնացման և էքսպրոպրիացիայի պարագայում սեփականատերերին տրամադրել պատշաճ փոխհատուցում և նշում, որ ներմուծումների վերաբերյալ պայմանագրերը պետք է ի կատար ածվեն ամենայն բարեխղճությամբ: Քննարկվող փաստաթուղթը որակվել է նաև սովորութային միջազգային իրավունքի բաղկացուցիչ մաս⁶⁶:

ՔՔԻՄԴ 1-ին հոդվածի երրորդ մասի համաձայն՝ «դաշնագրի անդամ պետությունները, ներառյալ նրանք, որոնք ունեն ոչ ինքնակառավարվող տարածքների և խնամակալության տարածքների կառավարման պարտավորություն, պետք է խթանեն ինքնորոշման իրավունքի իրականացումը և պետք է հարգեն այդ իրավունքը՝ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության դրույթներին համապատասխան»:

Այս դրույթը, փաստորեն, ստեղծում է պարտավորություններ բոլոր պետությունների համար՝ ուղղված ոչ միայն vis-à-vis իրենց կառավարման ներքո գտնվող ժողովուրդներին, այլ ընդհանրապես բոլոր ժողովուրդներին⁶⁷: Այսինքն՝ այն ստեղծում է ողջ միջազգային հանրությանն ուղղված *erga omnes* պարտավորություն⁶⁸:

Այս հանգամանքը մի քանի անգամ վերահաստատել է Միջազգային դատարանը: Այսպես՝ «*Արևելյան Թիմորի*» վերաբերյալ գործում դատարանը նշեց, որ ինքնորոշման իրավունքից բխող պարտավորությունների *erga omnes* բնույթն անհերքելի է⁶⁹:

«*Օկուպացված պաղեստինյան տարածքում պատի կառուցման իրավական հետևանքների*» վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունում Միջազգային դատարանը վերահաստատեց այս մոտեցումը: Անդրադառնալով Իսրայելի իշխանու-

⁶⁵ Permanent Sovereignty over Natural Resources, GA resolution 1803 (XVII), U.N. Doc. A/5217, 14 December 1962.

⁶⁶ Award on the Merits in Dispute between Texaco Overseas Petroleum Company/California Asiatic Oil Company and the Government of the Libyan Arab Republic (Compensation for Nationalized Property) Judicial and Similar Proceedings: International Arbitral Tribunal [1978] // International Legal Materials, Vol. 17 (1978), § 87:

⁶⁷ Thornberry P. Self-Determination, Minorities, Human Rights: A Review of International Instruments // International and Comparative Law Review, Vol. 38 (1989). P. 879:

⁶⁸ Barcelona Traction, Light and Power Company, Limited (Belgium v. Spain), Second Phase, ICJ Reports 3 (1970), P. 32, § 34.

⁶⁹ East Timor (Portugal v. Australia), ICJ Reports 90 (1995), P. 102, § 29:

թյունների կողմից Պաղեստինի երկայնքով պատնեշ կառուցելու իրավաչափությանը՝ դատարանը նշեց, որ «բոլոր պետությունների պարտավորությունն է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը և միջազգային իրավունքը հարգելիս հետևել, որ անհապաղ վերջ տրվի Պաղեստինի ժողովրդի կողմից ինքնորոշման իրավունքն իրականացնելու ցանկացած խոչընդոտի, որը բխում է պատի կառուցումից»⁷⁰:

Դաշնագրի նախապատրաստական աշխատանքները վկայում են նաև այն մասին, որ «ժողովուրդ» եզրույթն այս ձևակերպման մեջ չի սահմանափակված միայն գաղութացված տարածաշրջաններով: Այսպես, Հնդկաստանը արեց նման նեղ մեկնաբանություն առաջադրող հայտարարություն Դաշնագրի տեքստի քննարկման ընթացքում, ըստ որի՝ դաշնագիրը պետք է վերաբերեր միայն գաղութացված ժողովուրդներին, սակայն քննարկումներին մասնակցող պետությունների մեծ մասը հակադրվեց Հնդկաստանի առաջարկին, ինչն ակնհայտորեն վկայում է, որ «ժողովուրդ» եզրույթը Դաշնագրում պետք է ընկալվի լայն իմաստով:

Ընդհանրացնելով վերը նշվածը՝ մենք տեսնում ենք, որ 20-րդ դարի ընթացքում Ազգերի լիգայի, իսկ այնուհետև Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում տեղի ունեցած զարգացումների շնորհիվ ինքնորոշումը կայացել է որպես միջազգային-իրավական հստակ սկզբունք, որը ստանում է նյութական դրսևորում նաև կոնկրետ վարքագծի կանոնների տեսքով՝ ներքին ինքնորոշման և արտաքին ինքնորոշման:

Ներքին ինքնորոշումն ունի երեք դրսևորում: Առաջինի համաձայն՝ ժողովուրդը, որն իրեն արդեն դրսևորել է պետականության տեսքով, ազատ է ընտրելու պետական կառավարման այն ձևը, որը կցանկանա: Այն նաև ազատ է տնօրինելու սեփական բնական ռեսուրսները՝ ծառայեցնելով դրանք իր շահերին: Ներքին ինքնորոշման երկրորդ դրսևորումը արդեն կայացած պետության ազատությունն է՝ այն է՝ զերծ մնալ արտաքին ճնշումից և անկախ տնօրինել սեփական ճակատագիրը:

Մյուս իմաստով ներքին ինքնորոշումը սերտորեն փոխկապված է ազգային փոքրամասնությունների իրավունքների հետ, քանի որ իրենից ներկայացնում է առանձին էթնիկ խմբերին պատկանող իրավունքը՝ պահանջելու հատուկ վերաբերմունք և

⁷⁰ Legal Consequences of the Construction of a Wall in the Occupied Palestinian Territory, Advisory Opinion, ICJ Reports 136 (2004). P. 200, § 159:

կարգավիճակ մայր պետության կազմում: Այս իրավունքի հիման վրա խումբը կարող է հրաժարվել հիմնական էթնիկ խմբի հետ ասիմիլյացիայից և պահպանել իր մշակութային, կրոնական և այլ առանձնահատկությունները: Գլխավոր ասամբլեայի բանաձևերի վերլուծության հիման վրա մենք հիմնավորեցինք, որ ներքին ինքնորոշման երրորդ և առաջին դրսևորումների ոտնահարումը կարող է հիմք ծառայել արտաքին ինքնորոշման իրավունքն իրականացնելու համար:

Արտաքին ինքնորոշումն իր հերթին ունի երկու դրսևորում: Առաջինը՝ բոլոր գաղութացված ժողովուրդների իրավունքն է ստեղծել անկախ պետականություն: Այս իրավունքն արդեն գրեթե կորցրել է իր կիրառական նշանակությունը: Երկրորդ դրսևորումը պետության մեկ հատվածի իրավունքն է՝ դիմելու անջատման (սեցեսիայի) սեփական իրավունքների պաշտպանության և գոյատևման նկատառումով: Այն, փաստորեն, նաև իրավունքների պաշտպանության երաշխիք և հակազդեցության լծակ⁷¹, որը նպատակ է հետապնդում պաշտպանել ազգային փոքրամասնություններին մայր պետության հավանական ոտնձգությունն:

Այսպիսով ՄԱԿ-ի կանոնադրությունը, Գլխավոր ասամբլեայի հռչակագրերը, ՔՔԻՄԴ-ն ստեղծում են այն պոզիտիվ իրավական բազան, որը կազմում է ինքնորոշման սկզբունքի և իրավունքի բովանդակությունը, որի՝ միջազգային իրավունքի համակարգում տեղին ու դերին և իրացման առանձին հիմնահարցերին մանրամասն կանդրադառնանք հաջորդ գլուխներում:

⁷¹ Crawford J. *Creation of States in International Law*. 2nd ed., Clarendon Press, Oxford 2006. P. 126; Franck T. *Postmodern Tribalism and the Right to Secession // Peoples and Minorities in International Law / Ed. by Brölmann C. et al. Martinus Nijhoff Publishers, Dordrecht-Boston-London, 1993. P. 13-14.*

ԳԼՈՒԽ 2. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՄԿՋՐՈՒՆՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԿՋՐՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

§1. Միջազգային իրավունքի սկզբունքների հասկացությունն ու դրանց համակարգային փոխկապվածությունը

Միջազգային իրավունքի մի շարք արևմտյան հեղինակների աշխատություններում ժողովուրդների ինքնորոշումը ներկայացվում է միայն որպես վարքագծի կանոն և ոչ թե սկզբունք. համաձայն՝ այդ հեղինակների ինքնորոշումը, պարզապես, ապագադրությամբ գործընթացը կարգավորող ինստիտուտ է⁷², այսինքն ինքնորոշման իրավունքը 21-րդ դարում արդեն կորցրել է իր իմաստը: Այս գլխում մենք ցույց կտանք այդ տեսության թերի կողմերը, մասնավորապես՝ կներկայացնենք ինքնորոշման սկզբունքի շարունակականությունը և կհիմնավորեն դրա կապերը միջազգային իրավունքի մյուս սկզբունքների հետ:

Այս նպատակով անհրաժեշտ է նախ անդրադառնալ միջազգային իրավունքի սկզբունք հասկացությանը: ՄԱԿ-ի միջազգային դատարանի կանոնադրության 38-րդ հոդվածը միջազգային իրավունքի աղբյուրների թվում հիշատակում է *«քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի համընդհանուր սկզբունքները»*: Իրականում սակայն, միջազգային իրավունքում տվյալ եզրույթն ունի երկու նշանակություն: Առաջինը պարունակում է այն տրամաբանական կանոնները, որոնք կարգավորում են յուրաքանչյուր իրավական համակարգում առանձին նորմերի միջև գոյություն ունեցող հակասությունները, կոլիզիաները, նոր և հին նորմերի հարաբերակցության հիմնահարցերը: Այդպիսի սկզբունքներից է, օրինակ, *lex specialis derogate lege generalis* սկզբունքը (հատուկ նորմը սահմանափակում է ընդհանուր նորմի գործողությունը) կամ *lex posterior derogate lege priori* սկզբունքը (նոր նորմը սահմանափակում է հին նորմի գործողությունը)⁷³:

⁷² Shaw M.N. Peoples, Territorialism and Boundaries // European Journal of International Law, Vol. 3 (1997). P. 479-480:

⁷³ Malanczuk P. Akehurst's Modern Introduction to International Law. 7th revised ed., Routledge, London-New York 1997. P. 48-49.

Մյուս իմաստով միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներն միջազգային իրավակարգն արտացոլող առավել խտացրած հիմնարար չափորոշիչներ են, որոնք ցույց են տալիս միջազգային հարաբերությունների կարգավորման ուղղությունները և լրացնում իրավական բացերն այն դեպքերում, երբ կոնկրետ հասարակական հարաբերությունները կարգավորող սովորութային կամ պայմանագրային նորմերը բացակայում են⁷⁴: Միջազգային իրավունքի պարագայում, որն օրենսդիրի բացակայության պայմաններում առանձին պետությունների ներպետական օրենսդրությունների համեմատ ավելի «թերզարգացած» համակարգ է համարվում, իրավունքի ընդհանուր սկզբունքների կարևորությունն ավելի է մեծանում: Հետևաբար դրանք զուտ իրավական ֆիկցիա չեն, այլ ունեն կոնկրետ գործողություն և նշանակություն: Ըստ Յ. Բրաունլիի՝ դրանք վերացարկված կերպով արտացոլում են տասնամյակների (իսկ մի շարք սկզբունքների դեպքում՝ դարերի) ընթացքում ձևավորված պետությունների պրակտիկան: Սակայն, բխելով պրակտիկայից, դրանք միջազգային իրավակարգի համար այնքան հիմնարար նշանակություն ունեն, որ այժմ կարող են գոյություն ունենալ պրակտիկայից անկախ⁷⁵: Այս դատողությունը կարելի է համեմատել բնական իրավունքի վերաբերող տեսությունների հետ: Հենց այս իմաստով է «սկզբունք» բառն օգտագործվում սույն ատենախոսությունում:

Այսօր քաղաքագիտության և անգամ իրավաբանական գիտության ոլորտներում հաճախ են հնչում դատողություններ ժողովուրդների ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքների հակասության մասին: Նման դիրքորոշումները երբեմն չարաշահվում են և անգամ առանձին պետություններ՝ իրենց պետական քաղաքականության մարտավարության մաս դարձրել: Սույն գլխում մենք կհերքենք միջազգային իրավունքի սկզբունքների միջև հակասությունների վերաբերյալ արհեստական տեսությունների հիմնավորվածությունը, ցույց կտանք ինքնորոշման սկզբունքի տեղը միջազգային իրավունքի սկզբունքների համակարգում, կքննարկենք նրա հարաբերակցությունը միջազգային իրավունքի այլ սկզբունքների հետ:

⁷⁴ Thirlway H. The Sources of International Law // International Law, Evans D.E. ed. Oxford University Press, Oxford – New York, 2006, 2nd ed. P. 127-128:

⁷⁵ Brownlie I. Principles of Public International Law. 6th ed., Oxford University Press, Oxford – New York, 2003. P. 14-15:

Ըստ ամերիկյան իրավագետ Ռ. Դուորկինի՝ իրավական սկզբունքների և վարքագծի կանոնների (սույն պարագրաֆում այսուհետ՝ կանոն) միջև տարբերությունը դրանց գործողության տրամաբանության մեջ է⁷⁶: Կանոնները գործում են «ամեն ինչ կամ ոչինչ» մեթոդի համաձայն. եթե նորմի սահմանած փաստական հանգամանքներն առկա են, ապա այն տալիս է հասարակական հարաբերությունների լուծումը, իսկ եթե ոչ, ապա նորմը պարզապես չի ստանում ոչ մի կիրառություն:

Սկզբունքները, սակայն, այդ կերպ չեն գործում: Սկզբունքները չեն ամրագրում իրավական հետևանքներ, որոնք պետք է անպայման և մեխանիկորեն վրա հասնեն, եթե առկա են դրանց իրականացման համար անհրաժեշտ նախապայմանները: Փոխարենը սկզբունքները հասարակական հարաբերությունների կարգավորումը տանում են որևիցե կոնկրետ ուղղությամբ, ցույց են տալիս դրանց կարգավորման վեկտորը, սակայն ոչ բացարձակ կերպով և շարունակում են գոյություն ունենալ հասարակական հարաբերություններում անգամ կիրառվելու դեպքում:

Այս տարբերությունը ցայտուն կերպով ընդգծել է նաև Ջ. Ֆիցմորիսը, որի խոսքերով՝ կանոնները պատասխանում են «ի՞նչ» հարցին, մինչդեռ սկզբունքները պատասխանում են «ինչո՞ւ» հարցին⁷⁷: Հետևաբար, սկզբունքները չեն առաջարկում կոնկրետ լուծում, այլ միայն տրամադրում են արքսիոլոգիական հիմք յուրաքանչյուր կոնկրետ հասարակական հարաբերության կարգավորման համար: Նույն ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը կարող է դրսևորվել բազմաթիվ կանոնների տեսքով, ինչպիսիք են՝ գաղութացված ժողովուրդների անկախ պետականություն ստեղծելու իրավունքը, ժողովրդի կամքը հանրաքվեի միջոցով արտահայտելու իրավունքը, պետությունների՝ ինքնորոշման իրավունքը հարգելու *erga omnes* պարտավորությունը, ժողովրդի՝ սեփական ռեսուրսներն օգտագործելու իրավունքը, արտաքին ազդեցությունից անկախ լինելու իրավունքը, առանձին էթնիկ խմբերի ինքնավարության հնարավորությունը և այլն:

Բացի այդ, սկզբունքներն ունեն այսպես կոչված «ծանրության բևեռ»⁷⁸: Հետևաբար, երբ բախվում են երկու կամ ավելի սկզբունքներ, վեճը լուծողը պետք է համեմատական

⁷⁶ Dworkin R.M., *Taking Rights Seriously*, Harvard University Press, Cambridge, 1978. P. 22-27:

⁷⁷ Fitzmaurice G. *The General Principles of International Law Considered from the Standpoint of the Rule of Law // Collected Courses of the Hague Academy of International Law, Vol. 92 (1957), P. 7:*

⁷⁸ Utz S., *Rules, Principles, Algorithms and the Description of Legal Systems // Ratio Juris, Vol. 5 (1992), P. 29-32:*

վերլուծության ենթարկի յուրաքանչյուր սկզբունքի կշիռն ու նշանակությունը կոնկրետ հասարակական հարաբերությունների կարգավորման տեսակետից: Այսպիսով՝ սկզբունքները չեն կիրառվում մեխանիկորեն և այդքան հստակ ու միանշանակ կարգավորում չեն առաջարկում, ինչպես նորմերը:

Այս առումով տարածքային ամբողջականության և ժողովուրդների ինքնորոշման ենթադրյալ հակասությունն իրականում արհեստական է: Մեկը պահանջում է առավելագույնս պահպանել պետության տարածքը, մյուսը՝ ժողովուրդներին տալիս է սեփական կառավարումը իրականացնելու հնարավորություն կա՛մ մայր պետության կազմում (այսինքն՝ պահպանելով վերջինիս տարածքային ամբողջականությունը), կա՛մ առանձին պետության տեսքով (այսինքն՝ տրոհելով մայր պետության տարածքային ամբողջականությունը): Թե այս սկզբունքներից որը պետք է գերակայի, կախված է կոնկրետ իրավիճակից, ինչպես նաև միջազգային իրավունքի այլ սկզբունքների և նորմերի միջամտությունից:

Այս պարագրաֆում կանդրադառնանք նաև պետությունների ինքնիշխան (սուվերեն) իրավահավասարության սկզբունքի հետ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի հարաբերակցության հիմնահարցին:

Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիրը սահմանում է, որ բոլոր պետություններն «օգտվում են ինքնիշխան հավասարությունից: Նրանք ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ և հանդիսանում են միջազգային հանրության հավասար անդամներ՝ անկախ տնտեսական, սոցիալական, քաղաքական կամ այլ բնույթի տարբերություններից»: Սույն բնորոշումը, սակայն, լիովին չի արտացոլում «ինքնիշխանություն» հասկացության բուն իմաստը, ուստի դրա բովանդակությունը կփորձենք վերլուծել ստորև: Նախ և առաջ անհրաժեշտ է նշել, որ XX դարի առաջին կեսի միջազգային իրավունքի հանրահայտ մասնագետներից Հ. Կելսենը գտնում էր, որ ՄԱԿ-ի կանոնադրությունում ամրագրված ժողովուրդների ինքնորոշման իրավունքն իրականում հոմանիշ է պետությունների ինքնիշխան հավասարության⁷⁹: Ըստ Կելսենի, երբ ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդվածի 2-րդ մասում խոսվում է ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի հիման վրա ազգերի միջև

⁷⁹ Kelsen H. The Law of the United Nations: A Critical Analysis of Its Fundamental Problems, Stevens, London, 1950, P. 52.

բարեկամական հարաբերությունների զարգացման մասին, «ազգ» և «ժողովուրդ» եզրույթներն իրականում օգտագործվում են որպես հավասարազոր հասկացություններ: Հետևաբար՝ վերոնշյալ դրույթում ժողովուրդների իրավահավասարությունը, ըստ Կելսենի, ոչ այլ ինչ է, քան պետությունների ինքնիշխան հավասարություն, իսկ ինքնորոշումը՝ այլ պետությունների միջամտությունից զերծ մնալու և սեփական անկախությունը պաշտպանելու հնարավորություն:

Այս մեկնաբանությունը, սակայն, հասկանալի պատճառներով հաշվի չի առնում XX դարի 60-ական և 70-ական թվականների միջազգային իրավունքի ոլորտում տեղի ունեցած զարգացումները, որոնք ապագադրությամբ և բազմաթիվ նոր պետությունների ստեղծման շնորհիվ նոր իմաստ և շունչ հաղորդեցին ժողովուրդների ինքնորոշման իրավունքին:

Մյուս կողմից, սակայն, տվյալ վերլուծությունը, արտահայտելով ներքին ինքնորոշման իրավունքի դրսևորումներից մեկը, արդիական է նաև այսօր: Կելսենի մեկնաբանությունը, փաստորեն, մեկ միասնական շրթայի մեջ է առնում (ներքին) ինքնորոշման, ինքնիշխան հավասարության, այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու և ուժի գործադրման արգելքի սկզբունքները՝ ընդգծելով նաև միջազգային իրավունքի սկզբունքների համակարգային միասնությունը:

Այս հարաբերակցությունն առավել պատկերավոր ըմբռնելու նպատակով անդրադառնանք ինքնիշխան հավասարության սկզբունքի բովանդակությանը միջազգային իրավունքում: 1928 թ. ապրիլի 4-ին ԱՄՆ և Նիդերլանդների միջև Միանգաս կղզու նկատմամբ տիտղոսի կապակցությամբ Արբիտրաժային մշտական պալատի կողմից կայացրած որոշման համաձայն՝ «... պետության սուվերենությունը երկրի մակերեսի որևէ հատվածի նկատմամբ իրավական նախապայմանն է այդ հատվածը պետության տարածք համարելու համար ... Ինքնիշխանությունը պետությունների միջև հարաբերություններում նշանակում է անկախություն: Անկախությունը երկրի որևէ հատվածի նկատմամբ իրավունքն է իրականացնել պետական գործառույթներ՝ ի բացառումն ցանկացած այլ պետության»⁸⁰:

⁸⁰ Island of Palmas (Miangas) (USA v. The Netherlands), 1928, UN Reports on International Arbitral Awards, Vol. 2, P. 838:

Այսպիսով, վերոնշյալ դատական գործում ինքնիշխանությունը հավասարեցվում էր պետության անկախությանը: Սակայն դա ինքնիշխանության հասկացության առավել պարզ ընկալումն է:

Միայն երեք տարի անց Միջազգային արդարադատության մշտական պալատը «Գերմանիայի և Ավստրիայի միջև մաքսային ռեժիմի վերաբերյալ» իր 1931 թ. սեպտեմբերի 5-ի խորհրդատվական եզրակացությունում⁸¹, մեկնաբանելով 1919 թ. Սեպտեմբերի 10-ի Սեն-Շերմենի խաղաղության պայմանագրի դրույթները, որոնք անդրադառնում էին Ավստրիայի ինքնիշխանությանը, նշել է, որ պայմանագիրն ըստ էության ամրագրում է Ավստրիայի ինքնուրույն պետականության գոյությունը՝ բոլոր տնտեսական, քաղաքական, ֆինանսական կամ որևէ այլ հարցերում անկախ որոշումներ կայացնելու իրավունքով: Եվ հետևաբար Ավստրիայի անկախությունը կոտնահարվեր յուրաքանչյուր դեպքում, երբ կխախտվեր Ավստրիայի՝ անկախ որոշումներ կայացնելու իրավունքը: Ավստրիայի անկախությունն ըստ Դատարանի կանհետանար, եթե «... նրա ինքնիշխան կամքը ենթարկվեր այլ Տերության կամ վերջիններիս խմբի կամքին կամ փոխարինվեր այդ կամքով»:

Միջազգային իրավունքի տեսությունում առաջարկվել է ինքնիշխանության հետևյալ բնորոշումը. «Ինքնիշխանությունն անկախ պետականության անօտարելի իրավաբանական հատկությունն է, որը մարմնավորում է վերջինիս քաղաքական-իրավական ինքնուրույնությունը, պատասխանատվությունը և արժեքը՝ որպես միջազգային իրավունքի առաջնային սուբյեկտ. այն անհրաժեշտ է պետական իշխանության բացարձակ գերակայության համար և ենթադրում է **այլ պետության իշխանությանը չենթարկվելը**, այն առաջանում և անհետանում է անկախ պետականության՝ որպես միասնական հասարակական օրգանիզմի կարգավիճակի կամավոր փոփոխության արդյունքում, պայմանավորված է պետությունների իրավահավասարությամբ և ընկած է ժամանակակից միջազգային իրավունքի հիմքում»⁸²:

Հետևաբար, ինքնիշխանությունը թեև ենթադրում է պետության անկախությունը *de*

⁸¹ Customs Regime between Germany and Austria, Advisory Opinion, PCIJ Series A/B (1931), No. 41, P. 45-46:

⁸² Моисеев А.А. Суверенитет государства в международном праве. Восток-Запад, Москва, 2011. С. 68:

jure, սակայն այն միաժամանակ ավելի լայն հասկացություն է, քան անկախությունը, քանի որ այն ներառում է նաև պետությունների գործողությունների և որոշումների *de facto* անկախությունը այլ պետությունների ճնշումից⁸³:

Ակնհայտ է, որ նման բովանդակություն ունի նաև ինքնորոշման սկզբունքից բխող ներքին ինքնորոշման իրավունքի դրսևորումներից մեկը: Այսպես, *Քաղաքական և քաղաքացիական իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագրի* 1-ին հոդվածը սահմանում է. «*Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն որոշում են իրենց քաղաքական կարգավիճակը, ազատորեն ձեռնամուխ լինում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացմանը*»: Միջազգային իրավունքի մի շարք ակնավոր հեղինակների կողմից առաջարկված մեկնաբանության համաձայն՝ վերոնշյալ հոդվածում «*ազատորեն*» եզրույթի պարբերական կիրառումն ըստ էության շեշտադրում է արդեն պետություն ստեղծած ժողովուրդների իրավունքը՝ գոյատևելու առանց արտաքին ճնշման կամ միջամտության⁸⁴: Հետևաբար, ինքնորոշման իրավունքի սույն բովանդակությունը փաստորեն նույնական է պետության ինքնիշխանությանը:

Սա դառնում է առավել ակնառու, երբ *Քաղաքական և քաղաքացիական իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագրի* համեմատում ենք և *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրի* տեքստերը: Վերջինս սահմանում է, որ ինքնիշխան հավասարության սկզբունքը, ի թիվս այլոց, ենթադրում յուրաքանչյուր պետության իրավունքը՝ «*ազատորեն ընտրելու և զարգացնելու իր քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային համակարգերը*»: Այս ձևակերպումը գրեթե նույնական է *Դաշնագրի* 1-ին հոդվածում զետեղված ձևակերպմանը՝ այն տարբերությամբ, որ մի դեպքում օգտագործվում է «*ժողովուրդ*» սուբյեկտը, իսկ մյուս դեպքում՝ «*պետություն*»:

Սույն գաղափարը ավելի ակնառու դառնում է, երբ մենք ուսումնասիրում ենք ինքնորոշման սկզբունքի զարգացումը XX դարի առաջին կեսի ընթացքում: Մասնավորապես, 1941 թ. Լոնդոնում տեղի ունեցած դաշնակիցների խորհրդածողովի

⁸³ Korowicz M.S. Some Present Aspects of Sovereignty in International Law // Collected Courses of the Hague Academy of International Law, Vol. 102 (1961), P. 10:

⁸⁴ Տե՛ս օրինակ՝ Cassese A. Self-Determination of Peoples: A Legal Reappraisal, Cambridge University Press, 1995, P. 55:

ընթացքում ԽՍՀՄ ներկայացրեց հետևյալ բովանդակությամբ հռչակագիր. «Խորհրդային Միությունն իր արտաքին հարաբերություններում առաջնորդվել և առաջնորդվում է ազգերի ինքնորոշման սկզբունքով... Խորհրդային Միությունը ամենայն վճռականությամբ և հետևողականությամբ շարունակաբար հանդես է գալիս ժողովուրդների ինքնիշխան իրավունքների բոլոր խախտումների դեմ, ագրեսիայի և ագրեսորների դեմ, ագրեսիվ պետությունների՝ ժողովուրդներին սեփական կամքը պարտադրելու և պատերազմի մեջ ներգրավելու բոլոր և ցանկացած փորձերի դեմ»⁸⁵:

Հատկանշական են վերոնշյալ հռչակագրում տեղ գտած բառակապակցությունները. «ազգերի ինքնորոշում», «ժողովուրդների ինքնիշխան իրավունքներ» եզրույթներն օգտագործվում են «ժողովուրդների ինքնորոշում» և «պետությունների ինքնիշխան իրավունքներ» եզրույթների փոխարեն՝ հստակորեն ընդգծելով ժողովուրդների ինքնորոշման և պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքների փոխկապվածությունը կամ անգամ նույնականացումը (այդ մասին ավելի մանրամասն տե՛ս ատենախոսության առաջին գլխում):

Մյուս կողմից՝ պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքի իրագործումը հնարավոր է դառնում միայն անկախ պետականության ստեղծման, այսինքն՝ արտաքին ինքնորոշման պահից, և հետևաբար կարելի է ասել, որ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքն ակունքն է պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքի, կամ որ՝ վերջինս բխում է առաջինից⁸⁶:

Հաշվի առնելով այս բազմաթիվ փոխադարձ կապերը՝ կարելի է ասել, որ Կելսենի՝ XX դարի սկզբում ինքնորոշման իրավունքի և սուվերենության նույնաբովանդակ լինելու վերաբերյալ առաջարկած ձևակերպումը որոշ շտկումներով գոյության իրավունք ունի նաև այսօր:

Միջազգային իրավունքի սկզբունքների միջև փոխադարձ կախվածության և փոխկապվածության վերաբերյալ վերլուծությունները կարելի է զարգացնել: Ինչպես

⁸⁵ Струаһи һаа́мар տե՛ս՝ Тункин Г. И. Теория международного права. Под общей редакцией Л. Н. Шестакова. Зерцало, Москва, 2000. С. 52:

⁸⁶ Карапетян Л.М. Федеративное государство и правовой статус народов. Федерализм. Суверенитет. Национальные меньшинства. Самоопределение. Манускрипт, Москва, 1996. С. 86-98: Территориальная целостность. Конфликты Anghie A. Imperialism, Sovereignty and the Making of International Law. Cambridge University Press, Cambridge – New York – Melbourne, 2004. P. 196:

արդեն նշվեց, ինքնիշխան հավասարության սկզբունքի և ներքին ինքնորոշման իրավունքից բխող նորմերից մեկը պետությունների՝ արտաքին ազդեցությունից անկախ լինելու և սեփական կամքով (իրավունքի պահանջների շրջանակներում) գործելու իրավունքն է: Այս առումով ակնհայտ է դառնում ինքնիշխան հավասարության սկզբունքի և պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքների փոխադարձ կապվածությունը. դրանք ըստ էության մեկ միասնական ամբողջություն են: Մեկը սահմանում է պետությունների իրավունքը՝ զերծ մնալ արտաքին միջամտությունից, մյուսը՝ պետության պարտավորությունը՝ չմիջամտել այլ պետությունների ներքին գործերին:

Մյուս կողմից՝ սուվերենությունը տարածքային է և պահպանում է պետության սուվերենությունը իրեն պատկանող տարածքի վրա, այստեղից էլ կապը տարածքային ամբողջականության և ինքնիշխանության սկզբունքների միջև:

Արդյունքում ստացվում է միջազգային իրավունքի մի շարք սկզբունքների պատճառահետևանքային փոխկապվածության շղթա՝

- 1) արտաքին ինքնորոշման սկզբունքի շնորհիվ ժողովուրդները ստեղծում են ինքնիշխան պետություններ,
- 2) ինքնիշխան հավասարության սկզբունքը, որն ըստ էության բովանդակային առումով գրեթե նույնական է ներքին ինքնորոշման իրավունքին, պաշտպանում է արդեն կայացած պետությունները արտաքին ճնշումից և ազդեցությունից,
- 3) պետությունների գործերին չմիջամտելու սկզբունքը սահմանում է պետությունների պարտավորությունը՝ ճնշում չգործադրել այլ ինքնիշխան սուբյեկտների նկատմամբ,
- 4) նույն նպատակին է ծառայում նաև ուժի գործադրումն արգելող սկզբունքը, որը պաշտպանում է պետությունների տարածքային ամբողջականությունը, ինչպես նաև արգելում է ուժի գործադրումն ինքնորոշման համար պայքարող ժողովուրդների դեմ,
- 5) պետությունների պաշտպանվածությունն արտաքին ներգործությունից տարածքային է և պաշտպանում է պետություններին միայն նրանց սուվերեն

տարածքի վրա՝ իրենց տարածքային ամբողջականության շրջանակներում (այսինքն՝ տարածքային ամբողջականության սկզբունքը պաշտպանում է ինքնորոշման շնորհիվ ստեղծված սուբյեկտներին արտաքին ճնշումից, բայց ոչ ներքին անջատողական շարժումներից):

Ուստի ակնհայտ է դառնում, որ անգամ տարածքային ամբողջականության և ինքնորոշման սկզբունքները ոչ թե հակասում են միմյանց, այլ, ընդհակառակը, նպաստում, աջակցում են միմյանց, քանի որ գտնվում են միևնույն շղթայի տարբեր եզրերում և անխուսափելիորեն կրկին հասվում են:

Տարածքային ամբողջականության և ինքնորոշման սկզբունքների այսպես կոչված «հակասության» վերաբերյալ բոլոր տեսությունների տրամաբանական ավարտը դրվեց ՄԱԿ-ի միջազգային դատարանի կողմից «Միջազգային իրավունքի նորմերին Կոսովոյի անկախության միակողմ հռչակագրի համապատասխանության» վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունում, որում Դատարանը պարզաբանեց, որ տարածքային ամբողջականության սկզբունքը գործում է միայն միջպետական հարթությունում⁸⁷: Հաշվի առնելով, որ ինքնորոշման սկզբունքը գործում է պետություն-պետականության համար պայքարող ժողովուրդ հարթությունում՝ ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքները տեսականորեն պարզապես չեն կարող հակասել:

Ավելին, տարածքային ամբողջականության սկզբունքը գերազանցապես գործում է պետությունների միջև ուժի գործադրման համատեքստում, ինչն անմիջականորեն բխում է համապատասխան միջազգային պայմանագրերից և փաստաթղթերից⁸⁸:

Մի շարք հեղինակների կողմից փորձ է արվել ընդարձակել տարածքային ամբողջականության սկզբունքի բովանդակությունը⁸⁹՝ նույնականացնելով այն

⁸⁷ Accordance with International Law of Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo, ICJ General List 141 (2010). § 80:

⁸⁸ Տե՛ս օրինակ Zacher M.W. The Territorial Integrity Norm: International Boundaries and the Use of Force // International Organizations, Vol. 55 (2001). P. 216-221: Геворгян Л.С. Актуальные Проблемы международно-правового регулирования территориальных споров. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, ЕГУ, Ереван, 2011. С. 67-68:

⁸⁹ Hensel P.R., Allison M.E., Khanani A. Territorial Integrity Treaties, Uti Possidetis, and Armed Conflict over Territory. Paper presented at the 2006 Shambaugh Conference “Building Synergies: Institutions and Cooperation in World Politics”, University of Iowa, 13 October 2006: Հասանելի է <http://www.saramitchell.org/Hensel.pdf> կայքում:

միջազգային իրավունքի այլ սկզբունքների հետ՝ ներառյալ *uti possidetis juris* և սահմանների անքակտելիության սկզբունքները:

Վերջինս իրականում քաղաքական և ոչ թե իրավական սկզբունք է. այն չի հիշատակվում ՄԱԿ-ի կանոնադրությունում կամ որևիցե այլ միջազգային պայմանագրում, ինչպես նաև *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրում*: Տվյալ սկզբունքը հիշատակվում է միայն *Եվրոպայում անվտանգության և համագործակցության կոնֆերանսի ավարտական ակտում*⁹⁰, որը, փաստորեն, քաղաքական փաստաթուղթ է և չի սահմանում անմիջականորեն գործող իրավական պարտավորություններ:

Ինչ վերաբերում է *uti possidetis juris* սկզբունքին, ապա այն առաջացել է Լատինական Ամերիկայում XIX դ. սկզբում և այնուհետև կիրառվել է նաև Աֆրիկայում XX դ. ապագադրությամբ համատեքստում. այս սկզբունքի համաձայն՝ նոր ձևավորվող պետությունների միջև պետք է պահպանվեն նախկին վարչական սահմանները: *Uti possidetis juris*-ը նախ և առաջ եղել է քաղաքական սկզբունք, որը հիշատակված տարածաշրջաններում վերածվել է իրավականի՝ մասնակից կողմերի փոխադարձ համաձայնության հիման վրա⁹¹:

Հետևաբար, տվյալ սկզբունքը գործում է պետությունների տրոհման հետևանքով առաջացող նոր պետությունների միջև՝ նրանց պարտավորեցնելով միմյանց նկատմամբ չներկայացնել տարածքային հավակնություններ: Սակայն այս սկզբունքը նույնպես չի վերաբերում նոր առաջացած պետություններից անջատվող պետականակերպ կազմավորումներին (ժողովուրդներին):

Բացի դրանից, միջազգային իրավունքը գործում է «առանց արգելքի կա գործողության ազատություն» սկզբունքի հիման վրա: Հետևաբար, առանց պետությունների արտահայտած համաձայնության ոչ մի հիմք չկա պնդելու, թե *uti possidetis juris* սկզբունքը պետք է գործի նաև Լատինական Ամերիկայից և Աֆրիկայից դուրս:

Մի շարք հեղինակների կողմից փորձ է արվել նաև ապացուցելու, որ ԱՊՀ անդամ պետությունները նույնպես ստանձնել են վերոնշյալ սկզբունքի պարտադիր

⁹⁰ The Final Act of the Conference on Security and Cooperation in Europe, 1 August 1975 // International Legal Materials, Vol. 14 (1975), P. 1292.

⁹¹ Brownlie I. Boundary Problems and the Formation of New States // Contemporary Issues in International Law: A Collection of the Josephine Onoh Memorial Lectures. Freestone D., Subedi S., Davidson S. ed. Kluwer Law International, The Hague – London – New York, 2002. P. 189:

կիրառելիությունը իրենց փոխադարձ հարաբերություններում⁹²: Ի ապացույց իրենց տեսակետի՝ վերոնշյալ հեղինակները վկայակոչում են ԱՊՀ պետությունների շրջանակներում կնքված՝ 1991 թ. դեկտեմբերի Ալմա Աթայի հռչակագիրը, որի նախաբանում նշվում է, որ անդամ պետությունները ճանաչում և հարգում են միմյանց տարածքային ամբողջականությունը և սահմանների անքակտելիությունը⁹³:

Սակայն ի՞նչ էին հասկանում ԱՊՀ անդամ պետությունները սահմանների անքակտելիություն հասկացություն ասելով, արդյո՞ք տվյալ սկզբունքի ներքո այդ պետությունները ըմբռնում էին ԽՍՀՄ վարչական սահմանների ճանաչում՝ իբրև նոր պետությունների միջազգային սահմաններ: Այս հարցին պատասխանելու համար մենք պետք է ուշադրություն դարձնենք ԱՊՀ շրջանակներում կնքված այլ փաստաթղթերին, քանի որ Ալմա Աթայի հռչակագիրը սահմանների անքակտելիության բնորոշում չի տալիս: 1991 դեկտեմբերի 21-ի *ԱՊՀ կառավարությունների գլուխների խորհրդի վերաբերյալ ժամանակավոր համաձայնագիրը*, որը սահմանում է կազմակերպության գործողության սկզբունքները, նույնպես չի տալիս այդ սկզբունքների բնորոշումը, սակայն այն այդ սկզբունքները շարադրում է յուրահատուկ հերթականությամբ՝ նշելով նախ ուժի գործադրման արգելքի սկզբունքը, ապա տարածքային ամբողջականության և սահմանների անքակտելիության սկզբունքները, իսկ այնուհետև՝ վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքը⁹⁴:

Սկնհայտ է, որ ուժի գործադրման և վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքները համակարգային փոխկապվածության մեջ են (ՄԱԿ-ի կանոնադրությունում դրանք հաջորդում են միմյանց), համակարգային փոխկապվածություն ունեն նաև տարածքային ամբողջականության և ուժի գործադրման արգելքի սկզբունքները: Հետևաբար, տարածքային ամբողջականության և սահմանների անքակտելիության սկզբունքները ուժի գործադրման արգելքի և վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքների միջև

⁹² Shaw M. N. International Law. Cambridge University Press, Cambridge-New York-Melbourne, 2008, 6th ed. P. 968:

⁹³ Алма-Атинская декларация Сотрудничества независимых государств, 30 декабря 1991 года: Տեքստը հասանելի է http://www.worldcourts.com/eccis/rus/conventions/1991.12.21_Declaration_AlmaAta.htm կայքում:

⁹⁴ Временное соглашение о Совете глав государств и Совете глав правительств Содружества Независимых Государств, 30 декабря 1991 года: Տեքստը հասանելի է <http://www.cis.minsk.by/page.php?id=10914> կայքում:

զետեղելը պատահականություն համարել չի կարելի: Պայմանագրի այս կառուցվածքն ակնհայտորեն հուշում է, որ սահմանների անքակտելիության սկզբունքն այստեղ կրկին պետք է հասկանալ պետությունների միջև ուժի գործադրման համատեքստում, և հետևաբար այն բոլորովին ոչ մի կապ չունի *uti possidetis* սկզբունքի հետ:

§2. Ժողովուրդների ինքնորոշման և միջազգային հարաբերություններում ուժ չգործադրելու սկզբունքների հարաբերակցությունը

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի և ուժի գործադրման արգելքի սկզբունքների հարաբերակցությունը կարելի է քննարկել երկու հարթության վրա: Առաջինը պետությունների կողմից ուժի գործադրման արգելքն է ինքնորոշման համար պայքարող սուբյեկտների դեմ, երկրորդը՝ ուժի գործադրման հնարավորությունը հենց ինքնորոշման համար պայքարող սուբյեկտների կողմից:

XX դարի 60-ական թթ. սկսած՝ ապագադուրացման համար պայքարող ազգերի, ինչպես նաև սոցիալիստական պետությունների քաղաքական շրջանակներում սկսեց արմատավորվել այն պատկերացումը, որ ազատագրական շարժումները «արդար պատերազմի» նոր դրսևորում են⁹⁵: Սա, մյուս կողմից պետք է նշանակեր, որ ինքնորոշման համար պայքարող ժողովուրդների դեմ ցանկացած ուժի գործադրում պետք է որակվեր միջազգային իրավունքի նորմերի ոտնահարում: Բնականաբար, այս միտումներն առաջ բերեցին գաղութատիրական պետությունների, ինչպես նաև ԱՄՆ-ի ընդդիմությունը, որի պատճառով այս ոլորտը կարգավորող միջազգային ունիվերսալ պայմանագրերի ընդունումը տեսականորեն դարձավ անհնարին: Փոխարենը բոլոր քննարկումները տեղափոխվեցին Գլխավոր ասամբլեայի և Անվտանգության խորհրդի ամբիոններ, և միայն վերջիններիս բանաձևերի վերլուծության հիման վրա է կարելի խոսել տվյալ ոլորտում սովորության նորմերի կայացման մասին:

Քննարկվող հիմնահարցի առաջին հարթությունը առավել ակնհայտ է: Թեև, ինչպես արդեն նշվեց, ՄԱԿ-ի կանոնադրությունն ստեղծողներն ամենայն հավանականությամբ չէին կանխատեսում ապագադուրացման և բազմաթիվ նոր

⁹⁵ Pomerance M. *Self-Determination in Law and Practice: The New Doctrine in the United Nations*. Martinus Nijhoff Publishers, The Hague-Boston-London, 1982. P. 48.

պետությունների ստեղծման գործընթացը⁹⁶, սակայն Կանոնադրությունը, չնայած իր գերակա ուժին, եղել և շարունակում է մնալ պայմանագիր և որպես այդպիսին ենթակա է միջազգային պայմանագրերը մեկնաբանող հստակ սահմանված կանոններին⁹⁷: Հետևաբար հատկանշական է, որ, ըստ միջազգային իրավունքի, պայմանագրերը «ապրող փաստաթղթեր» (“living instrument”)⁹⁸ են և որպես այդպիսիք ենթակա են մեկնաբանման այն նորմատիվ բազայի համատեքստում, որը գոյություն ունի մեկնաբանման պահին: Հաշվի առնելով վերոնշյալը՝ բազմաթիվ հեղինակներ գտնում են, որ ՄԱԿ-ի կանոնադրության դրույթները մեկնաբանելիս պետք է օգտագործվեն Գլխավոր ասամբլեայի բանաձևերը⁹⁹: Վերջինս ուղղակի բխում է նաև 1969 թ. *Պայմանագրային իրավունքի վերաբերյալ Վիեննայի կոնվենցիայի* 31-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից, որի համաձայն՝ պայմանագրերը մեկնաբանելիս համատեքստի հետ մեկտեղ պետք է հաշվի առնել պայմանագրի մեկնաբանման վերաբերյալ կողմերի միջև կայացված ցանկացած հետագա համաձայնություն, ինչպես նաև պայմանագրի կիրառման պրակտիկան:

Հետևաբար, հաշվի առնելով Գլխավոր ասամբլեայի բանաձևերի շնորհիվ ինքնորոշման սկզբունքին տրված նոր իմաստն ու բովանդակությունը՝ այսօր կարելի է հստակորեն ասել, որ ինքնորոշման համար պայքարող ժողովուրդների դեմ ուժի գործադրման արգելքը անմիջականորեն բխում է նաև ՄԱԿ-ի կանոնադրության համակարգային ընթերցումից¹⁰⁰: Այսպես, Կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ պետությունները չպետք է գործադրեն ուժ, որն ուղղված է այլ պետությունների տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ կամ որևիցե այլ կերպ հակասում է ՄԱԿ-ի կանոնադրության նպատակներին, մինչդեռ այդ նպատակներից մեկը, ըստ Կանոնադրության 1-ին հոդվածի,

⁹⁶ Նույն տեղում:

⁹⁷ Conditions of Admission of a State to Membership in the United Nations (Article 4 of the Charter), Advisory Opinion, ICJ Reports 57 (1948). P. 61:

⁹⁸ Տե՛ս մասնավորապես Tyrer v. the United Kingdom, Application no. 5856/72, Judgment of 25 April 1978, Series A no. 26, P. 15-16, § 31:

⁹⁹ Տե՛ս օրինակ Schachter O. The Right of States to Use Armed Force // Michigan Law Review, Vol. 82 (1984). P.1633:

¹⁰⁰ Hannikainen L. Peremptory Norms (Jus Cogens) in International Law: Historical Development, Criteria, Present Status. Lakimiesliton Kustannus, Finish Lawyers' Publishing Company, 1988. P. 359:

պետությունների միջև բարեկամական հարաբերությունների զարգացումն է ժողովուրդների հավասարության և ինքնորոշման իրավունքի հիման վրա:

Այս արգելքն ավելի է հստակեցվում Գլխավոր ասամբլեայի հռչակագրերի միջոցով. այսպես՝ ըստ *Գաղութացված ազգերին և ժողովուրդներին անկախություն շնորհելու վերաբերյալ հռչակագրի*՝ «բոլոր ռազմական գործողությունները կամ ցանկացած բնույթի հարկադիր միջոցները, որոնք ուղղված են կախյալ ժողովուրդների դեմ, պետք է դադարեցվեն»: Իսկ ահա *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրի* համաձայն՝ յուրաքանչյուր պետություն «պարտավոր է ձեռնպահ մնալ ցանկացած հարկադիր գործողությունից, որը զրկում է ... ժողովուրդներին իրենց ինքնորոշման իրավունքից, ազատությունից և անկախությունից»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ինքնորոշման համար պայքարող ժողովուրդների դեմ ուժի գործադրման արգելքը կարելի է համարել միջազգային-իրավական կայացած նորմ: Դրա հետ մեկտեղ՝ անհրաժեշտ է նշել, որ այս արգելքը չի տարածվում ժողովուրդ չհանդիսացող սուբյեկտների կողմից անջատողական շարժումների դեմ ուժ գործադրելու վրա: Ինչպես արդեն նշվեց, նման անջատողական շարժումները չեն ենթարկվում միջազգային-իրավական կարգավորման, ուստի մինչև նման շարժման՝ որպես կայուն պետականակերպ կազմավորման կայացումը, որը կբավարարի պետության սովորութային չափանիշները, վերջինիս և մայր պետության հարաբերությունները կարգավորվում են մայր պետության իրավական համակարգի շրջանակներում, որը և ազատ է ուժ գործադրելու իրավապահ նկատառումներով՝ պաշտպանելով սեփական պետականությունը իր տեսանկյունից հանցավոր մարվող ռոնսդություններից¹⁰¹:

Սակայն, երբ բռնություն է գործադրվում գաղութացված, խտրականության ենթարկվող ժողովուրդների և ինքնորոշման իրավունքի հասցեատեր այլ խմբերի դեմ, այն անխուսափելիորեն է պետության միջազգային-իրավական պարտավորությունների ռոնսահարում է: Նման բովանդակություն ունեւ, օրինակ, Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի հայության դեմ ուժի գործադրումը:

¹⁰¹ Անջատողական շարժումները, մայր պետության ներպետական օրենսդրության համաձայն, ամենայն հավանականությամբ կորակվի որպես «իշխանության յուրացում», «սահմանադրական կարգի տապալում»: Առանձին պետությունների քրեական օրենսդրությունները նախատեսում են նաև «տարածքային ամբողջականությունը խախտելուն ուղղված գործողություններ» հանցակազմը: Տե՛ս, օրինակ, 2003 թ. ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 300.2:

Երկրորդ հիմնահարցը՝ ուժի գործադրումը ինքնորոշման համար պայքարող սուբյեկտների կողմից, ինչպես նաև այլ պետությունների կողմից վերջիններիս ռազմական օժանդակություն տրամադրելու հնարավորությունը, միջազգային-իրավական առումով առավել վիճահարույց է. դա ապագադուրօրացման ժամանակաշրջանում տարբեր քաղաքական ճամփարներում գտնվող պետությունների միջև լուրջ տարաձայնությունների առարկա էր¹⁰²:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գաղութատեր պետությունների տիրապետությունը հանդիպեց ռազմական դիմադրության. Ֆրանսիայի դեմ ուղղված ազատագրական շարժումներ սկսվեցին Թունիսում, Մարոկկոյում և Ալժիրում, Միացյալ Թագավորության դեմ՝ Մալայան կղզիներում, Քենիայում, Կիպրոսում, Նիդերլանդների դեմ՝ Ինդոնեզիայում, Պորտուգալիայի դեմ՝ Հնդկաստանին հարակից կղզիներում և այլն:

Ավելի ուշ՝ 60-ական թվականներին, երբ Պորտուգալիան հրաժարվեց անկախություն տրամադրել Գվինեա-Բիսսաուին, Անգոլային և Մոզամբիկին, ինչպես նաև Հարավային Աֆրիկայի կողմից Նամիբիայի շարունակական գավթման և վարած ապարտեիդի քաղաքականություն վարելու արդյունքում սոցիալիստական պետությունները սկսեցին ավելի ակտիվ աջակցել հանուն ինքնորոշման համար պայքարող ժողովուրդների՝ գաղութատերերի դեմ ուժ գործադրելու, ինչպես նաև այդ ժողովուրդներին ռազմական օժանդակություն տրամադրելու իրավունքի միջազգային-իրավական ճանաչմանը:

Գլխավոր ասամբլեայի ընդունած հռչակագրերը հասկանալի պատճառներով այս հարցերին ամբողջական պատասխան չեն տալիս. այլ պարագայում դրանք պարզապես չէին ստանա ՄԱԿ-ի բոլոր անդամ պետությունների կամ առնվազն դրանց ճնշող մեծամասնության հավանությունը: Այսպես, *Գաղութացված պետությունների և ժողովուրդներին անկախություն պարգևելու վերաբերյալ հռչակագիր* ընդհանրապես չի անդրադառնում ժողովուրդների կողմից ուժի գործադրման հիմնահարցին:

Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիրը նույնպես չի անդրադառնում այդ խնդրին: Սակայն, մյուս կողմից *Հռչակագիրը*, ինչպես արդեն նշվեց, ամրագրում է,

¹⁰² Gray C. International Law and the Use of Force. Oxford University Press, Oxford-New York, 2008, 3rd ed. P. 51:

որ յուրաքանչյուր պետություն «պարտավոր է ձեռնպահ մնալ ցանկացած հարկադիր գործողությունից, որը զրկում է ... ժողովուրդներին իրենց ինքնորոշման իրավունքից, ազատությունից և անկախությունից»:

Այդ իսկ պատճառով գոյություն ունեցող նորմերի մասին պատկերացում կարելի է կազմել ՄԱԿ-ի մարմինների՝ կոնկրետ միջազգային վեճերի շրջանակներում ընդունված բանաձևերից:

Առաջին նման բանաձևը Գլխավոր ասամբլեայի *«Գաղութացված պետություններին և ժողովուրդներին անկախություն պարգևելու վերաբերյալ հռչակագրի իմպլեմենտացիա»* վերտառությամբ 2105 բանաձևն էր, որն ընդունվել էր՝ ի պատասխան Պորտուգալիայի, Հարավային Աֆրիկայի և Ռոդեզիայի բռնատիրական գործողությունների, և ճանաչում էր *«գաղութային տիրապետության ներքո գտնվող ժողովուրդների պայքարի օրինականությունը՝ ի իրականացում իրենց ինքնորոշման իրավունքի»* և կոչ էր անում *«բոլոր Պետություններին գաղութային Տարածքներում ազգային-ազատագրական շարժումներին տրամադրել նյութական և բարոյական օժանդակություն»*¹⁰³: Տվյալ բանաձևը ընդունվեց 74 կողմ, 6 դեմ և 27 ձեռնպահ քվեարկությամբ: Հետևաբար բոլոր պետությունների կամաարտահայտության համաձայնեցման մասին խոսելն այստեղ անտեղին է:

Նույն վերտառությամբ և նման բովանդակությամբ բանաձևեր Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվեցին նաև 60-ականների հաջորդ տարիների ընթացքում¹⁰⁴: 1970 թ. ընդունված *«Գաղութացված պետություններին և ժողովուրդներին անկախություն պարգևելու վերաբերյալ հռչակագրի ամբողջական իմպլեմենտացիայի գործողությունների ծրագիր»* վերտառությամբ բանաձևը (85-5-15) ևս մեկ քայլ առաջ է գնում և արդեն հռչակում է, որ *«գաղութատիրության շարունակումն իր բոլոր դրսևորումներում հանցագործություն է, որը հանդիսանում է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության, Գաղութային պետություններին և*

¹⁰³ Implementation of the Declaration on the Granting of Independence to Colonial Countries and Peoples, GA resolution 2105 (XX). UN Doc. A/PV.1405, 20 December 1965. § 10:

¹⁰⁴ Տե՛ս օրինակ GA resolution 2189 (XXI). UN Doc. A/PV.1492, 15 December 1966. § 7: GA resolution 2326 (XXII). UN Doc. A/PV.1636, 16 December 1967:

ժողովուրդներին անկախություն պարգևելու վերաբերյալ հռչակագրի և միջազգային իրավունքի սկզբունքների ոտնահարում»¹⁰⁵:

Սակայն, անգամ այդ բանաձևերին կողմ քվեարկող պետությունները տարբեր կերպ էին մեկնաբանում դրանցում օգտագործվող եզրույթները. ԱՄՆ-ի և մի շարք այլ արևմտյան պետությունների համար «պայքար» բառն այս բանաձևերում ենթադրում էր միայն խաղաղ պայքար, մինչդեռ խորհրդային պետությունների համար այն նշանակում էր ռազմական ազգային-ազատագրական շարժում¹⁰⁶:

Սակայն Գլխավոր ասամբլեայի «*Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի համընդհանուր շուտափույթ իրականացման և մարդու իրավունքների պահպանման և արդյունավետ երաշխավորման համար գաղութացված պետություններին և ժողովուրդներին անկախության շնորհման կարևորությունը*» 31/34 բանաձևն¹⁰⁷ արդեն հաստատում էր «բոլոր հնարավոր միջոցներով, ներառյալ՝ զինված հակամարտության միջոցով, անկախության ... համար ժողովուրդների պայքարի օրինականությունը»: Այս բանաձևն ընդունվել է 109 կողմ, 4 դեմ և 24 ձեռնպահ ձայներով: Այն կարելի է համարել սոցիալիստական պետությունների քաղաքական հաղթանակ:

Մեկ այլ զգալի քաղաքական հաղթանակ էր Գլխավոր ասամբլեայի հանրահայտ «*Ազրեսիայի բնորոշում*» վերտառությամբ 3314 բանաձևում ինքնորոշման իրավունքի վերաբերյալ դրույթ զետեղելը: Վերջինիս 7-րդ հոդվածը սահմանում է.

«Այս բնորոշման ոչ մի դրույթ և մասնավորապես վերջինիս 3-րդ հոդվածը չեն կարող որևէ կերպ ազդել Կանոնադրությունից բխող ժողովուրդների, մասնավորապես գաղութային և ռասիստական ռեժիմների կամ օտարերկրյա տիրապետության այլ ձևերի ներքո գտնվող այն ժողովուրդների ինքնորոշման, հավասարության և անկախության իրավունքի վրա, որոնք բռնի կերպով զրկվել են այդ իրավունքից, և որոնց մասին հիշատակում է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը համապատասխան պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիրը,

¹⁰⁵ Programme of action for the full implementation of the Declaration of Granting of Independence to Colonial Countries and Peoples, GA resolution 2621 (XXV). UN Doc. A/8086, 12 October 1970. § 1:

¹⁰⁶ Gray C. International Law and the Use of Force. Oxford University Press, Oxford-New York, 2008, 3rd ed. P. 53:

¹⁰⁷ GA resolution 31/34. UN Doc. A/31/291, 30 November 1976. § 1:

և ոչ էլ այդ ժողովուրդների՝ Կանոնադրության սկզբունքներին և վերոնշյալ հռչակագրին համապատասխան այդ նպատակի համար պայքարելու և աջակցություն փնտրելու ու ստանալու իրավունքը»¹⁰⁸:

Այս բանաձևը, որն ընդունվել էր առանց քվեարկության, բնականաբար, սոցիալիստական պետությունների և Երրորդ աշխարհի պետությունների կողմից սկսվեց մեկնաբանվել որպես ուժի գործադրման թույլտվություն:

Սակայն այս բանաձևերի հիման վրա սովորության ձևերի կարծրացման մասին խոսելը դժվար է: Դրանք մեծ մասամբ չեն արտացոլում միջազգային ողջ հանրության դիրքորոշումը:

Ինչ վերաբերում է «Ագրեսիայի բնորոշում» բանաձևին, ապա վերջինս ուղղակիորեն կախվածության մեջ է ՄԱԿ-ի կանոնադրության բովանդակությունից, քանի որ նրա հոդվածները «չեն կարող մեկնաբանվել որպես Կանոնադրության դրույթների շրջանակների ընդարձակում կամ նեղացում, ներառյալ այն դրույթների, որոնք վերաբերում են ուժի գործադրման օրինական դեպքերին»: Մինչդեռ ՄԱԿ-ի կանոնադրությունը, ինչպես կտեսնենք ստորև, բացահայտ է չի խոսում ոչ պետական կազմավորումների կողմից ուժի գործադրման հնարավորության մասին: Բացի այդ՝ բանաձև 3314-ի իրավական արժեքն ու նշանակությունը վիճարկում են բազմաթիվ պետություններ և հեղինակներ¹⁰⁹:

60-ական և 70-ական թթ. քաղաքական և իրավական միտքը զարգացրեց երկու ար-դարացում՝ ի պաշտպանություն գաղութատիրության դեմ պայքարում ուժի գործադրման: Առաջինի համաձայն՝ գաղութատիրությունը ոչ այլ ինչ է, քան շարունակվող ագրեսիա¹¹⁰: Սա հիմնական փաստարկն էր, որով Հնդկաստանը փորձում էր արդարաց-նել իր ռազմական գործողությունները Պորտուգալիայի կողմից գաղութացված Գոա տարածաշրջանը զավթելու ժամանակ: Ըստ Հնդկաստանի պատճառբանության՝ 16-րդ

¹⁰⁸ Definition of Aggression, GA resolution 3314 (XXIX), Supp. No. 31 UN Doc. A/9631, 14 December 1974. Art. 7:

¹⁰⁹ Murphy S.D. Contemporary Practice of the United States Relating to International Law // American Journal of International Law, Vol. 95 (2001). P. 400:

¹¹⁰ Dugard C.J.R. The Organization of African Unity and Colonialism: An Inquiry into the Plea of Self-Defence as a Justification for the Use of Force in the Eradication of Colonialism // International and Comparative Law Quarterly, Vol. 16 (1967). P. 169:

դարի սկզբին Պորտուգալիայի կողմից նվաճված Գոա շրջանում նրա շարունակական ներկայությունը ոչ այլ ինչ էր, քան շարունակվող ագրեսիա, որը, ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածի դրույթներին համապատասխան Հնդկաստանին, ինքնապաշտպանության իրավունք էր ընձեռում:

Տվյալ մեկնաբանության հետ դժվար է համաձայնվել երկու պատճառներով: Առաջին՝ այն հաշվի չի առնում ինտերտեմպորալ (ժամանակագրային) մեկնաբանման կանոնը, որի համաձայն՝ փաստերը պետք է մեկնաբանվեն իրադարձությունների զարգացման ժամանակահատվածում գործող իրավական նորմերին համապատասխան¹¹¹, և հետևաբար՝ 16-րդ դարի սկզբում ուժի գործադրումը լիովին օրինական գործողություն էր, իսկ դրա կիրառման արդյունքում ձեռք բերված տիտղոսը՝ օրինական: Երկրորդ՝ անգամ եթե ուժի գործադրումը իրոք լիներ անօրինական գործողություն, միևնույն է, Հնդկաստանը, որը դարեր շարունակ չէր իրացրել տվյալ տարածքի նկատմամբ իր պահանջի իրավունքը, պարզապես զրկված էր այդ տարածքի նկատմամբ իր ինքնիշխանությունը վերականգնելու որևէ հավակնությունից¹¹²:

Քանի որ գաղութատիրության դեմ ուժի գործադրումն արդարացնելու վերոնշյալ փորձն ունի իրավական ակնհայտ թերություններ, այն շատ արագ փոխարինվեց նոր բանաձևով՝ «ինքնապաշտպանություն ընդդեմ գաղութային տիրապետության՝ ի օժանդակություն ժողովուրդների ինքնորոշման իրավունքի»¹¹³:

Սույն հարցի իրավական հիմնավորվածությունը *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրի* նախապատրաստական աշխատանքների ժամանակ բարձրացրին Հարավսլավիան, Չեխոսլովակիան, Գանան և Հնդկաստանը, սակայն մի շարք պատճառներով այն չընդդրվեց *Հռչակագրի* վերջնական տեքստի մեջ: Խնդիրը նախ և առաջ այն է, որ Հռչակագրի դրույթները անմիջականորեն բխում են ՄԱԿ-ի կանոնադրության հոդվածների մեկնաբանությունից, սակայն դրանց ուշադիր

¹¹¹ Sh' u The Intertemporal Problem in Public International Law, Institute de droit international (1975), տեսությունը հասանելի է <http://www.idi-ijl.org> կայքում: Rosenne Sh. The Perplexities of Modern International Law: General Course on Public International Law // Collected Courses of the Hague Academy of International Law, Vol. 291 (2001). P. 52:

¹¹² Wright Q. The Goa Incident // American Journal of International Law, Vol. 56 (1962), P. 620:

¹¹³ Dugard. The Organization of African Unity and Colonialism: An Inquiry into the Plea of Self-Defence as a Justification for the Use of Force in the Eradication of Colonialism // International and Comparative Law Quarterly, Vol. 16 (1967), P. 170:

ընթերցումը ցույց է տալիս, որ ՄԱԿ-ի կանոնադրությունն արգելում է ուժի գործադրումը միջպետական հարաբերություններում. ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածը խոսում է ՄԱԿ-ի անդամների (այսինքն՝ պետությունների) ինքնապաշտպանության անօտարելի իրավունքի մասին: Հետևաբար՝ ցանկացած մեկնաբանություն, որը հնարավորություն կտար ինքնապաշտպանության դիմել ոչ պետական կազմավորումներին՝ լինեն դրանք գաղութացված ժողովուրդներ, թե անջատողական շարժումներ, դուրս կգար ՄԱԿ-ի կանոնադրության հոդվածների շրջանակներից¹¹⁴. այն կհամարվեր ոչ թե Կանոնադրության մեկնաբանություն, այլ դրա շարադրանքի ձևափոխում և գրեթե անսահմանափակ կդարձներ ինքնապաշտպանության իրավունքի շրջանակները¹¹⁵:

Դրա հետ մեկտեղ՝ անհրաժեշտ է նաև նշել, որ թե՛ ՄԱԿ-ի կանոնադրությունը, թե՛ Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիրը խոսում են միայն պետությունների կողմից ուժի գործադրման արգելքի մասին. այդ փաստաթղթերը չեն կաշկանդում ոչ պետական կազմավորումների ձեռնարկները:

Ավելին՝ ինքնապաշտպանության իրավունքը նույնպես գործում է միայն միջպետական հարթությունում: Այսպես, ՄԱԿ-ի միջազգային դատարանը *«Պաղեստինյան օկուպացված տարածքում պատ կառուցելու իրավական հետևանքների վերաբերյալ»* խորհրդատվական եզրակացությունում նշել է, որ ինքնապաշտպանության անօտարելի իրավունքը գործում է միայն մեկ պետության կողմից մեկ այլ պետության դեմ ուժի գործադրման պարագայում¹¹⁶: Սույն տեսակետը պաշտպանում են նաև միջազգային իրավունքի բազմաթիվ հեղինակավոր մասնագետներ¹¹⁷:

Հետևաբար, հաշվի առնելով նաև *«Միջազգային իրավունքի նորմերին Կոսովոյի անկախության միակողմ հռչակագրի համապատասխանության»* խորհրդատվական եզրակացության տրամաբանությունը՝ կարելի ասել, որ ուժի գործադրման արգելքի,

¹¹⁴ Նույն տեղում:

¹¹⁵ Jimenez de Arechaga E. International Law in the Past Third of a Century // Collected Courses of the Hague Academy of International Law, Vol. 159 (1978), P. 98:

¹¹⁶ Legal Consequences of the Construction of a Wall in the Occupied Palestinian Territory (Advisory Opinion), ICJ Reports 136 (2004), P. 194, § 139:

¹¹⁷ Տես մասնավորապես՝ Ушаков Н.А. Правовое регулирование использования силы в международных отношениях. Институт государства и права Российской академии наук, Москва, 1997. С. 32:

ինչպես և տարածքային ամբողջականության սկզբունքը, որի հետ այն սերտորեն փոխկապված է, գործում է միայն միջպետական հարթությունում: Եվ հետևաբար այստեղ ևս առկա է իրավական կարգավորման բաց:

Այդ գործողության ազատությունը սակայն անսահման չէ: Եթե խոսքը անջատողական շարժման մասին, այսինքն՝ մի սուբյեկտի, որը միջազգային իրավական առումով ժողովուրդ չի համարվում, ապա վերջինս գործողությունները մայր պետության ներպետական օրենսդրության դրույթների համաձայն կհամարվեն հանցավոր¹¹⁸, ընդհուպ մինչև այն պահը, երբ տվյալ սուբյեկտը չապահովվի իր փաստացի անկախությունը մայր պետության իրավասությունից և չի հանդիսանա *fait accompli*, այսինքն՝ փաստացի սուբյեկտ, որի գոյության հետ միջազգային հանրությունը պետք է համակերպվի (այդ պահից սկսված՝ տվյալ սուբյեկտը արդեն ենթակա կլինի միջազգային իրավունքի նորմերին՝ որպես պետություն):

Մյուս կողմից, եթե խոսքը մի սուբյեկտի մասին է, որը միջազգային փաստաթղթերի իմաստով «*օտարերկրյա հպատակեցման, ճնշման կամ չարաշահման*» դեմ պայքարող ժողովուրդ է հանդիսանում, ապա վերջինիս գործողությունները կաշկանդված կլինեն մարդասիրական իրավունքի (*jus in bello*) նորմերով¹¹⁹, հետևաբար նրա ռազմական գործողությունները ամբողջ լիովին կենթարկվեն համաչափության և անհրաժեշտության ռեժիմներին¹²⁰:

Մյուս կողմից, թե՛ միջազգային-իրավական առումով ժողովուրդ հանդիսացող սուբյեկտը, թե՛ անջատողական շարժումը անխուսափելիորեն կաշկանդված կլինեն մարդու սովորության իրավունքներով, ինչպես նաև միջազգային իրավունքի այն իմպերատիվ արգելքներով, որոնք առաջացնում են ոչ միայն պետությունների պաշտոնատար անձանց, այլ նաև կազմակերպված խմբերի անդամների միջազգային քրեական պատասխանատվությունը: Ավելին՝ նման նորմերի ոտնահարումը կարող է տվյալ սուբյեկտներին ճանաչման շնորհումը մերժելու հիմք հանդիսանալ՝ հաշվի

¹¹⁸ Baxter R.R. So-Called 'Unprivileged Belligerency': Spies, Guerrillas, and Saboteurs // British Year Book of International Law, Vol. 28 (1951), P. 323-345:

¹¹⁹ Abi-Saab G. Wars of National Liberation in the Geneva Conventions and Protocols // Recueil des Cours. Vol. 165 (1979). P. 399-416:

¹²⁰ Cannizzaro E. Contextualizing Proportionality: Jus ad Bellum and Jus in Bello in the Lebanese War // International Review of the Red Cross. Vol. 88 (2006). P. 779-792:

առնելով վերջիններիս ելակետային նշանակությունը պետությունների միջև հարաբերություններում¹²¹ (այս մասին առավել մանրամասն տե՛ս հաջորդ պարագրաֆում):

Սակայն այն պահից, երբ ինքնորոշման համար պայքարող ժողովուրդը կամ անգամ անջատողական շարժումը հաստատում է իր կայուն իշխանությունը որոշակի տարածքի նկատմամբ և փաստացի ապացուցում է իր կենսունակությունը (առանց երրորդ պետությունների օժանդակության), այսինքն՝ հանդիսանում է *de facto* պետություն, վերջինիս գործողություններն արդեն սկսում են կարգավորվել միջազգային իրավունքի նորմերի միջոցով¹²², և հետևաբար նման սուբյեկտի կողմից ուժի գործադրումը կենթարկվի ՄԱԿ-ի կանոնադրությամբ ամրագրված ռեժիմին: Այլ խոսքերով՝ այն ստանա ինքնապաշտպանության իրավունք:

Առանձին կարևորություն է ներկայացնում նաև ինքնորոշման համար պայքարող ժողովուրդներին ռազմական օժանդակություն տրամադրելու հիմնահարցը: Հատկանշական է, որ «Նիկարագուայի տարածքում և նրա դեմ ռազմական ու ռազմականացված գործողությունների» վերաբերյալ գործում, որում Միջազգային դատարանը քննարկում էր Նիկարագուայի տարածքում գործող ջոկատներին ԱՄՆ-ի կողմից ռազմական օժանդակություն տրամադրելու հիմնահարցը, Դատարանն ԱՄՆ-ի գործողությունները ուժի գործադրում և պետության ներքին գործերին միջամտություն որակելիս հատուկ նշեց, որ իր դատողությունները չեն վերաբերում այն դեպքերին, որոնք առաջանում են ապագադրության համատեքստում և որ այդ հարցերը չեն մտնում Դատարանի կողմից քննվող գործի առարկայի ոլորտ¹²³:

Հատկանշական է նաև, որ ՄԱԿ-ի միջազգային դատարանի դատավորներից Ս. Շուեբելն իր հատուկ կարծիքում (*dissenting opinion*) անհանգստություն է արտահայտում Դատարանի կողմից տրված վերոնշյալ ձևակերպմանը՝ նշելով, որ այն տպավորություն է ստեղծում, թե Դատարանը կողմ է արտահայտվում ազգային ազատագրական

¹²¹ Алексидзе Л.А. Некоторые вопросы теории международного права. Императивные нормы. Jus cogens. Издательство тбилисского университета, Тбилиси, 1982. С. 24-28:

¹²² Tumanidze S. Status of the De Facto State in Public International Law: A Legal Appraisal of the Principle of Effectiveness. Doctor of Laws Dissertation Presented to the Faculty of Law of the University of Hamburg, 2010. P. 38-39:

¹²³ Military and Paramilitary Activities in and against Nicaragua (Nicaragua v. USA), ICJ Reports 14 (1986), P. 108, § 206:

շարժումներին ռազմական օժանդակություն տրամադրելուն¹²⁴: Այնուամենայնիվ, կայացած իրավունքի մասին խոսել միայն մեկ դատական ակտի ոչ հստակ ձևակերպման հիման վրա անհիմն կլիներ:

Նշենք, որ տվյալ տվյալ հարցին անդրադառնում է նաև Անվտանգության խորհուրդը իր մի շարք բանաձևերում: Մասնավորապես, 1978 թ. բանաձև 428-ում Անվտանգության խորհուրդը ողջունեց Նամիբիայի ժողովրդին շարունակական օժանդակություն տրամադրելու Անգոլայի Ժողովրդական Հանրապետության նախաձեռնությունը¹²⁵: 1979 թ. բանաձև 445-ում Անվտանգության խորհուրդը ողջունում է մի շարք պետությունների կողմից Զիմբաբվեի ժողովրդին՝ Հարավայի Ռոդեզիայի ռասիստական ռեժիմի դեմ «արդար և օրինական պայքար մղելու համար» օժանդակության տրամադրումը¹²⁶:

Թեև, Անվտանգության խորհրդի բանաձևերը, ի տարբերություն Գլխավոր ասամբլեայի ունեն պարտադիր իրավաբանական ուժ, այնուամենայնիվ ազատագրական շարժումների համատեքստում ընդունված այս բանաձևերն ակնհայտորեն ունեին խիստ սահմանափակ շարադրանք, և դրանցից ոչ մեկը բացահայտորեն չի խոսում այդ շարժումներին ռազմական օժանդակություն տրամադրելու մասին: Հետևաբար՝ այս ամենի հիման վրա կարելի է միայն եզրակացնել, որ ժամանակակից միջազգային իրավունքը թույլ է տալիս ինքնորոշման համար պայքարող սուբյեկտներին ֆինանսական, նյութական և միգուցե նաև ռազմական օժանդակություն ցուցաբերել, եթե դա չի վերաժվում օժանդակող պետության կողմից անմիջական ուժի գործադրման մայր պետության դեմ: Մյուս կողմից ակնհայտ է, որ տվյալ ազատությունը չի տարածվում անջատողական շարժումներին օժանդակություն տրամադրելու դեպքերի վրա, քանի որ դա անխուսափելիորեն կհանգեցնի այլ պետության գործերին միջամտության:

¹²⁴ Նույն տեղում., Dissenting Opinion of Judge Schwebel. P. 351, §§ 179-180: Հենց Շուեբելի կարծիքով, երրորդ պետությունները իրավունք ունեն ինքնորոշման համար պայքարող ժողովուրդներին տալ բարոյական, քաղաքական և հումանիտար բնույթի օժանդակություն, սակայն երրորդ պետություններն իրավունք չունեն ռազմական ճանապարհով միջամտելու այդ ազատագրական շարժումների պայքարին, ուղարկելու զինված ուժեր, տրամադրելու զինամթերք և այլն:

¹²⁵ SC resolution 428. UN Doc. S/RES/428, 6 May 1978, § 6:

¹²⁶ SC resolution 445. UN Doc. S/RES/445, 8 March 1979, § 2:

Աֆրիկյան պետությունները նման օժանդակության հնարավորությունը փորձում էին արդարացնել մի տեսության լույսի ներքո, որը նման էր «սեփական քաղաքացիներին այլ պետությունների տարածքում պաշտպանելու» դոկտրինին: 1963 թ. Ադիս Աբեբայում տեղին ունեցած կոնֆերանսի ժամանակ մի շարք պետություններ առաջ քաշեցին այն գաղափարը, թե Հարավային Աֆրիկայի ռասիստական ռեժիմի ճնշման ներքո գտնվող բնակչությունը Աֆրիկայի այլ պետությունների եղբայրական ժողովուրդ է, և հետևաբար այդ բոլոր պետություններն ունեն իրավական բնույթի պարտավորություն՝ միջամտելու և պաշտպանելու աֆրիկյան այդ պետության բնակչությանը¹²⁷:

Զինված ուժի միջոցով «սեփական քաղաքացիներին այլ պետությունների տարածքում պաշտպանելու» դոկտրինն իրոք միջազգային իրավունքում ունի հիմնարար տեղ և համարվում է ինքնապաշտպանության իրավունքի յուրօրինակ դրսևորում¹²⁸: Սակայն այն ամբողջությամբ հիմնված է դիվանագիտական պաշտպանության ինստիտուտի վրա, քանի որ, վերջինիս համաձայն, պետությունը պաշտպանում է իր սեփական քաղաքացիների իրավունքները, այսինքն՝ այն մարդկանց, որոնց հետ այդ պետությունն ունի արդյունավետ իրավական կապեր: Մինչդեռ աֆրիկյան պետությունների կողմից առաջարկված մեկնաբանությունը պետք է հնարավորություն ընձեռեր դիմելու ռազմական գործողությունների ոչ թե քաղաքացիության հիմքով ֆիզիկական անձանց պաշտպանության համար, այլ ռասայական, ընդհանուր պատմության և այլ ոչ իրավական չափորոշիչների հիման վրա: Հասկանալի է, որ սույն տեսությունը առավելապես հիմնված էր տարածաշրջանային միասնության բարոյաէթիկական նորմերի վրա և ոչ թե միջազգային-իրավական կուռ փաստարկների: Հետևաբար այն տրամաբանական պատճառներով երկարկյանք չունեցավ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է փաստել, որ ժամանակակից միջազգային իրավունքը չի սահմանում այլ պետությունների կողմից ինքնորոշման

¹²⁷ Dugard. The Organization of African Unity and Colonialism: An Inquiry into the Plea of Self-Defence as a Justification for the Use of Force in the Eradication of Colonialism // International and Comparative Law Quarterly, Vol. 16 (1967), P. 179-180:

¹²⁸ Dinstein Y. War, Aggression and Self-Defence. Cambridge University Press, Cambridge, 2005, 4th ed. P. 233-234: Green L.C. Rescue at Entebbe – Legal Aspects // Israel Yearbook on Human Rights, Vol. 6 (1976), P. 313-315:

համար պայքարող ժողովուրդներին. անմիջական ռազմական օժանդակություն տրամադրելու հնարավորություն, և ցանկացած նման գործողություն ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ պարբերության խախտում կհամարվի: Իհարկե, երբ ինքնորոշման համար պայքարող ժողովրդի իրավունքները սկսեն ենթարկվել լայնածավալ խախտումների, հնարավոր կլինի խոսել նաև, այսպես կոչված, մարդասիրական ինտերվենցիայի ինստիտուտի մասին, ինչը մեր աստենախոսական աշխատանքի հետազոտման առարկայի շրջանակներից դուրս է:

Այլ պետության ռազմական անօրինական միջամտությունն անգամ կարող է հիմք հանդիսանալ նորաստեղծ սուբյեկտի՝ միջազգային հանրության կողմից ճանաչման կոլեկտիվ մերժման: Դրա պատճառները հասկանալի են. երբ պետականակերպ կազմավորումը կայանում է և հաստատում է իր գոյությունը արտաքին ուժի գործադրման շնորհիվ, այն չի կարող որակվել ինքնաբավ ու կենսունակ և պահպանում է իր գոյությունը միայն արտաքին օժանդակության շնորհիվ¹²⁹: Այդ դեպքում հարց է ծագում. արդյոք անջատողական շարժումը իրոք հանդիսանում է ինքնուրույն սուբյեկտ, թե վերջինիս գործողությունները պետք է պարզապես վերագրել նրան օժանդակած պետությանը: Այդպես էր, օրինակ, այսպես կոչված «Կիպրոսի Թուրքական Հանրապետության» պարագայում, որը ստեղծվեց Թուրքիայի զինված ուժերի ներխուժման արդյունքում, և որի անկախության հռչակագիրը Անվտանգության խորհուրդը որակեց անօրինական, իսկ միջազգային հանրությանը կոչ արեց չճանաչել այն¹³⁰:

Այս առումով անհրաժեշտ ենք համարում նշել, որ, ի տարբերություն «Կիպրոսի Թուրքական Հանրապետության», Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պարագայում Անվտանգության խորհուրդը միջազգային հանրությանը կոչ չի արել չճանաչել Լեռնային Ղարաբաղը, իսկ նրա անկախության հռչակագիրը չի որակել անօրինական: Ավելին, ղարաբաղյան հակամարտության կապակցությամբ ընդունված

¹²⁹ St 'u Vidmar J. International Legal Response to Kosovo's Declaration of Independence // Vanderbilt Journal of Transnational Law, Vol. 42 (2009), P. 818-827:

¹³⁰ SC resolution 541. UN Doc. S/RES/541, 18 November 1983. §§ 1, 2, 6, 7: «Միջազգային իրավունքի նորմերին Կոսովոյի անկախության միակողմ հռչակագրի համապատասխանության» խորհրդատվական եզրակացությունում Միջազգային դատարանը Անվտանգության խորհրդի գործողությունները մեկնաբանեց հենց Թուրքիայի կողմից անօրինական ուժի գործադրմամբ:

բանաձևերում Խորհուրդը Հայաստանի Հանրապետությունը չի որակել որպես ուժ գործադրած պետություն, այլ միայն կոչ է արել վերջինիս ճնշում գործադրել «տեղական հայկական ուժերի վրա»՝ վերջիններիս ռազմական առաջընթացը կասեցնելու համար¹³¹: Այդ իսկ պատճառով ԼՂՀ ստեղծման իրավական պայմանները չի կարելի համեմատել «Կիպրոսի Թուրքական Հանրապետության» ստեղծման հետ:

Մյուս կողմից անհրաժեշտ է հիշել, որ ինքնորոշման իրավունքը հարգելու պարտավորությունն ունի *erga omnes* բնույթ: Դա նշանակում է, որ բոլոր այն միջոցառումները, որոնք պետությունները կարող են ձեռնարկել որպես ոչ բռնի հակամիջոցներ այլ պետությունների հետ *vis-à-vis* հարաբերություններում, կարող են նաև կիրառվել ժողովուրդների ինքնորոշումը չհարգող պետությունների դեմ¹³²:

Մի շարք հեղինակներ առաջ են քաշում այն տեսակետը, թե պետություններն ազատ չեն անհատապես պատասխանելու *erga omnes* պարտավորությունների խախտումներին, և որ նման պարտավորությունները ենթադրում են միջազգային հանրության կոլեկտիվ պատասխան¹³³: Այդ մոտեցման հետ համաձայնվել չի կարելի, քանի որ Միջազգային դատարանի և պետությունների պրակտիկայի վերլուծությունն ապացուցում է հակառակը:

Այսպես, Միջազգային դատարանը, Նամիբիայի օկուպացիայի համատեքստում խոսելով պետությունների գործելու (և ոչ թե որոշակի գործողություններից ձեռնպահ մնալու) պարտավորության մասին, նշել է. «Միավորված ազգերի կազմակերպության կոմպետենտ մարմնի կողմից ընդունված որոշումը (որը ճանաչում էր Նամիբիայի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ոտնահարումը) չի կարող մնալ առանց հետևանքների: Եթե Դատարանը, առնչվելով նման փաստերի հետ, չհայտարարի, որ

¹³¹ St´u opինակ SC resolution 853. UN Doc. S/RES/853, 29 July 1993. § 9,

¹³² St´u Hillgruber C. The Right of Third States to Take Countermeasures // The Fundamental Rules of the International Legal Order: Jus Cogens and Obligations Erga Omnes / Tomuschat C. and Thouvenin J.-M. ed. Martinus Nijhoff Publishers, Leiden – Boston, 2006. P. 292-293:

¹³³ Черниченко С.В. Теория международного права, Том 1: Современные теоретические проблемы. Издательство «НИМП», Москва, 1999. С. 261:

առկա է պարտավորություն՝ վերջ դնել այդ իրավիճակին, դա կլինի դատական գործառույթների թերի իրականացում»¹³⁴:

Erga omnes պարտավորությունների կենսագործումը պարտադրելուն կողմ է արտահայտվել նաև Միջազգային իրավունքի հանձնաժողովը, որի՝ «Միջազգային հակաիրավական արարքների համար պետությունների պատասխանատվություն», վերտառությամբ փաստաթղթի¹³⁵ 40 և 41 հոդվածներն անդրադառնում են միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերի խախտմանը ի պատասխան պետությունների համագործակցության հիմնահարցի: 40-րդ հոդվածը տալիս է իմպերատիվ նորմի լուրջ խախտում հասկացության բնորոշումը՝ այն բնութագրելով որպես իմպերատիվ նորմից բխող պարտավորությունների «կատարման կոպիտ և պարբերական խախտում»: Իսկ 41-րդ հոդվածի համաձայն՝ պետությունները պետք է համագործակցեն («shall cooperate») «40-րդ հոդվածի իմաստով ցանկացած լուրջ խախտմանը օրինական միջոցներով վերջ դնելու համար»:

Նման պարտավորության մասին խոսել է նաև ՄԱԿ-ի միջազգային դատարանը «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժելու մասին կոնվենցիայի կիրառման» վերաբերյալ գործում՝ ցեղասպանության հանցագործության համատեքստում նշելով, որ բոլոր պետություններն ունեն անմիջական պարտականություն՝ կանխելու ցեղասպանության հանցագործության իրականացումը¹³⁶: Ընդ որում, ըստ Միջազգային դատարանի՝ այդ պարտավորության ծավալը և բովանդակությունը ենթակա են փոփոխության՝ կախված պետության աշխարհագրական դիրքից, հանցագործության զոհերի հետ ունեցած կապից, այն պետության հետ հարաբերություններից, որի տարածքում տեղի են ունենում հանցավոր գործողությունները: Այս նույն վերլուծությունը հաջողությամբ կարելի է կիրառել նաև ինքնորոշման իրավունքի համատեքստում, և նշել, որ բոլոր պետությունները

¹³⁴ Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (South West Africa) notwithstanding Security Council Resolution 276 (1970), Advisory Opinion. ICJ Reports 16 (1971), P. 54, § 117:

¹³⁵ Responsibility of States for International Wrongful Acts, GA resolution 56/83, UN Doc. A/RES/56/83. 12 December 2001:

¹³⁶ Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), ICJ Reports 43 (2003), P. 220-221, §§ 428-430:

պարտավոր են ինքնորոշման համար պայքարող ժողովուրդներին տրամադրել օժանդակություն միջազգային իրավունքի թույլատրելիության շրջանակներում: Ակնհայտ է, որ այս դեպքում ինքնորոշման համար պայքարող ժողովրդին աշխարհագրորեն մոտ և վերջինիս հետ պատմական և մշակութային կապեր ունեցող պետությունների պարտավորության շրջանակներն ավելի ընդարձակ են:

Սակայն պետք է նշել, որ հասկանալի (քաղաքական) պատճառով այս ոլորտում պետությունների ձեռնարկած իրական գործողությունները շատ սակավաթիվ են: Որպես օրինակ կարելի է բերել աֆրիկյան պետությունների 60-ական և 70-ական թթ. պրակտիկան, որոնք ակտիվորեն օժանդակություն էին տրամադրում Նամիբիայում և Ռոդեզիայիում ռասիստական ռեժիմների ճնշման ներքո գտնվող իրենց հարևան ժողովուրդներին: Ա. Կասսեզեի կարծիքով, պետք է պետությունների կողմից գործադրված հակամիջոց համարել նաև այն դեպքերը, երբ միջազգային հանրությունը հրաժարվում է իրավական ճանաչում շնորհել այն կոնկրետ իրադրություններին, որոնք խախտում են ժողովուրդների ինքնորոշման իրավունքը: Այդպիսի իրավիճակներ նա համարում է Պաղեստինի օկուպացումը Իսրայելի կողմից, Թուրքական Կիպրոսի ստեղծումը, ինչպես նաև արդեն բազմիցս հիշատակված Հարավային Ռոդեզիայի ռասիստական ռեժիմի իշխանությունը¹³⁷: Նամիբիայի գործում Միջազգային դատարանը նշեց, որ պետություններն ունեն միջազգային իրավական պարտավորություն՝ չճանաչելու ստեղծված փաստացի իրավիճակը կամ որևիցե օժանդակություն տրամադրելու Հարավային Աֆրիկային¹³⁸: Բոլոր այս դեպքերում փաստացի գոյություն ունեցող իրավիճակները չեն ստացել իրավական ճանաչում *ex injuria jus non oritur* սկզբունքի ուժով: Միջազգային հակաիրավական արարքների համար պետությունների պատասխանատվության հողվածներով Միջազգային իրավունքի հանձնաժողովը փաստորեն արտահայտում է այդ նույն մոտեցումը. 41-րդ հողվածի երկրորդ մասի համաձայն՝ «ոչ մի պետություն չպետք է 40-րդ հողվածի իմաստով լուրջ խախտում

¹³⁷ Cassese A. Self-Determination of Peoples: A Legal Reappraisal... P. 158:

¹³⁸ Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (South West Africa) notwithstanding Security Council Resolution 276 (1970), Advisory Opinion. ICJ Reports 16 (1971), P. 54-56, §§ 119-126:

հանդիսացող իրավիճակը ճանաչի իրավաչափ կամ տրամադրի օգնություն կամ օժանդակություն այդ իրավիճակը պահպանելու համար»:

§3. Ժողովուրդների ինքնորոշման և մարդու իրավունքների համընդհանուր հարգման սկզբունքների հարաբերակցությունը

Մարդու իրավունքների համընդհանուր հարգման սկզբունքը չի հիշատակվում *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրում*, իսկ ՄԱԿ-ի կանոնադրության դրույթները մարդու իրավունքների վերաբերյալ խիստ սակավաթիվ են. Կանոնադրությունը նշում է, որ, ի թիվս այլոց ՄԱԿ-ի նպատակներից է միջազգային համագործակցության իրականացումը «բոլորի համար մարդու իրավունքների և հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի տարածման և խրախուսման գործում՝ անկախ ցեղից, սեռից, լեզվից կամ դավանանքից...» (1-ին հոդված, 3-րդ կետ): Այս դրույթից բացի՝ Կանոնադրությունը խոսում է մարդու իրավունքների մասին միայն առանձին մարմինների լիազորություններին անդրադառնալիս:

Չնայած դրան՝ այսօր մարդու իրավունքների վերաբերյալ բազմաթիվ պայմանագրերի առկայության պայմաններում մարդու իրավունքների համընդհանուր հարգման միջազգային-իրավական սկզբունքի գոյությունը կասկածից վեր է¹³⁹: Մարդու իրավունքների միջազգային իրավունքն այսօր միջազգային իրավունքի առանձին և յուրահատուկ ճյուղ է: Այն յուրահատուկ է, որովհետև, ի տարբերություն միջազգային իրավունքի այլ ճյուղերի մարդու իրավունքների միջազգային իրավունքից բխող պետությունների պարտավորություններն ուղղված են ոչ միայն միջազգային հարաբերությունների առանձին անդամներին, այլ նաև իր սեփական ժողովրդին¹⁴⁰: Այսպիսով, մարդու իրավունքների ոլորտում պետությունները մի կողմից ողջ միջազգային հանրության առջև կրում են պարտավորություն՝ պահպանելու մարդու իրավունքները սեփական տարածքում, իսկ մյուս կողմից՝ պարտավորություն ինչպես սեփական ողջ բնակչության, և այնպես էլ առանձին անհատների առջև:

¹³⁹ Тункин Г. И. Теория международного права... С. 66-70:

¹⁴⁰ St 'u օրինակ Brownlie I. Principles of Public International Law. Oxford University Press, Oxford, 2008, 7th ed. P. 553-586:

Մարդու իրավունքների այս երկակի բովանդակությամբ էլ պայմանավորված՝ կարելի է ցույց տալ մարդու իրավունքների համընդհանուր հարգման սկզբունքի և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի միջև փոխներգործության երկու հարթություն. նախ՝ ինքնորոշման համար պայքարող ժողովուրդը, որը հավակնում է պետականության ստեղծման և միջազգային ճանաչման, պարտավոր է ցույց տալ, որ ինքը գործում է մարդու սովորութային իրավունքների և առաջին հերթին վերջինիս իմպերատիվ նորմերի պահանջներին համահունչ, երկրորդ՝ պետության կողմից սեփական բնակչության մի հատվածի իրավունքների լայնածավալ ոտնահարումը կարող է բնակչության այդ հատվածի արտաքին ինքնորոշման իրավունքի իրականացման հիմք հանդիսանալ: Անդրադառնանք այս երկու հիմնահարցերին ըստ հերթականության:

Այս երկու սկզբունքների փոխազդեցության առաջին հարթության մասին խոսելիս անհրաժեշտ է կրկին վերհիշել Անվտանգության խորհրդի պրակտիկան: Մենք արդեն նշել ենք, որ պետականակերպ սուբյեկտների ձևավորման մի շարք դեպքերում Անվտանգության խորհուրդը միջազգային հանրությանը կոչ է արել չճանաչել այդ սուբյեկտների պետականությունը և հակաիրավական որակել դրանց անկախության հռչակագրերը: Հատկանշական է, որ այդ իրավիճակներից առնվազն երկուսը անմիջականորեն կապված են եղել մարդու իրավունքների լայնածավալ խախտումների հետ (Հարավային Ռոդեզիա¹⁴¹ և Ռեպուբլիկա Սրապսկա)¹⁴²: Առաջինը ուներ ռասիստական ռեժիմ և պարբերաբար զինված հարձակումներ էր իրականացնում նաև հարևան պետությունների վրա: Երկրորդի իշխանությունները անմիջական առնչություն ունեին մուսուլման բնակչության և խորվաթների դեմ իրականացվող ցեղասպանությանը, մարդկության դեմ ուղղված հանցագործություններին, ինչպես նաև ռազմական հանցագործություններին: Երկու դեպքում էլ միջազգային հանրությունը չճանաչեց այդ սուբյեկտները որպես անկախ պետություններ:

Այս հիմնահարցի վերլուծության համատեքստում կարևորություն է ներկայացնում նաև Եվրոպական ընկերակցությունների ընդունած «Արևելյան Եվրոպայում և Խորհրդային Միության տարածքում նոր պետությունների ճանաչման ուղեցույց»

¹⁴¹ SC resolution 216. UN Doc. S/RES/216, 12 November 1965, §§ 1, 2: SC resolution 217. UN Doc. S/RES/217, 20 November 1965, §§ 3, 6:

¹⁴² SC resolution 787. UN Doc. S/RES/787, 16 November 1992, § 2:

վերտառությամբ փաստաթուղթը¹⁴³, որը թվարկում է մի շարք չափորոշիչներ, որոնք բավարարելու դեպքում միայն Եվրոպական պետությունները պետք է ճանաչեն նոր ձևավորված սուբյեկտների անկախ պետականությունը: Այդ չափանիշներից առաջինն է «հարգանքը ... օրենքի գերակայության, ժողովրդավարության և մարդու իրավունքների նկատմամբ», իսկ երկրորդը՝ «ԵԱՀԿ շրջանակներում սահմանված պարտավորություններին համապատասխան էթնիկ ու ազգային խմբերի և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համար երաշխիքների առկայությունը»:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարելի է վստահորեն խոսել սովորության նորմի գոյության մասին, որն արգելում է այն սուբյեկտների պետականության ճանաչումը, որոնք ակտիվորեն ներգրավված են ռասայական խտրականության, ցեղասպանության, էթնիկ գառումների և միջազգային իրավունքի այլ իմպերատիվ նորմերի ռոտահարումների մեջ (գերազանցապես մարդու իրավունքների միջազգային իրավունքից բխող): Այս կանոնի տրամաբանությունը շատ հասկանալի է. միջազգային հանրությունը չի ցանկանում սեփական շարքերը համալրել մի սուբյեկտով, որն արդեն իսկ իրավախախտ է և վտանգում է միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը:

Իսկ ի՞նչ, եթե արդեն ճանաչված և կայացած պետությունը չի հարգում իր ինքնիշխանության ներքո գտնվող ազգային և կրոնական փոքրամասնությունների իրավունքները կամ ներգրավվում է ցեղասպանության կամ այլ ծանր իրավախախտումների մեջ: Այստեղ արդեն դրսևորվում է ինքնորոշման և մարդու իրավունքների համընդհանուր հարգման սկզբունքների հարաբերակցության երկրորդ ձևը, որը կարելի է բնորոշել հետևյալ բանաձևով. «երբ մարդու իրավունքների համընդհանուր հարգման սկզբունքն անտեսվում է մի խմբի նկատմամբ, որն օժտված է ներքին ինքնորոշման իրավունքով, այդ խումբը ձեռք է բերում արտաքին ինքնորոշման հնարավորություն»: Այս տեսությունը ժամանակակից իրավաբանական գրականությունում հայտնի է «անջատում՝ որպես իրավական պաշտպանության միջոց» վերտառությամբ¹⁴⁴:

¹⁴³ Declaration on the Guidelines on the Recognition of New States in Eastern Europe and in the Soviet Union // International Legal Materials, Vol. 31 (1992). P. 1486-1488:

¹⁴⁴ Ст'ю Геворгян Л. С. Актуальные Проблемы международно-правового регулирования территориальных споров. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, ЕГУ, Ереван, 2011. С. 45-91:

Այս տեսությունը դեռևս սաղմնային տեսքով շարադրվել էր առաջին գլխում հիշատակված Աալանդ կղզու հարցի վերաբերյալ հանձնաժողովի կարծիքում: Դրա առավել մանրամասն վերլուծությանը կարող ենք հանդիպել *Քվեբեքի անջատման վերաբերյալ* Կանադայի Գերագույն դատարանի կարծիքում, որտեղ նշվում է, որ այն դեպքերում, «երբ պետության ներսում ժողովուրդի ինքնորոշման իրավունքի արդյունավետ իրականացման համար ստեղծվում են խոչընդոտներ, ժողովուրդը որպես վերջին միջոց ձեռք է բերում այդ իրավունքն անջատման միջոցով իրականացնելու իրավունք»¹⁴⁵:

Այս կապը բխում է նաև միջազգային փաստաթղթերի վերլուծությունից: Այսպես, ըստ *Գաղութային պետություններին և ժողովուրդներին անկախություն պարգևելու վերաբերյալ հռչակագրի*՝ «ժողովուրդների հնազանդեցումն օտարերկրյա հպատակեցմանը, ճնշմանը կամ չարաշահմանը մարդու հիմնարար իրավունքների ոտնահարում է», իսկ *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրի* «երաշխավորության դրույթը», ինչպես արդեն տեսանք, երրորդ պետություններին ազատում է ժողովուրդների ինքնորոշման իրավունքը խախտող պետությունների տարածքային ամբողջականությունը հարգելու պարտականությունից:

Ընդամենը մեկ տասնամյակ առաջ հեղինակները կասկածի տակ էին դնում սույն նորմի գոյությունը՝ պատճառաբանելով այն պրակտիկայի բացակայությամբ: Ըստ հեղինակների՝ միակ պետությունը, որ ստեղծվել է նման պայմաններում Բանգլադեշն է: Այսօր արդեն Կոսովոյի, Աբխազիայի և Հարավային Օսիայի գոյության, ինչպես նաև բազմաթիվ պետությունների կողմից Կոսովոյի ճանաչման պայմաններում պրակտիկայի բացակայության հարցը կարելի է համարել փակված:

Այսպիսով, միջազգային իրավունքի բոլոր սկզբունքները փոխկապված են, նպաստում են միմյանց իրականացմանը. միջազգային պայմանագրերի և ՄԱԿ-ի հռչակագրերի համեմատական վերլուծությունը և համակարգային մեկնաբանությունը վկայում են այդ մասին:

Այսպես՝ մարդու իրավունքների համընդհանուր հարգման սկզբունքն ընդգծում է սահմանը ներքին և արտաքին ինքնորոշման միջև, որոնցից առաջինն ուղղակիորեն կախված է այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու, իսկ երկրորդը՝

¹⁴⁵ Reference re Secession of Quebec, [1998] 2 S.C.R. 217, § 134 (Can.):

պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքից: Տարածքային ամբողջականության սկզբունքն իր հերթին պետությունների համար պարտավորություն է ստեղծում միջպետական հարաբերություններում, ինչպես նաև պետության/պետականության կայացման փուլում գտնվող ժողովուրդ հարաբերություններում՝ ապահովելով ժողովուրդների ինքնորոշման իրավունքի արդյունավետ իրականացումը:

**ԳԼՈՒԽ 3. ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ**

§1. Ինքնորոշման իրավունքի դատական պաշտպանությունը ՄԱԿ-ի միջազգային դատարանում և Միջազգային այլ դատական ատյաններում

Միջազգային իրավունքում իրավունքի իրացումը ներառում է իրավական նորմերի կիրառմանը, պահպանմանը և պաշտպանությանը վերաբերող սուբյեկտների գործողությունները¹⁴⁶: Իրավունքի իրացումն ապահովող միջոցները ընդգրկում են այդ իրավունքների դատական պաշտպանությունը և միջազգային հանրության այլ գործողությունները (ճանաչումը, ռազմական և այլ բնույթի օժանդակությունը)՝ ուղղված իրավունքի իրացման արդյունավետությանը:

Ինքնորոշման իրավունքի իրացման տեսանկյունից առաջին խնդիրը, որին պետք է անդրադառնալ, վերջինիս դատական պաշտպանության հիմնահարցն է: Վերջինիս բովանդակությունն առավել մանրամասն շարադրող պայմանագիրը թերևս Քաղաքացիական և քաղական իրավունքների միջազգային դաշնագիրն է, որն ունի առանձին իրավունքների «դատական» պաշտպանության մեխանիզմ իր վերահսկող մարմնի՝ Մարդու իրավունքների կոմիտեի միջոցով:

ՔՔԻՄԴ առաջին կամընտրական արձանագրությունը նախատեսում է անհատների՝ իրենց խախտված իրավունքների կապակցությամբ Մարդու իրավունքների կոմիտեին դիմելու հնարավորություն: Ուստի, երբ *«Իվան Կիտոկն ընդդեմ Շվեդիայի»* գործում Ի. Կիտոկը վիճարկեց իր ազգության ավանդական զբաղմունք համարվող եղնիկաբուծությունը սահանափակող իրավական ակտի օրինականությունը՝ պնդելով, որ այն ՔՔԻՄԴ 1-ի հոդվածի ոտնահարում է, Կոմիտեն պարզապես նշեց, որ անհատը չի կարող հավակնել ինքնորոշման իրավունքի ոտնահարման, քանի որ վերջինս ժողովուրդների իրավունք է¹⁴⁷:

¹⁴⁶ Черниченко С.В. Теория международного права, Том 1: Современные теоретические проблемы. Издательство «НИМП», М. 1999. С. 56:

¹⁴⁷ Ivan Kitok v. Sweden, Human Rights Committee Communication No. 197/1985 (CCPR/C/33/D/197/1985), final views of 27 July 1988, § 6.3:

Այս մոտեցումը Մարդու իրավունքների կոմիտեն վերահաստատեց նաև «Դիերգաարդտը և այլք ընդդեմ Նամիբիայի» գործում, որում Նամիբիայի Բաստեր ցեղի մի շարք ներկայացուցիչներ միջնորդություն էին ներկայացրել Մարդու իրավունքների կոմիտե՝ հայցելով իրենց տնտեսական չարաշահումը որակել որպես ՔՔԻՄԴ 1-ին հոդվածի խախտում, քանի որ իրենք՝ որպես ժողովուրդ գրկվել էին սեփական բնական ռեսուրսները տնօրինելու հնարավորությունից:

Մարդու իրավունքների կոմիտեն վերահաստատեց իր դիրքորոշումը՝ նշելով, որ որևիցե խմբի ժողովուրդ լինելու կամ չլինելու հիմնահարցը դուրս է Առաջին արձանագրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակից¹⁴⁸:

Մարդու իրավունքների պաշտպանությամբ լիազորված տարածաշրջանային դատական ատյաններից միայն Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հանձնաժողովը հստակ հնարավորություն ունի քննելու ինքնորոշման իրավունքին վերաբերող հարցերը, քանի որ Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիան¹⁴⁹ պարունակում է նաև ժողովուրդների ինքնորոշման իրավունքը ամրագրող հոդված, որն իր բովանդակությամբ գրեթե նույնական է ՔՔԻՄԴ 1-ին հոդվածին: Սակայն Աֆրիկյան հանձնաժողովը ինքնորոշման հիմնահարցին անդրադարձել է խիստ սահմանափակ դիտակետից:

Այսպես, «Սոցիալական և տնտեսական իրավունքների ակցիա կենտրոնը և Տնտեսական և սոցիալական իրավունքների կենտրոնն ընդդեմ Նիգերիայի» գործով մի շարք հասարակական կազմակերպություններ դիմեցին Աֆրիկյան հանձնաժողովին՝ պնդելով, որ Նիգերիայի ռազմական կառավարությունը, ներգրավված լինելով նավթաարդյունաբերության մեջ և թունավորելով Օգոնի ժողովուրդի բնակության վայրերը, խախտել է վերջիններիս ինքնորոշման իրավունքը: Հանձնաժողովը գտավ, որ

¹⁴⁸ Diergaardt et al. v. Namibia, Human Rights Committee Communication No. 760/1997 (CCPR/C/69/D/760/1997), final views of 25 July 2000, § 10.3:

¹⁴⁹ African Charter on Human Rights and Peoples' Rights, OAU Doc. CAB/LEG/67/3 rev. 5, International Legal Materials, Vol. 21, P. 58. 27 June 1981. Article 20:

Նիգերիայի կառավարությունը խախտել էր իր տարածքում բնակվող ժողովուրդների բարեկեցությունն ապահովելու պոզիտիվ պարտավորությունը¹⁵⁰:

Աֆրիկյան հանձնաժողովն իր պրակտիկայում անդրադարձել է նաև արտաքին ինքնորոշման իրավունքին: Այսպես, 1992 թ. Չաիրի (Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության) քաղաքացի ուն Ջերարդ Մոկեն, որը «Կատանգյան ժողովրդական կոնգրես» կազմակերպության առաջնորդն էր, դիմեց Աֆրիկյան հանձնաժողովին՝ պահանջելով «Կատանգյան ժողովրդական կոնգրեսը» ճանաչել որպես ազատագրական շարժում, որն իրավասու է պայքարելու Կատանգայի ինքնորոշման համար, ինչպես նաև ճանաչել Կատանգայի անկախ պետականությունը:

Քննարկելով տվյալ հիմնահարցը՝ Աֆրիկյան հանձնաժողովը *«Կատանգյան ժողովրդական կոնգրեսն ընդդեմ Չաիրի»* գործով իր հակիրճ վճռում նշեց. «Պայմաններում, երբ բացակայում են ապացույցները Մարդու իրավունքների այնպիսի լայնածավալ խախտումների վերաբերյալ, որոնք կասկածի տակ կոնեին Չաիրի տարածքային ամբողջականությունը, ինչպես նաև պայմաններում, երբ բացակայում են ապացույցներն այն մասին, որ Կատանգայի ժողովրդին չի տրվում Աֆրիկյան խարտիայի 13(1) հոդվածով երաշխավորված հնարավորություն մասնակցելու կառավարման գործընթացին, Հանձնաժողովը հակված է այն տեսակետին, որ Կատանգան պարտավոր է իրացնել ինքնորոշման այն ձևը, որը համապատասխանում է Չաիրի տարածքային ամբողջականությանը»¹⁵¹:

Այսպիսով Հանձնաժողովն ոչ միայն իրեն վերապահում է այս կամ այն մարդկանց խումբը ժողովուրդ որակելու իրավասություն (թեև առանց սահմանելու այն չափորոշիչները, որով նա առաջնորդվում է), այլ նաև, ի պատասխան ներքին ինքնորոշման իրավունքի, որդեգրել է ապագադրությամբ համատեքստից դուրս անջատման իրավունքը ճանաչելու մոտեցում¹⁵²: Թեև պրակտիկայում այն դեռևս չի

¹⁵⁰ The Social and Economic Rights Action Center and the Center for Economic and Social Rights v. Nigeria, African Commission on Human and Peoples' Rights Communication No. 155/96 (2001), §§ 57-58:

¹⁵¹ Katangese Peoples' Congress v. Zaire, African Commission on Human and Peoples' Rights, Communication No. 75/92 (1995), § 6:

¹⁵² De Schutter O. International Human Rights Law: Cases, Materials, Commentary. Cambridge University Press, Cambridge, New York, 2010. P. 701:

ճանաչել ոչ մի կոնկրետ սուբյեկտի անջատման իրավասությունը, և դժվար է ասել, թե շանձնաժողովը ունի արդյոք քաղաքական բավարար ներուժ նման քայլի դիմելու համար:

Ամեն դեպքում, հաշվի առնելով, որ ինքնորոշման իրավունքը ամրագրված չէ ո՛չ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայում և ո՛չ էլ Մարդու իրավունքների միջամերիկյան կոնվենցիայում՝ Աֆրիկյան խարտիան միակ միջազգային պայմանագիրն է, որն ընձեռում է ինքնորոշման իրավունքի դատական պաշտպանության հնարավորություն:

Ինքնորոշման իրավունքին վերաբերող հարցերի քննարկման մեկ այլ ամբիոն կարող է համարվել ՄԱԿ Միջազգային դատարանը, որի գործունեությունը, սակայն, էականորեն կաշկանդված է իր իրավասությունների շրջանակով: Դատարանի կանոնադրության համաձայն՝ այն կարող է քննել միայն պետությունների ներկայացրած հայցերը (36-րդ հոդված), ուստի ինքնորոշման համար պայքարող ժողովուրդները բնականաբար զրկված են իրենց շահերը դատարանում պաշտպանելու (*locus standi*)¹⁵³ հնարավորությունից:

Մյուս սահմանափակումը այն է, որ պետության՝ դատարանի պարտադիր իրավասությունը ճանաչած չլինելու պարագայում վերջինս հնարավորություն ունի այդ պետության վերաբերյալ գործեր քննելու միայն համապատասխան պայմանագրում այդ պայմանագրից բխող վեճերը դատարանի իրավասությանը հանձնելու վերաբերյալ դրույթի առկայության պարագայում¹⁵⁴: Քանի որ ինքնորոշման վերաբերյալ նորմատիվ իրավական բազան գերազանցապես սովորութային բնույթ ունի, դատարանի առջև ինքնորոշման վերաբերյալ հարցերի բարձրացումն ավելի է դժվարանում:

Մյուս կողմից՝ Միջազգային դատարանն իր Կանոնադրության համաձայն իրավասու է ՄԱԿ-ի կանոնադրությամբ լիազորված ցանկացած մարմնի խնդրանքով տալ «խորհրդատվական եզրակացություն ցանկացած իրավական հարցի վերաբերյալ» (65-րդ հոդված): Հետևաբար հենց խորհրդատվական եզրակացությունների շրջանակում

¹⁵³ Brownlie I. Principles of Public International Law. Oxford University Press, Oxford, 2008, 7th ed. P. 449-454:

¹⁵⁴ Zimmermann A., Tomuschat C. Oellers-Frahm K. The Statute of the International Court of Justice: Oxford Commentaries on International Law. Oxford University Press, Oxford, New York, 2006. P. 594-596:

է, որ Միջազգային դատարանը հիմնականում անդրադարձել է ժողովուրդների ինքնորոշման սկզբունքին և այլ հարակից հարցերի: Սակայն դա բոլորովին էլ չի նսեմացնում դատարանի ներդրումը ինքնորոշման սկզբունքի հստակեցման գործում, քանի որ խորհրդատվական եզրակացությունները դատարանի վճիռների նման նույնպես ունեն իրավաստեղծ նշանակություն և կարող են ծառայել որպես սովորութային նորմերի հստակեցմանը նպաստող միջազգային իրավունքի երկրորդական աղբյուր¹⁵⁵:

Այսպես՝ Միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացությունները էական դերակատարություն ունեցան ինքնորոշման իրավունքի սահմանների և բովանդակության պարզաբանման գործում: Ինչպես արդեն նշվեց առաջին գլխում, *«Պետությունների համար հակառակ Անվտանգության խորհրդի բանաձև 276-ի (1970), Նամիբիայում (Հարավարևմտյան Աֆրիկա) Հարավային Աֆրիկայի շարունակական ներկայության իրավական հետևանքների»* վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունում դատարանը նշեց, որ Ազգերի լիգայի շրջանակներում ստեղծված Մանդատի համակարգի նպատակը հենց ժողովուրդների շահերի պաշտպանությունն էր¹⁵⁶, այն է՝ կիրառել միջազգային իրավունքի այն ելակետային կանոնը, որի համաձայն՝ նորմերը պետք է մեկնաբանվեն գործող իրավական համակարգի լույսի ներքո: Արդյունքում դատարանը փաստորեն հաստատեց ինքնորոշման իրավունքի «հետադարձ» ուժը՝ տարածելով այն նաև նախքան 1945 թ. ստեղծված իրավահարաբերությունների վրա¹⁵⁷:

Այդ գործում Միջազգային դատարանը նաև որոշակիացրեց Գլխավոր ասամբլեայի հռչակագրերի իրավական նշանակությունը՝ նշելով, որ վերջիններիս շնորհիվ ինքնորոշման իրավունքի շարունակական զարգացման արդյունքում վերջինս այժմ

¹⁵⁵ Shahabuddeen M. Precedent in the World Court. Cambridge University Press, Cambridge / New York / Melbourne, 1996. P. 171: См. также Тункин Г.И. Основы современного международного права. Юридическая литература, Москва, 1956. С. 13:

¹⁵⁶ Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (South West Africa) notwithstanding Security Council Resolution 276 (1970), Advisory Opinion, ICJ Reports 16 (1971), P. 29, § 46:

¹⁵⁷ Cassese A. The International Court of Justice and the Right of Peoples to Self-Determination // Fifty Years of the International Court of Justice: Essays in Honour of Sir Robert Jennings. Ed. by Lowe V. & Fitzmaurice M. Cambridge University Press. 1996. P. 354:

տարածվում է բոլոր ոչ ինքնակառավարվող տարածքների վրա¹⁵⁸:

Դատարանի կարևոր ներդրումներից էր նաև ժողովուրդների իրավասուբյեկտությանն ընդգծումը. հանգամանք, որը արևմտյան գրականությունում հերքվում էր բազմաթիվ հեղինակների կողմից¹⁵⁹ և անգամ այսօր էլ միանշանակորեն չի ընդունվում¹⁶⁰, թեև խորհրդային գրականությունում ժողովուրդների իրավասուբյեկտության հիմնահարցը երբեք վիճահարույց չի եղել¹⁶¹: Այսպես, Միջազգային դատարանը, մեկնաբանելով ՄԱԿ-ի կանոնադրության 80-րդ հոդվածի 1-ին մասը, որն օգտագործում է «ժողովուրդների իրավունքներ» ձևակերպումը, նշեց, որ այն ակնհայտորեն խոսում է մանդատային տարածքների բնակչության և մասնավորապես բնիկ ժողովուրդների իրավասուբյեկտության մասին¹⁶²:

Ինքնորոշման իրավունքի բովանդակության հստակեցման հարցում կարևոր դեր խաղաց նաև «*Արևմտյան Սահարայի*» վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը, որում դատարանն ընդգծեց ինքնորոշման իրավունքի իրացման համար կարևորագույն նշանակություն ունեցող տարրերից մեկը՝ «ժողովրդի ազատորեն արտահայտած կամքը հաշվի առնելու անհրաժեշտությունը»¹⁶³: Նախքան դա այս հանգամանքը չէր հստակեցվում ո՛չ Գլխավոր ասամբլեայի բանաձևերում, ո՛չ իրավաբանական գրականությունում և ո՛չ էլ պետությունների պրակտիկայում: Իհարկե ապագադրության գործընթացում անցկացվում էին հանրաքվեներ, սակայն հստակեցված չէր, թե դրանք ապագադրության գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակ էին հետապնդում, թե միջազգային իրավական պարտավորություններ էին: Դատարանը հստակորեն պարզաբանեց, որ հանրաքվեի կազմակերպումը միջազգային

¹⁵⁸ Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (South West Africa) notwithstanding Security Council Resolution 276 (1970). P. 31, § 52:

¹⁵⁹ Տե՛ս մասնավորապես՝ Arangio-Ruiz G. The Normative Role of the General Assembly of the United Nations and the Declaration of Principles of Friendly Relations // Collected Courses of The Hague Academy of International Law. Vol. 137 (1972), pp. 563:

¹⁶⁰ Conference on Yugoslavia Arbitration Commission: Opinions on Questions Arising from the Dissolution of Yugoslavia, Opinion No. 2 // International Legal Materials. Vol. 31 (1992), P. 1498, § 1:

¹⁶¹ Տե՛ս մասնավորապես՝ Аджаров К.А. Международное право. Юридическая литература, Москва, 1964. С. 115-139: Кожевников Ф.И. (Отв. ред.) Международное право. Международные отношения, Москва, 1964. С. 159-162:

¹⁶² Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (South West Africa) notwithstanding Security Council Resolution 276 (1970). P. 33, § 59:

¹⁶³ Western Sahara, Advisory Opinion, ICJ Reports 12 (1975), P. 33, § 59:

պարտավորություն է՝ նշելով, որ առկա են միայն երկու բացառություններ. հանրաքվե անհրաժեշտ չէ, երբ պետականության կայացման փուլում գտնվող տարածքի բնակչությունը լիովին չի համապատասխանում «ժողովուրդ» բառի իմաստին, կամ՝ եթե հանրաքվեն բացարձակապես անհրաժեշտ չէ՝ առկա հանգամանքների պատճառով¹⁶⁴:

Դատարանը, սակայն, չպարզաբանեց, թե որ հանգամանքների առկայության հետևանքով է, որ հանրաքվեի անցկացումը կարող է դառնալ բացարձակապես անհրաժեշտ: Կարելի է ենթադրել, որ խոսքը այն դեպքերի մասին է, երբ տարածքի ողջ բնակչության կամքն առավել քան ակնհայտ է (օրինակ՝ երբ նա պայքար է մղում մայր պետության դեմ՝ հանուն իր անկախության): Եթե մեր այս մեկնաբանությունը ճիշտ է, ապա Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ևս մեկ հանրաքվե անցկացնելու միջազգային հանրության կոչերը զուրկ են որևէ իրավական հենքից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պետք է նշենք, որ Միջազգային դատարանը հսկայական դերակատարություն է ունեցել ապագադուրացման նորմատիվ իրավական կարգավորումը հստակեցնելու գործում: Սակայն, դրա հետ մեկտեղ, վերջինիս վերլուծությունները դուրս չեն եկել ապագադուրացման շրջանակներից. Միջազգային դատարանը անդրադարձել է ժողովուրդների ինքնորոշման սկզբունքին միայն այդ համատեքստում¹⁶⁵: Դա պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Առաջին հերթին Միջազգային դատարանի առաջ ինքնորոշմանն առնչվող հարցեր բարձրացվել են միայն ապագադուրացման համատեքստում, և նաև այն դեպքերում, երբ դատարանը կարող էր օգտվել իր հնարավորությունից՝ անդրադառնալու ինքնորոշման իրավունքին նաև այլ կողմերից, սակայն դրանից միտումնավոր չի օգտվել: Այսպիսի հնարավորություն դատարանը մասնավորապես ուներ *«Միջազգային իրավունքի նորմերին Կոսովոյի անկախության միակողմ հռչակագրի համապատասխանության»* վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունում, որում դատարանը սակայն նշեց, որ «չկա անհրաժեշտություն անդրադառնալու այդ (արտաքին ինքնորոշման և անջատման իրավունքի վերաբերյալ) հարցերին ներկա գործում: Գլխավոր ասամբլեայի հարցումը վերաբերում է միայն անկախության հռչակագրերի՝ միջազգային իրավունքի նորմերի հետ համապատասխանության

¹⁶⁴ Նույն տեղում:

¹⁶⁵ Cassese A. The International Court of Justice and the Right of Peoples to Self-Determination. P. 352:

հիմնահարցին: Սակայն ինքնորոշման իրավունքի ծավալի և ... անջատման իրավունքի վերաբերյալ քննարկումները վերաբերում են Պետությունից անջատվելու իրավունքին: Ինչպես Դատարանն արդեն նշել է, ... այդ հարցը դուրս է գալիս Գլխավոր ասամբլեայի կողմից դրված հարցի շրջանակներից»¹⁶⁶:

Հատկանշական է, որ մի շարք դեպքերում դատարանը ինքն իրեն չի կաշկանդել Գլխավոր ասամբլեայի կողմից արդեն շարադրված հարցի շրջանակներով և հստակեցրել է այն¹⁶⁷, սակայն տվյալ դեպքում, ինչպես արդեն նշվեց, դատարանը դրսևորեց ակնհայտ խուսափողական մոտեցում, ինչը կարող էր պայմանավորված լինել նաև քաղաքական բացասական հետևանքներից խուսափելու ցանկությամբ:

Վերոգրյալից բխում է, որ քանի դեռ ինքնորոշման իրավունքը կարող է պետությունների շահերի և տարածքային հավակնությունների սպառնալիք հանդիսանալ, ՄԱԿ-ի Միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացությունները չեն կարող ապագադրության համատեքստից դուրս ինքնորոշման իրավունքի պաշտպանության կամ անգամ այդ իրավունքի բովանդակության պարզաբանման արդյունավետ միջոց ծառայել: Մյուս կողմից, ինչպես արդեն նշվեց, ժողովուրդները գրկված են Միջազգային դատարանի առջև իրենց իրավունքների պաշտպանության իրավասությամբ: Հետևաբար առաջանում է հարց. ինքնորոշման իրավունքը ենթակա՞ է արդյոք դատական պաշտպանության առհասարակ:

Միջազգային դատարանում ինքնորոշման իրավունքի պաշտպանության մեկ այլ տեսական (դեռևս պրակտիկայում երբեք չկիրառված) հնարավորություն կարող է պայմանավորված լինել այդ իրավունքի՝ միջազգային իրավունքի համակարգում ունեցած դերով՝ հաշվի առնելով միջազգային հարաբերություններում այդ նորմի հիմնարար իրավական նշանակությունը¹⁶⁸: Ինչպես արդեն նշվեց, Միջազգային դատարանն «Արևելյան Թիմորի» վերաբերյալ գործում արտահայտեց այն կարծիքը, որ

¹⁶⁶ Accordance with International Law of Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo, ICJ General List 141 (2010). § 83:

¹⁶⁷ West Sahara. P. 30, § 52; Aljaghoub M.M. The Advisory Function of the International Court of Justice 1946-2005. Springer, Berlin, 2006. P. 63-67:

¹⁶⁸ Ст'у Моджорян Л.А. Основные права и обязанности государств. Юридическая литература, Москва, 1965. С. 156:

ինքնորոշման իրավունքի *erga omnes* բնույթն անվիճելի է¹⁶⁹: Քանի որ *erga omnes* պարտավորությունների ապահովման հարցում շահագրգռվածությունը ողջ պատկանում այլև ոչ միայն տուժած սուբյեկտին միջազգային հանրությանն է վերաբերում, ինքնորոշման իրավունքի ոտնահարման պարագայում նույնպես շահագրգիռ կողմերի ցանկը չի սահմանափակվում տուժող ժողովրդով և ներառում է պետությունների ողջ միջազգային հանրությունը: Ավելին, ինչպես արդեն նշվեց նախորդ գլխում, «Օկուպացված պաղեստինյան տարածքում պատի կառուցման իրավական հետևանքների» վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունում Միջազգային դատարանը նշեց, որ բոլոր պետությունները պարտավոր են չճանաչել այն *de facto* տարածքային իրավիճակը, որը առաջանում է ինքնորոշման իրավունքի ոտնահարման հետևանքով¹⁷⁰: Սակայն, կարո՞ղ են արդյոք պետությունները, բացի անգործությունից (չճանաչելու միջոցով), պաշտպանել ինքնորոշման իրավունքը նաև ակտիվ գործողությունների դիմելու միջոցով, մասնավորապես՝ բարձրացնել հարցը Միջազգային դատարանում որպես *erga omnes* պարտավորությունների հասցեատեր երրորդ կողմ:

Հետևաբար, կենտրոնական հարցերից մեկը, որին պետք է պատասխանել, այն է, թե արդյո՞ք պարտավորության *erga omnes* բնույթն ընձեռում է այդ պարտավորության խախտման հիմնահարցը դատարանում բարձրացնելու հնարավորություն ցանկացած պետության կողմից:

Այս քննարկումը սկսելուց առաջ նախ անհրաժեշտ է ևս մեկ անգամ ընդգծել այն տարբերությունը, որը գոյություն ունի գործը դատարանի առջև բարձրացնելու պետության իրավասության (*locus standi*) և դատարանի՝ գործը քննելու իրավասության (*forum*) միջև¹⁷¹: Անգամ եթե ենթադրենք, թե պարտավորության *erga omnes* բնույթն ընձեռում է բոլոր պետություններին հարցը դատարանի առջև բարձրացնելու և պաշտպանելու իրավասությամբ, դա դեռևս չի նշանակում, որ Միջազգային դատարանը իրավասու է քննելու կոնկրետ գործը, քանի որ վերջինս արդեն կախված է նաև ենթադրյալ իրավախախտ կողմի Միջազգային դատարանի (կամ որևէ այլ միջազգային

¹⁶⁹ East Timor (Portugal v. Australia), ICJ Reports 90 (1995), P. 102, § 29:

¹⁷⁰ Legal Consequences of the Construction of a Wall in the Occupied Palestinian Territory, Advisory Opinion, ICJ Reports 136 (2004). P. 200, § 159:

¹⁷¹ Seiderman I.D. Hierarchy in International Law: The Human Rights Dimension. Intersentia, Antwerpen, 2001. P. 136-137:

դատական աստյանի) իրավասությունն ընդունած լինելու հանգամանքից: Այս մոտեցումն է արտահայտել նաև Միջազգային դատարանն «Արևելյան Թիմորի» գործում՝ օգտագործելով այն որպես հիմնական իրավական հիմք գործը կարճելու համար:

Այդ գործում Պորտուգալիան հայց էր հարուցել Ավստրալիայի դեմ՝ պնդելով, որ վերջինս, իրականացնելով մայրցամաքային էլուստի ռեսուրսների օգտագործման աշխատանքներ, խախտում էր Արևելյան Թիմորի ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Մինչդեռ, Ավստրալիայի դիրքորոշման համաձայն, Միջազգային դատարանը չէր կարող քննել գործը, քանի որ Արևելյան Թիմորը օկուպացնող Ինդոնեզիան, որը սվյալ գործով հանդիսանում էր անօտարելի երրորդ կողմ (կողմ, որի իրավունքներին դատարանի վճիռն անխուսափելիորեն կանդրադառնար¹⁷²), ենթակա չէր դատարանի պարտադիր իրավասությանը:

Սակայն, Պորտուգալիայի կարծիքով այս փաստարկը չէր կարող էական իրավական նշանակություն ունենալ՝ հաշվի առնելով ինքնորոշման իրավունքի *erga omnes* բնույթը: Չնայած Պորտուգալիայի այս փաստարկին՝ Միջազգային դատարանը եզրակացրեց, որ ինքնորոշման իրավունքի *erga omnes* բնույթը և պետության ենթակայությունը դատարանի իրավասությանը տարբեր երևույթներ են, ուստի դատարանը նշեց. «Անկախ վիճարկվող պարտավորության բովանդակությունից՝ դատարանը չի կարող որոշում կայացնել պետության վարքագծի իրավաչափության վերաբերյալ, եթե վճիռը պետք է պարտադիր ենթադրի մեկ այլ՝ գործին մասնակից չհանդիսացող պետության գործողությունների գնահատում»¹⁷³:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մեր հարցը կարելի է առավել հստակեցնել հետևյալ կերպ՝ կարո՞ղ է արդյոք անմիջականորեն չտուժած կողմը բարձրացնել իրավախախտման հարցը միջազգային դատական աստյանի առջև, երբ վերջինիս ունի հստակ իրավասություն ենթադրյալ իրավախախտի նկատմամբ:

Ինչպես արդեն նշվել է, «*Furukelina Թրեքշն*» գործում Միջազգային դատարանն ընդգծեց այն տարբերությունը, որը առկա է *erga omnes* և *vis-à-vis* պարտավորությունների միջև՝ փաստելով, որ բոլոր պետությունները ունեն իրավական շահ

¹⁷² Monetary Gold Removed from Rome in 1943 (Preliminary Questions) (Italy v. France, U.K and U.S.A.), ICJ Reports 19 (1954), P. 32:

¹⁷³ East Timor (Portugal v. Australia), ICJ Reports 90 (1995), P. 102, § 29:

առաջինների պաշտպանության հարցում¹⁷⁴: Այստեղ առանցքային է այն հարցը, թե արդյոք «իրավական շահ» հասկացությունը ենթադրում է նաև պետությունների ինքնուրույն պատասխան քայլեր ձեռնարկելու և դատարանում հարցը քննարկելու իրավասություն:

Այս հարցը քննարկվել է բազմաթիվ հեղինակների կողմից, սակայն մի շարք մասնագետների կարծիքով՝ *erga omnes* պարտավորությունների վերաբերյալ «*Բարսելոնա Թրեքշն*» գործում դատարանի արտահայտած դատողությունը մեկուսացված իրավական վերլուծություն է, որին իրավաբանական գրականությունում ավելի մեծ ուշադրություն հատկացվել է և տրվել է ավելի շատ իմաստ, քան դատարանը մտադիր էր այդ հասկացության մեջ ներդնել¹⁷⁵:

Թեև քննարկվող վճռի կայացմանը հաջորդած մի քանի տարիների ընթացքում նման քննադատությունը կարող էր թվալ տրամաբանական, այսօր այն լիովին զուրկ է իրավաբանական հիմքից այն պարզ պատճառով, որ ինքը՝ Միջազգային դատարանը, արդեն բազմիցս անդրադարձել է *erga omnes* պարտավորություններին նաև այլ դատական գործերում և առանձին դատավորների եզրակացություններում:

Հասկացության մեջ սխալ իմաստ դնելու վերաբերյալ դատողությունը նույնպես չի համապատասխանում իրականությանը: «*Բարսելոնա Թրեքշն*» գործը վերաբերում էր Կանադայում գրանցված իրավաբանական անձի, որը Իսպանիայի տարածքում զբաղվում էր էլեկտրաէներգիայի վաճառքով: Կազմակերպության սեփականատերերը Բելգիայի քաղաքացիներ էին, որոնք ֆինանսական մեծ կորուստներ ունեցան Իսպանիայում գործող արտարժույթի առուվաճառքի ժամանակավոր օրենսդրական սահմանափակումների պատճառով: Հետևաբար, Միջազգային դատարանի քննարկման առարկան առաջին հերթին հենց Բելգիայի՝ գործը դատարանում պաշտպանելու իրավասությամբ օժտված լինելու կամ չլինելու հարցն էր, և այդ իսկ պատճառով վճռի 33 և 34 կետերը սխալ մեկնաբանելու վերաբերյալ դատողությունը լիովին անհիմն է:

¹⁷⁴ Barcelona Traction, Light and Power Company, Limited (Belgium v. Spain), Second Phase, ICJ Reports 3 (1970), P. 32, §§ 33-34:

¹⁷⁵ St' u Sinclair I. State Responsibility and the Concept of Crimes of States // International Crimes of States: A Critical Analysis of the ILC's Draft Article 19 of State Responsibility. Ed. by Weiler J.H.H., Cassese A., Spinedi M. Walter de Gruyter & Co., Berlin, 1989. P. 225: St' u նաև Gray C. Judicial Remedies in International Law. Clarendon Press, New York, 1987. P. 214:

Դատարանի վճռի համապատասխան հատվածի մեկնաբանությունը, որպես դատարանի առջև հանդես գալու իրավունքի վերաբերյալ վերլուծություն, լիովին պայմանավորված է վճռի բովանդակությամբ և տրամաբանությամբ:

Քննադատական մյուս մոտեցման համաձայն՝ *erga omnes* պարտավորությունների հասցեատեր են ոչ թե պետություններն առանձին-առանձին, այլ ողջ միջազգային հանրությունը¹⁷⁶, և քանի որ Միջազգային դատարանում գործի քննության մասնակից կարող են լինել պետությունները և ոչ թե միջազգային հանրությունը ամբողջությամբ, հետևաբար դատարանը չի կարող պատշաճ ամբիոն ծառայել *erga omnes* պարտավորությունների խախտումները քննելու համար¹⁷⁷: Ըստ վերոնշյալ տեսության՝ *erga omnes* պարտավորությունների պաշտպանությունը պետք է իրացվի միջազգային կազմակերպությունների կոլեկտիվ մարմինների կողմից, օրինակ՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կամ Անվտանգության խորհրդի:

Այս մոտեցումն իրականում դատարանի եզրակացության սխալ մեկնաբանության արդյունք է: Այսպես, դատարանը «*Բարսելոնա Թրեքշն*» գործի 33 և 34 կետերում չի խոսվում միջազգային ողջ հանրության շահագրգռվածության մասին, այլ օգտագործում է «բոլոր պետություններն ունեն իրավական շահ» ձևակերպումը, որը որպես միջազգային ողջ հանրություն որակելը պարզապես անտեղի է:

Հեղինակների մյուս խումբը հերքում է *erga omnes* պարտավորության հիմքով գործը դատարանում քննելու հնարավորությունը նույն «*Բարսելոնա Թրեքշն*» գործում առկա ներքին հակասությունների հիմքով¹⁷⁸: Այսպես վճռի 91-րդ կետում Միջազգային դատարանը նշում է. «Մարդու իրավունքների ունիվերսալ պայմանագրերը պետություններին հնարավորություն չեն ընձեռում պաշտպանելու այդ իրավունքների խախտումների գոհերին՝ անկախ իրենց քաղաքացիությունից»: Այս հեղինակների կարծիքով, դատարանի վերոնշյալ դատողությունն ակնհայտորեն վկայում է այն մասին,

¹⁷⁶ Ago R. Obligations Erga Omnes and the International Community // International Crimes of States. P. 238:

¹⁷⁷ Greig D. Reciprocity, Proportionality, and the Law of Treaties // Virginia Journal of International Law, Vol. 34 (1994), P. 304:

¹⁷⁸ St' u Theodor M. On a Hierarchy of International Human Rights // American Journal of International Law, Vol. 80 (1986), P. 11-12; Thirlway H. The Law and Procedure of the International Court of Justice – Part One // British Year Book of International Law, Vol. 60 (1989), P. 99-100:

որ *erga omnes* պարտավորությունները պարզապես գուրկ են դատական պաշտպանության հնարավորությունից:

Հեղինակների այս խումբը, սակայն, անտեսում է Միջազգային դատարանի վճռի շարունակությունը: Այսպես դատարանը նշում է. «Հետևաբար սույն խնդրի լուծումը պետք է գտնվեր տարածաշրջանային մակարդակում. այսպես, Եվրոպայի խորհրդի շրջանակներում, որին Իսպանիան չի անդամակցում (1970 թ. դրությամբ – Չ.Մ.), ... Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան յուրաքանչյուր անդամ պետությանը ընձեռում է յուրաքանչյուր այլ անդամ պետության դեմ Կոնվենցիայի խախտման հիմքով հայց ներկայացնելու հնարավորություն՝ անկախ գոհերի քաղաքացիությունից»:

Համեմատելով «*Բարսելոնա Թրեքշն*» վճռի տարբեր հատվածները՝ հասկանալի է դառնում, որ Դատարանը, փաստորեն, պարզապես քննարկում էր պետության՝ հարցը դատարանի առջև բարձրացնելու իրավասության և դատարանի՝ գործը քննելու իրավասության տարբերությունը (որին անդրադարձանք վերևում) և հանգում այն եզրակացության, որ ինքը իրավասու չէ քննելու գործը այն պարզ պատճառով, որ մարդու իրավունքների ունիվերսալ և տարածաշրջանային պայմանագրերը 1970 թ. դրությամբ Իսպանիայի Թագավորության վրա չէին տարածվում:

Արդյունքում ակնհայտ է դառնում, որ «*Բարսելոնա Թրեքշն*» գործում Միջազգային դատարանի առաջ քաշած *erga omnes* պարտավորությունների հասկացությունը կարող է և պետք է հիմք հանդիսանա գործը դատարանում քննելու համար: Եթե դա այդպես չլիներ, ապա *erga omnes* պարտավորությունների տարբերակումը *vis-à-vis* պարտավորություններից զրկված կլիներ կիրառական իրավական նշանակությունից, ավելին՝ այն կվերածվեր պարտավորության, որը չի առաջացնում մյուս կողմի իրավունքը¹⁷⁹ կամ առաջացնում է իրավունք, որը, սակայն, հնարավոր չէ պաշտպանել: Հասկանալի է, որ իրավական առումով նման իրավիճակը լիովին կիմաստազրկվեր:

Դրա հետ մեկտեղ՝ *erga omnes* պարտավորությունների խախտման հիման վրա դատական վարույթ հարուցելու հնարավորության տեսությունն ունի մեկ թերություն. պրակտիկայում դատարանը երբեք չի քննել գործեր, որոնք վարույթ վերցված կլինեին

¹⁷⁹ Левин Д. Б. Актуальные проблемы теории международного права. Издательство «Наука», Москва, 1974. С. 70: Tams C.J. Enforcing Obligations Erga Omnes in International Law. Cambridge University Press, Cambridge-New York, 2005. P. 158:

հենց *erga omnes* պարտավորության խախտման հիմքով: Դա, սակայն, կարելի է հեշտությամբ բացատրել քաղաքական նկատառումներով. պետությունները պարզապես հակված չեն վատթարացնելու իրենց հարաբերությունները այլ պետությունների հետ, եթե վերջիններիս կողմից հասցված վնասն անմիջական չէ: Հետևաբար, պրակտիկայի բացակայությունը դեռևս հիմք չէ իրավունքի պաշտպանության հնարավորությունը հերքելու համար: Նույն միջազգային Դատարանը, ինչպես արդեն նշվեց, ընդգծել է ոչ միայն *erga omnes* պարտավորությունների իրականացման հարցում պետությունների շահագրգռվածությունը, այլև գործելու պարտավորությունը (գործողությունների կանխում, իրավիճակի չճանաչման պարտավորություն և այլն):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ինքնորոշման իրավունքի դատական պաշտպանության հնարավորությունը երրորդ պետությունների հայցի հիմքով լիովին տրամաբանական է և հիմնավորված: Հետևաբար՝ ինքնորոշման իրավունքի իրացման անհնարինության վերաբերյալ մի շարք հեղինակների դատողությունները գուրկ են իրավական պատշաճ հիմնավորվածությունից:

§2. Ինքնորոշման իրավունքի արտադատական պաշտպանությունը. նյութական և ռազմական օժանդակություն, ճանաչում

Նախորդ պարագրաֆում ներկայացված վերլուծությունը ցույց է տալիս, որ ինքնորոշման իրավունքի դատական պաշտպանությունը միջազգային իրավունքի ապակենտրոնացված համակարգում չի կարող լինել լիովին արդյունավետ և ունի բազմաթիվ թերություններ: Ուստի անհրաժեշտ է քննարկել նաև ինքնորոշման իրավունքի իրացման արտադատական միջոցները:

Ապագադրությամբ համատեքստում ինքնորոշման իրավունքի իրացման կենտրոնական ամբիոնը եղել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան: Սակայն վերջինս իրավասու չէ միջամտելու այնպիսի պետությունների ներքին գործերին, ինչպիսիք են, ըստ ՄԱԿ-ի տեսակետի, ապագադրությամբ համատեքստից դուրս առաջացած անջատողական շարժումները, քանի որ ՄԱԿ-ի կանոնադրությունը չի ստեղծվել նման իրավահարաբերությունների կարգավորման նպատակով. նրա առաջնային նպատակը

եղել է միջպետական զինված ընդհարումների կանխարգելումը կոլեկտիվ անվտանգության համակարգի միջոցով¹⁸⁰:

ՄԱԿ-ը կամ, ավելի ճիշտ, Անվտանգության խորհուրդը իրավասու է մտնելու այդ իրավահարաբերությունների ոլորտ միայն այն դեպքերում, երբ անջատողական շարժումը հանգեցնում է քաղաքացիական պատերազմի և սպառնում վտանգել միջազգային անվտանգությունն ու խաղաղությունը՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին հնարավորություն ընձեռելով գործելու Կանոնադրության VII գլխի շրջանակներում:

1990-ական թթ. սկսած՝ ՄԱԿ-ին Անվտանգության խորհուրդը «խաղաղության սպառնալիք» բանաձևը (որը հանդիսանում է ՄԱԿ-ի միջամտության նախապայման է) սկսեց տարածել նաև ներպետական բնույթի զինված ընդհարումների վրա¹⁸¹: Անվտանգության խորհրդի բանաձև 713-ը, որը հանձնարարում էր Հարավսլավիայի ռազմական էմբարգո (շրջափակում), հեղինակների կողմից հաճախ հիշատակվում է որպես անջատման գործընթացին ՄԱԿ-ի միջամտության բեկումնային օրինակ¹⁸², թեև, ինչպես արդեն նշեցինք նախորդ գլխում, Անվտանգության խորհուրդը բազմիցս միջամտել է նաև ներպետական այլ վեճերի, երբ վերջիններս պատճառ են հանդիսացել բազմաթիվ մարդկային զոհերի և փախստականների հոսքի:

Սակայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն գերազանցապես միջամտում է մայր պետության տարածքային ամբողջականությունը պաշտպանելու և ոչ թե անջատողական շարժմանը օժանդակելու նպատակով: Այս հանգամանքը պատճառ է դարձել մի շարք հեղինակների համար՝ պնդելու, որ ՄԱԿ-ի քաղաքականությունն ապագադրությամբ համատեքստից դուրս առաջին հերթին ուղղված է պետությունների տարածքային ամբողջականության պաշտպանությանը և ոչ թե ինքնորոշման իրավունքի ապահովմանը, և որ

¹⁸⁰ Brierly J.L. *The Law of Nations: An Introduction to the International Law of Peace*. 6th ed. by Waldock H. Clarendon Press, Oxford, 1963. P. 414:

¹⁸¹ Nolte G. *Secession and External Intervention // Secession: International Law Perspectives*. Ed. by Kohen M. G. Cambridge University Press, Cambridge-New York, 2006. P. 67:

¹⁸² Franck T.M. *Fairness in the International Legal and Institutional System: General Course on Public International Law // Collected Courses of The Hague Academy of International Law*. Vol. 240 (1993), p. 211:

անջատողական շարժումներին օժանդակելը ՄԱԿ-ի պրակտիկայում համընդհանուր կանոն է, այլ ոչ թե բացառություն¹⁸³:

Այս մոտեցմանը մենք չենք կարող համաձայնվել այն պարզ պատճառով, որ այդ պարագայում անտեսվում է էական տարբերությունն այն իրավիճակների միջև, որոնք վերաբերում են օտարերկրյա պետությունների միջամտությանը, և այն իրավիճակներին, որոնցում անջատողական շարժումը պայքարում է իր անկախության համար առանց օտարերկրյա միջամտության:

Առաջին անգամ անջատողական շարժման և մայր պետության միջև տեղի ունեցող ընդհարմանը ՄԱԿ-ը միջամտել է Կատանգայի և Կոնգոյի միջև պայքարի ժամանակ: Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության ստեղծումից անմիջապես հետո՝ 1960 թ., Կատանգան հռչակեց իր անկախությունը Կոնգոյից՝ մտնելով վերջինիս հետ երկարատև զինված ընդհարման մեջ¹⁸⁴: Ջինված ընդհարումների առաջին իսկ պահից ընդհուպ Կատանգայի անջատողական շարժման ոչնչացումը ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը սատարել է Կոնգոյին և նրա տարածքային ամբողջականությունը: Սակայն այստեղ կարևորն այն է, որ Բելգիան ոչ միայն ֆինանսավորում էր Կատանգայի անջատողական շարժումը, այլև նրա զինված ջոկատները տեղական ուժերի հետ կողք կողքի պայքարում էին Կոնգոյի զինված ուժերի դեմ (Բելգիան ուներ շահագրգռվածություն, քանի որ Կատանգայի տարածքում գտնվում էին ոսկու և պղնձի հարուստ հանքեր):

Այս հանգամանքը վճռորոշ էր Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերում. այսպես՝ բանաձև 169-ը դատապարտեց «անջատողական քայլերը և ռազմական գործողությունները, որոնք իրականացվում են Կատանգային վարչակազմի կողմից՝ արտաքին ֆինանսավորման և օտարերկրյա զինված ջոկատների միջոցով»¹⁸⁵: Այսինքն՝ Կատանգայի անջատողական շարժումն իրականում ոչ թե ինքնորոշման իրավունքի դրսևորում էր, այլ, ընդհակառակը, այդ իրավունքի ոտնահարում. նախկին գաղութատերը՝ Բելգիան, փորձում էր տրոհել ապագաղութացման շնորհիվ առաջացած

¹⁸³ Buchheit L.C. Secession – The Legitimacy of Self-Determination. Yale University Press, New Haven, 1978. P. 151:

¹⁸⁴ Քննարկվող իրադարձությունների մանրամասն վերլուծության համար տե՛ս Abi-Saab G. The United Nations Operation in the Congo 1960–1964. Oxford University Press, Oxford, 1978:

¹⁸⁵ SC resolution 169 (1961). UN Doc. S/5002, 24 November 1961. § 1:

պետության՝ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության (այսինքն՝ ինքնորոշման սուբյեկտի) տարածքային ամբողջականությունը:

Հետևաբար ՄԱԿ-ի միջամտությունը Կոնգո իրականում կարելի է որակել որպես ռազմական՝ ի իրականացումն *Գաղութային հռչակագրի* պահանջների, քանի որ, ինչպես արդեն նշվել է առաջին գլխում, վերջինս սահմանում է պարտավորություն բոլոր պետությունների համար՝ հարգել «բոլոր **ժողովուրդների** ինքնիշխան իրավունքները և նրանց տարածքային ամբողջականությունը»:

Նույնը կարելի է ասել նաև անջատողական շարժումների դատապարտման այլ դեպքերի մասին՝ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության¹⁸⁶ (ստեղծվել է Թուրքիայի միջամտության շնորհիվ), Ռեպուբլիկա Սրպսկայի¹⁸⁷ (ստեղծվել էր Սերբիայի միջամտության շնորհիվ) և այլն: Դրանք քննադատվել են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կամ Գլխավոր ասամբլեայի կողմից, քանի որ բոլորը կայացել են օտարերկրյա ֆինանսական և ռազմական օժանդակության միջոցով՝ իրականում արտահայտելով ոչ թե տեղի բնակչության կամքը, այլ միջամտող օտարերկրյա պետության շահերը:

Այս առումով մարդկության պատմության ընթացքում ինքնորոշման իրավունքի առավել կոպիտ խախտումներից է Կիպրոսի Հանրապետության մասնատումը: Չնայած Կիպրոսը 19-րդ դարի վերջից սկսած ոչ ինքնակառավարվող տարածք էր, ու ենթակա էր Բրիտանական վերահսկողությանը, սակայն տեղի բնակչությանն այդպես էլ հնարավորություն չընձեռվեց ազատ հանրաքվեի միջոցով որոշելու սեփական ճակատագիրը, որի պարագայում, բնականաբար, մեծամասնություն կազմող հույն բնակչությունը կքվեարկեր իրենց անջատումը Հունաստանի հետ միավորման (1959 թ. եկեղեցու կազմակերպած հանրաքվեն չունեցավ իրավական հետևանքներ): Տվյալ հարցը Գլխավոր ասամբլեայի ամբիոն բարձրացնելու բոլոր փորձերը պսակվեցին անհաջողությամբ¹⁸⁸:

¹⁸⁶ SC resolution 541 (1983). UN Doc. S/RES/541, 18 November 1983. § 6:

¹⁸⁷ SC resolution 787 (1992). UN Doc. S/RES/787, 16 November 1961. § 3:

¹⁸⁸ Xydis S.G. The UN General Assembly as an Instrument of Greek Policy: Cyprus 1945-58 // Journal of Conflict Resolution, Vol. 12 (1968). P. 142:

Փոխարենը 1959 թ. կնքվեց Լոնդոնի երաշխավորության պայմանագիրը¹⁸⁹, և 1960 թ. օգոստոսի 16-ին ստեղծվեց անկախ Կիպրոսի Հանրապետությունը: Դա չէր արտահայտում Կիպրոսի բնակչության կամքը և փաստորեն խախտում էր Կիպրոսի բնակչության ինքնորոշման իրավունքը: Ավելին, Լոնդոնի պայմանագիրը Թուրքիայի կողմից զինված միջամտության հիմք հանդիսացավ, որն իբր ուղղված էր Կիպրոսի թուրք բնակչության իրավունքների պաշտպանությանը, սակայն ըստ էության ևս մեկ անգամ ոտնահարվեց Կիպրոսի ժողովրդի ինքնորոշման իրավունքը՝ տրոհելով սուբյեկտի տարածքային ամբողջականությունը:

Արդյունքում առկա է Կիպրոսի ժողովրդի ինքնորոշման իրավունքի երկու ոտնահարում, և պատահական չէ, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը կոչ է արել միջազգային հանրությանը չճանաչել Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը:¹⁹⁰ Հատկանշական է, որ նման դեպքերում ճանաչման ինստիտուտը կամ, ավելի ճիշտ, «ճանաչման կոլեկտիվ մերժումը» (“collective non-recognition”) ծառայում է որպես ինքնորոշման իրավունքի պաշտպանության ևս մեկ գործիք¹⁹¹ և, ինչպես արդեն նշվեց, հանդիսանում է ողջ միջազգային հանրության պարտավորությունը:

Սակայն այն դեպքերում, երբ առկա չէ օտարերկրյա միջամտություն, Անվտանգության խորհուրդը ռազմական օժանդակություն չի տրամադրում մայր պետությանը և կոչ չի անում միջազգային հանրությանը չհամագործակցել նորաստեղծ սուբյեկտի հետ: Դրա վառ օրինակ է արդեն հիշատակված բանաձև 713-ը, որը ընդունվեց Հարավսլավիայի տրոհման համատեքստում և չսատարեց վերջինիս տարածքային ամբողջականությունը, այլ միայն կոչ արեց ձեռնպահ մնալ ցանկացած գործողություններից, որոնք կարող էին բացասական հետևանքներ ունենալ տարածաշրջանում անվտանգության ու խաղաղության վրա, և սահմանեց Հարավսլավիայի ռազմական էմբարգո (շրջափակում)¹⁹²:

¹⁸⁹ Treaty of Guarantee between the Republic of Cyprus and Greece, the United Kingdom and Turkey, 2 February 1959, հասանելի է http://www.kypros.org/Cyprus_Problem/treaty.html#B կայքում:

¹⁹⁰ SC resolution 550. UN Doc. S/RES/550, 11 May 1984. § 2:

¹⁹¹ Dugard J. Recognition and the United Nations. Grotius Publications Limited, Cambridge, 1987. P. 108-111:

¹⁹² SC resolution 713 (1991). UN Doc. S/RES/713, 25 September 1991. §§ 6-7:

Այսպիսով, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն իրավասու է միջամտելու ինքնորոշման իրավունքի իրականացման դեպքերին: Ավելին, հաշվի առնելով ինքնորոշման իրավունքի *erga omnes* բնույթը, կարելի է ասել, որ Անվտանգության Խորհուրդը պարտավոր է միջամտել: Բնականաբար նման պայմաններում յուրաքանչյուր պետություն, որի տարածքային ինքնիշխանությունը կարող է սահմանափակվել ինքնորոշման իրավունքի իրացման հետևանքով, կանդի, որ կոնկրետ հիմնահարցը ենթակա է իր ներպետական իրավասությանը և իր ներքին գործն է (այդպես էր, օրինակ, պնդում Մեծ Բրիտանիան, երբ Կիպրոսի՝ Հունաստանին միանալու հիմնահարցը բարձրացվել էր ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ամբիոն¹⁹³): Սակայն «ներքին իրավասության» արդարացումը չի կարող ծառայել որպես պետության կողմից անօրինական գործողությունների իրավական հիմնավորում, քանի որ այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը չի կրում բացարձակ բնույթ¹⁹⁴:

Այստեղ անհրաժեշտ է պարզաբանել «ներքին իրավասության» հասկացությունը: Միջազգային արդարադատության մշտական պալատը «*Քաղաքացիության դեկրետները Թունիսում և Մարոկկոյում*» գործում նշել է, որ ներքին իրավասությանը ենթակա են այն իրավահարաբերությունները, «որոնք ըստ էության չեն կարգավորվում միջազգային իրավունքով ..., և որոնց նկատմամբ պետությունները հանդիսանում են միակ դատավորներ», ուստի այն հարցը, «թե արդյո՞ք որևէ իրավահարաբերություն բացարձակապես ենթակա է պետության ներքին իրավասությանը, հարաբերական է. դա կախված է միջազգային հարաբերությունների զարգացվածության աստիճանից»¹⁹⁵:

Սակայն ակնհայտ է, որ ինքնորոշումը և վերջինիս իրացման հետ կապված բոլորն հարցերը (մարդու իրավունքներ, տարածքային ամբողջականություն, խաղաղության և անվտանգության պահպանում) սերտորեն առնչվում են միջազգային իրավունքին և կարգավորվում են վերջինիս կողմից: Հետևաբար, «ներքին իրավասության» շղարշը իրականում չի կարող ծառայել որպես պատնեշ ինքնորոշման իրավունքին վերաբերող

¹⁹³ Musgrave T. D. *Self-Determination and National Minorities*. Clarendon Press, Oxford, 1997. P. 223:

¹⁹⁴ Ст' u Шуршалов В.М. *Международные правоотношения. Междунар. Отношения*, Москва, 1971. С. 134-135:

¹⁹⁵ *Nationality Decrees in Tunis and Morocco*, PCIJ Series B (1923), No. 4, P. 24:

հարցերը պետության ներքին գործ որակելու համար: Հետևաբար՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի միջամտության պարտավորությունն առավել քան ակնհայտ է:

Անվտանգության խորհրդի պրակտիկայի համատեքստում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ վերջինիս դերակատարությանը նաև ԼՂՀ հիմնահարցի կարգավորմանն ուղղված քայլերին: Չնայած ադրբեջանական կողմի պարբերական հայտարարություններին, թե Անվտանգության խորհուրդը Հայաստանի Հանրապետությանը ճանաչել է որպես օկուպացիոն ուժ՝ ԱԽ բանաձևեր 822, 853, 874, 884 բանաձևերն իրականում Հայաստանի և ԼՂՀ-ի համար բարենպաստ դիրքորոշում են պարունակում, քանի որ ԼՂՀ-ն չեն ճանաչում որպես Հայաստանի կամքով և միջոցներով գործող սուբյեկտ, որի գործողությունները վերագրելի են Հայաստանին, որի դեպքում, փաստորեն ipso facto անօրինական կդարձներ ԼՂՀ ստեղծումը:

Տվյալ բանաձևերն իհարկե վերաբերում են նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի տարածքից դուրս գտնվող շրջաններում ռազմական գործողությունների դատապարտմանը, սակայն փաստացի ճանաչում են ԼՂՀ ինքնուրույն իրավասուբյեկտությունը:

Այսպես, Անվտանգության խորհրդի բանաձևերից առաջինը՝ 822-ը, խոսում է **«տեղական հայկական ուժերի կողմից Քելբաջարի շրջանի նվաճման»** մասին¹⁹⁶: Հայաստանի Հանրապետության և տեղական հայկական ուժերի միջև տարբերությունն ընդգծված է նաև *Անվտանգության խորհրդի նախագահի հուշագրում*, որին վերոնշյալ բանաձևը հղում է անում իր պրեամբուլայում¹⁹⁷: Բանաձևի ընդունմանը հաջորդած ՄԱԿ-ում Ֆրանսիայի ներկայացուցչի եզրափակիչ ճառում նույնպես վերահաստատվում է այս տարբերակումը¹⁹⁸: Ֆրանսիայի ներկայացուցիչը, խոսելով ԱԽ բանաձևի հիմքում ընկած սկզբունքների մասին, նշեց, որ բանաձևի պրեամբուլան արտացոլում էր երկու կարևոր հանգամանք՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև առկա լարվածություն, և չնայած դրան, միևնույնն է, զինված ընդհարումը տեղայնացված բնույթ ունի: Ուստի, ըստ ֆրանսիական ներկայացուցչի խոսքերի, անհրաժեշտ էր ամեն ինչ

¹⁹⁶ SC resolution 822 (1993). UN Doc. S/RES/822, 30 April 1993, preamble:

¹⁹⁷ Note by the President of the Security Council, UN Doc. S/25539, 6 April 1993):

